



U. SUPH

1

1962

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԾՍԻ

ՎԱՌԶ ԽՄԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԱԳԻՐՆԵՐ
ԵՂ. ՊՅԵԱԶԵԱՆ, Պ. ԱՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ
Տ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Վ. ՕՇԱԿԱՆ

ԿՈՂԹԻ ՆԿԱՐ
ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- ՀԱՄԱՍՏԵՂ
- Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ
- Մ. ԻՇԽԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Լ. ԳԱՐՄԷՆ
- ԵԿ. ՊՅԱԶԵԱՆ
- ԱՐՄԷՆ ԵՐՊԱԹ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Պ. ԱՆԱՊԵԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Ա. ԳԱՌՕՆԷ
- Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
- Յ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
- Գ. ՄԻՆԹԱՐԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ա. ՅԱԿԻ, ԹԻՒ 1

ՅՈՒՆՈՒՍԻ 1962

ՊԷՏՐՈՒԹ

ԱԳԻՆԻՆ ԱՌՋԵՒ

Հայութեան արեւտեան հատուածը, որ պայմաններու րե-
րումով Սփիւռփի հայութիւն կը կոչուի այսօր, ժառանգորդն է
զանգուածեղ գրականութեան մը: Այդ ժառանգութեան ամենա-
պահը զատնալու եւ ամեր վրայ յանելում մը բերելու նուիրական
պարտականութիւնը առանկազոյն չափով մը կը պատկանի գրա-
կան կենսունակ ուժերուն:

Մեծ իրագործումներու հասած այդ զանգուածին ստեղծա-
գործ կարողութիւններուն հանդէպ մեր ունեցած հաւատքը կը մղէ
մեզ, որ եիմը զեննք այս նոր հանդէսին:

Առաջին մեծ պատերազմէն քիչ մը ետք եւ երկրորդ պատե-
րազմէն քիչ մը առաջ, Սփիւռփի մէջ գրական երկու փայլուն շրջան
ստեղծեց մեր ժողովուրդին այս թիւը՝ տալով մնայուն գործեր եւ
գրողներու կորովի փազանց մը:

Այսուհանդերձ վերջին տարիներուն ստեղծագործական դան-
դադութիւնը ակնհայտ է:

Բայց այդ դանդադութիւնը յոգնութեան արդիւնք չէ, գը-
րողներու ներքին կրակին պակասով կամ իմացական ծուլութեան
հետեւանմով չի բացատրուիր, այլ պատճառ ունի կեդրոնական ու

2273

կեդրոնածիզ բեմի մը բացակայութիւնը, այսինքն՝ գրողները քով քովի բերելու, աշխատանքի մղելու, աշխատութիւնները արծանաւորապէս ներկայացնելու խանդավառ միջոցը. որ վերջին տարիներուն միշտ պակսեցաւ մեզի: «Բագին» կոչուած է այդ կեդրոնական ու խանդավառ բեմը ըլլալու:

Երիտասարդ եւ լուրջ պատրաստութիւններու տէր սերունդ մը ունինք այսօր, որ իր խանդավառութիւնները պոռթկալու եւ հոգին պարպելու երամայականի մը առջեւ կը գտնուի: Նախորդ երկու սերունդներու ներկայացուցիչներուն կողքին, այս թերթին մէջ տեղ պիտի տրուի նաեւ այդ երիտասարդներուն: Նորերու յորդ ապրումներուն եւ հասուն մարդոց հասուն խօսքերուն բեմը պիտի ըլլայ «Բագին»ը:

Չենք ուզեր գրական այս կամ այն դպրոցի մասին մեր նախասիրութիւնները բանաձեւել եւ նախապաշարունակներ ստեղծել: Տարբեր մշակոյթներու եւ գրական շարժումներու ուղղակի հետեւած կամ անուղղակի ճամբաներով անոնց ազդեցութիւնը կրող զընդներ ունինք այսօր, որոնց գրութիւնները դուրս պիտի չմնան այս թերթին էջերէն: Կը բաւէ, որ գրութիւնը ներքին աշխարհ մը լուսաւորէ, մտածումով մը երաշխատուած ըլլայ, ներդաշնակութիւն մը պահէ հայ գրականութեան հետ, կամ բերէ արուեստի նոր նպաստ մը:

Կ'ընդունինք ազգերու կեանքին ու մշակոյթին շարունակականութեան նախապայմանը:

Կը մերժենք նիւթին գերակշռութիւնը ոգեկան արժէքներուն վրայ:


Կը հաւատանք իտալիան եւ ներքին ուժերու գորութեան:

Մենք կը ձգտինք նոր փորձառութիւններու կենսասխայտ սրբութեամբ եւ մշակութային նոր պատուաստներու կենդանարար աւելում՝ հայ գրականութեան անը բարձրացնելու նպատակի մը:

Հայ գրականութիւնը վերաստեութեան ենթարկելու եւ զըրական խախտած չափանիշները վերահաստատելու մեր առաջադրանքին մէջ հետեւողական պիտի ըլլանք եւ բնաւ պիտի չթերանանք մեր պարտականութեան ճամբուն վրայ:

Ամբողջական խանդավառութիւն պիտի ըլլանք, երբ տեսնենք գեղեցիկ գործ մը, ամբողջական գայլալոյսի պիտի վերածուինք, երբ համդիպինք երեսօթական հանգամանքներու եւ անուղղակի միջոցներու շահագործումով գրական հռչակ շինող ոսկեգօծ ոչնչութիւններու:

Անշահախնդիր իրագործումներով խանդավառուելու ընդունակ եւ արուեստի սէրը իրենց հոգիներուն մէջ անխտածագելի վաշիքի վերածած մարդոց համար բացուած բեմ մըն է «Բագին»ը:



ՀԱՄԱՍՏԵՂ



Հ Ա Յ Ո Ւ Ո Փ Ի Ն

Նուէր՝ Սրբուհի Համասեղիմ

Մի՛ հարցընէք, ի՞նչ է, ո՞ւր է,
Ռուկէ՞ կու գայ Հայու ոգին:
Ինչպէս աւեան է հուրհրան,
Ինչպէս կանանչն է դաւեսեուն,
Ա՛յ, նիւզ այդպէս, ամէն տեղ է
Հայու ոգին:

Մեր հովեուն, մեր լեռներուն
Մեր դաւեսեուն հասող առտւի
Կանչին հետն է

Հայու ոգին:

Մեր դաւեսեուն հովը որ կայ, մեղեդի՛ է.
Մեր ձայնաւոր աղբիւրները, ըսես՝ սաղմոս ու շարական:
Երգիքներէն, բուրվառ ու վառ թոնիրներէն
Ձերմ աղօթքի ու խունկի պէս դէպի երկինք՝
Կապոյտ ծուխն է

Հայու ոգին:

10280-117

Մի՛ հարցնէ՛ք, ուրկէ՞ կու գայ, կամ ո՞ր ճամբով:
Եկած է ան՝ Հայկէն կարենդ, կապարեն ուսին,
Գեղապասեան:

Եկած է ան՝ թլուր Դաւթի թուր կէծէկէն,
Մեր հեթանո՛ս նախնիներէն,
Բագիներու բոց կրակէն եկած է մեզ,
Հայու ոգին:

Ան եկած է կոռի նակաս մեր դաւերէն:
Բիւր նիզակներ, նես ու վահան երկաթակուռ —
Սաղաւարեայ այր ու ձիեր, գրոն, արի՛ւն:
Էդ արիւնքի, ու արցունքի ճամբաներէն եկած է մեզ
Հայու ոգին:

Ան եկած է Աւարայրի մեր յաղթական պարտութենէն,
Շէն Անիի հազար ու մի գմբէթներէն,
Ու հազար մի զանգակներու դողանջներէն:
Մեր հողերուն նեսուած բեղուն
Սերմերուն պէս սայրոյ սիրն է
Հայու ոգին:

Ան մեզ կու գայ մեր վաններու փարո՛ւս ճամբով.
Ժամ-վարժարան բանուկ ճամբով:
Մեր պապերու ոսկունքներէն, գերեզմանի տխուր ճամբով:
Արեւին հես ան վար կ'իջնէ, մեր արտերուն, մեր արտերուն,
Ու վեճափառ Արարատի անե՛լ, անյայտ ճամբով կու գայ
Հայու ոգին:

Հայու ոգին կա՛նչն է սիրոյ ողջիկներուն եւ թէ տոգ.
Պապկէ՛ պսակ, պապկէ՛ նարոտ հարսնիներուն:
Ե՛րգն է ուրախ, տախ ու ծնծղայ, արժա՛ք ծիծաղ,
Ողջիկներու պա՛ր հեզանագ:
Հայ մայրերու գուք ու բարի, ու միւռոնով լեցուն սրուակ
Աչքերէ՛ն է որ կը կաթի
Հայու ոգին:

Մեր պապերու հնադարեան դպրութիւնն է ու հին լեզուն:
Զմեռ բուփն, Նարեկացու վանքի խուցի նրա՛ցն է ան:
Մազաղաթէ հին, հին մասեան տաղարանի
Ու Մեսրոպի գերեզմանին ու երազին
Այբե՛նդիմն է

Հայու ոգին:

Մեր լեզու՛ն է արեւաբոյր որ թէ՛ մարմին, թէ՛ հոգի է.
 Կը բաշխուի որպէս ճշխարհ, որպէս հաղորդ ու նկանակ:
 Կը բաշխուի որպէս մարմին, որպէս գիւնի,
 Գիւնի ու մաս՝

Հայու ոգին:

Այդ ոգին է որ կը գաղթէ, կ'ելլէ համբայ
 Մեր երկնքէն ու մեր հողէն, ու կը գտնէ
 Ուր Հա՛յ մը կայ ու անոր հետ գրոյց կ'ընէ:
 Ան կը ժպտի, ան կը թխրի, ու անոր հետ արցո՛ւնք կուլայ:
 Ու կը հսկէ որ ոչ մէկ Հայ չըլլա՛յ շեղի էն լո՛յս համբէն:
 Մեր հոգիի էն լո՛յս համբէն, որ մեր հողին
 Ու երկնքին մեզ կը սանի

Հայու ոգին:

Ինչ ալ ըսենք, բայց դեռ քիչ է.
 Ի՞նչն է իրաւ հայու ոգին:
 Եթէ նայի՛ք ձեր հոգւոյն մէջ,
 Պիտի գտնէ՛ք մեր պապեւէն բազմութիւն մը.
 Պիտի գտնէ՛ք սաղաւարտայ բանակ մը հին.
 Պիտի գտնէ՛ք իմաստութիւնն ու ճրագը մեր վանքերուն:

Ձեր հոգւոյն մէջ պիտի գտնէ՛ք
 Ձեր լեռներուն ու ժայռերուն մէջ քաֆնուած,
 Արձագանգի պէս քաֆնուած,

Հայու ոգին:

ՀԱՄԱՍՏԵՂ



ԼԻԲԱՆԱՆ

Յարի մը առաջ, Նաան Պէօհիբաօլեան յաջողեցաւ վերջապէս դուրս գալ Փարիզի իր բառասնամեայ բաւարանէն, յազգեցնելու համար հայութեան, հորիզոնի ու հանգիստի ծարու ունեցող գրառագէտի իր հոգին: Նաւը բերու գինք Արեւելի սախ ու պայծառ գրկին մէջ:

Հագիւ ոտքը դրած այս երկրի հողին, սիրային **coup de foudre** մը ունեցաւ անոր հանդէպ: Պատահեց Լիբանանը, անոր երկինքը, ծովը, լեռները, վանքերն ու վիլլաները: Ելացաւ, օտեցաւ յանկարծ, ինչպէս պատանի մը պիտի օլանար ու օտէր, չափէն աւելի գեղեցիկ աղջկայ մը կամ կնոջ մը առջեւ:

Կը կարծուէր թէ՛ Լիբանան իր արծաթամուրաբեամբ եւ այլ կարգի փրկեցիկներէն հեռու, երգիծազիրը պիտի գորսցնէ Պէօհիբաօլեանին մէջ. իր սեռաբաններու շեղուրտեամբ՝ աշխարհացոյց անոր մէջ տանէ մը ի վեր ննջած բնաբերակը: Մէկ օտջիւղ երգիծանք չկրցաւ օտարդիւ ծոս, այլ բառերը ինչ եկան կարծես բառերու այս օտայլ մեծատունին՝ Լիբանանը գովեցելու: Կիչ եկան նաեւ էջերը: Կրկէ վերջ, նարէն գրեց: Եւ ինչ որ պիտի կարգաւ, վերջինը չէ, վերջընթերն է, կը յաւատնէ:

Մտանկի՝ Լիբանան:

ԽՐԱԿՆՐՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆ ՊԵՇԿԻՍ-ՍՇԼԵՍՆ

Լեռներուն մէջ...

Աւտոսաց երկրի ծառեր, որոնք ունին օրհնութեան ձեւեր ու ձեռներ:

Մեծատուններ, տաճարներ, ընծայարաններ ու մայրապետանոցներ, որոնք իջած են երկինքէն, կախեալ՝ կամարէն:

Բոյներ ու բնակարաններ, որոնք կառուցուած են պարիկներու կողմէ:

Աւաններ ու գեղջեր, որոնց մթնոլորտին մէջ կը թրթռայ շունչն Աստուծոյ:

Օթեաններ, որոնք ֆազաէն վերելակած են, արդիական հեթանոսութեամբ:

Եւ վերջապէս, անապարհներ դարձողարձիկ, որոնք կը վազեն վիհերու վերելէն, մինչեւ բարձունքներ, միանալով երկնային ուղիներուն:

Այս լեռաշխարհը է անհուն ուլասիս, որ ունի իր գոգերուն մէջ ուլասիսներ, դրուագեալ թրթռուն սկերով ու աղբիւրներով եւ ծառանոյս պուրակներով: Դրախտներ՝ դրախտի մը ծոցերը. դրախտ մըն ալ կը բացուի իր մէջ:

Մեր հոգին կը բարձրանայ լուսաշէն ու հառազայթալար կախօրանի մը մէջ, եւ կը տարտերբի արտմութեան խնդրութիւն... Մեր հոգին կ'երիտասարդանայ աւելի, ընդունելով երազական վարդեր ու իրական վերքեր... Կախօրանը կը սպառնայ նետով մեզ անդունդ, մերթ ալ կը խոստանայ արձակել մեզ արքայութիւն... Մեր հոգին կը ճչայ յեղազարած... Լեռնաշխարհի լուսեան մէջ, իրարու կը յաջորդեն մեր ազգակները ցաւի ու ցնձութեան, ցնձութեան ու ցաւի...

Կանգնած են լեռները՝ բարձրադիր ամփիթատրոնին լայնարձակ աստիճաններում վրայ, մեամ ուզտերու կարաւաններու, եւ ծանրարեւունըւած են քէ՛ գոհունակութեան, քէ՛ տիեզերական վիշտերու բռններով, որոնցով կը լեցուինք մահու մեծ: Լեռներ կան, որոնք կարծէ՛ կ'որոճան, կամ կը յօրանցին, եւ կամ համրիչ կը քաշեն ու կ'ազօթեն: Լեռներ կան գգացման, ու լեռներ՝ մտածման, իսկ հեռաւոր հորիզոնին կոթնածները լեռներ են խոկումի եւ առեղծուածի:

Լեռնաշարքերը կը գունափոխուին, անցնելով կանանչին երանգներէն մինչեւ կապտորակ մոխրագոյն: Անոնցմէ շուրջ շալկած են ամպակոյտներ, որոնք կը բուին ըլլալ սպիտակ ստուերները խոկումներու:

Բնութեան Աւետարանն է այս լեռնաշխարհը: Աւետարան՝ ըստ Յիսուսի Քրիստոսի, որ իր աշակերտներով կը մեծէ ամենուրեք ու կը սերմանէ օրհնութիւններ:

Եւ երեւոյթ գարմանաբաշ, հսկայական ամպ մը աստուածակերպ ամպ մը, իր գլուխը վար է հակած ու կը հայի եւ կը հիանայ... .

Լեռներում վրայ ձիւնի գարդանկարչութիւնը մերմակ ճանաչնելով պնճած է կողերը: Ձիւնները ջնարակուած են լիառատ լըխով:

Արեւադարձային ծառերը ծածկուած են ձիւներով: Լարոնիան հիւրն է Լիբանանի: Ի՛նչ երաշալի հակադրութիւն: Այրեցեալ գօտին ու Հիւսիսային բուռը միացեալ: Կազանդի կենդանի պատկեր մեծատարած մոզութեամբ: Ձմեռը՝ ամրան դրացի:

Բարձունքներում ձիւնանիտ ձմեռուան վրայ արեւ կայ, ի պատիւ մեզի:

Տեղ տեղ լեռնագիծերը խառնուած են ամպագիծերուն: Այս խառնուորդին մէջ կը կորսուի մեր հոգեկան իտալական հասարակչութիւնը:

Հնուգիտէ կը հեռանայ Սատանան ու կը յայտնուի Հրեշտակը, ու կը փոխուի մարդ՝ մանուկի: Կ'ըլլանք տխուր գուարթան: Պանը կ'անցնի... . Եւ ափսոսանքով կ'որոճենք մեր վաղամտիկ երիտասարդութիւնը... . Ո՛րքան կը կարօտինք երիտասարդութեան, պատարագելու համար ընտրեան այս խորաններուն, այս խուցերուն, այս խորութիւններուն մէջ բարձրադիր:

Եղբիւն Եմիլիէն, հակառակ մեռած ըլլալուն, հոգեով կը շնչէ ու կը շնչէ մեղեդիներ յիշատակի ու սիրոյ:



Վերջապա եռագոյն ու երեզնէ դրօշ մըն է, ընդմէջ ամպերու... . Վերջապա ու վերադարձ... .

Կը մտադի յամրաբար կապտորակ մոխիրը մութին... . Վերջապա ու վայրէջք... .

Մեր հոգիէն կը հոսին երգերը՝ մեամ ջրվէժներու... . Խաւարը կը խտանայ ու խորխորատները կը պնճուին բիրաւոր աստղերով... .

Հավիտին մէջ, համաստեղութիւններ են գիւղերը, իրենց լոյսերու բոյլերով... .

Աստեղագարդ երկինք մը առկայուած է հովիտին մէջ. իսկ մեծ կարծէ՛ կը բուսնէ վերին կամարէն... .



Կիչննեք բուսածուս, ընդմէջ երկու երկինքի... .

Կ'երեւի Պէշուրքը լուսավառեալ... . կ'երեւի իբրև շողշողեմի բե-
րակզի: Նման է լուսավառ պերճանաւու, որ ծովահանդէտի մը մէջ է, ու
խարսխած՝ եզրը փիւնիկեան այս հին հայրեմիքին: Նաը բեռնաւորուած է
կոյսերով աղամանդի:

Գիշերին մէջ Ոստանը ոսկի երգ-երգոցն է... .



Ու կը խոկամ եւ կը մտածեմ.

— Ո՛վ Աստուած իմ, ըմբռնած եմ ունայնութիւնը աշխարհի, որ
տիեզերքէն եկած ու ողորած է մեր գունդն ու գամկը: «Ունայնութիւն ու-
նայնութեանց» ըլլալը աստիճաններէն վերելակած եմ մեկուսի ու գաղ-
տագողի: Վաղուց ռուսած եմ այդ անհուն համալսարանին մէջ եւ վկայուած:
Բայց ի՞նչպէս կարելի է գմայլիլ այս անսկիզբ ու անվախճան Ունայնու-
թեան մէջ գտնուող Գեղեցկութեամբ: Ի՞նչպէս չյափշտակուիմ քու ստեղ-
ծած Գեղարուեստներու այս համադրութեամբ, որուն խորքին մէջ ծաւ-
լած է Ունայնութիւնը: Լիբանանը իր գեղեցկութիւններով յսեայս կը յաջո-
ղի մտցնել տալ Ունայնութիւնը: Արդեօք ստեղծեցիր Ունայնութիւնը՝ ար-
ժեգրկելու համար Գեղեցկութիւնը, թէ ստեղծեցիր Գեղեցկութիւնը՝ մեղ-
մելու համար Ունայնութեան սյառնաւած վիստութիւնը... . Առաջինին հա-
մար եթէ երախտապարտ եղողներ կան, ես շնորհապարտ եմ երկորդին
համար:

Բայց այլ բան. Փիւնիկեցիները ի՞նչպէս կրցան հեռանալ այս

աստուածաշնորհ աշխարհէն... Եւ ինչո՞ւ Փիւնիկեցիները, իրենց նաարկուտքեան, վաճառականութեան ու կարգ մը գիւտարարութիւններու ճարտարութեանց առնչքեր, չունեցան գեղարուեստ ու գրականութիւն... Արդեօք աստուածաշնորհ իրենց հայրենիքը մատնեց զիրենք յուսահատութեան, իր անսովոր գեղեցկութիւններով՝ վերարտադրելու համար որեւէ գեղօր ու գիրք: Եւ արդեօք հեռացան, հարուստ վերադառնալու եւ սաստկօրէն վայելելու համար իրենց հայրենիքը... Թէեւ Փիւնիկեցիներէն միշտ մնացողներ եղան այս գեղեցիկ երկրին մէջ, ու տակաւին կ'ապրին տարբեր անուններով... Իսկ հեռացողները կամ տոհմ ինչ մտացան, կամ մայրեցան մամոնային տուած անյագութեան մէջ: Լիրամանը մարդկը քէ՛ իրեն կը քաշէ, քէ՛ կը հեռացնէ, յանուն հարստութեան որոնումի: Հարստութիւնն ալ իր կարգին իրեն կը կապէ մարդիկը. ու զրախօր կը կորսուի...

Սատանան կը լռայ Միջերկրականի մէջ. կը լռայ սարճելով հազարամեկ դիւքախաղեր, ու կը հրաւիրէ մարդիկը որ գաղթեն, գանձի մը տիրացման համար: Աւէնէն ու ժեղիներն ու ամէնէն տկարներն են որոնք կը պատասխանեն Սատանայի կանչին:

Լեռներուն կողերուն վրայ ու հովիտներուն օթեակներուն մէջ Հրեշտակը կը թրթռացնէ իր ծղիները, ու կը պատուիրէ մնալ ու գոհանալ եղածով: Իսկ հեռացածներուն մէջ կը պահէ պաշտամունքը, ու վնիւր վերադարձի:

Հինէն ի վեր, նաւերը կ'երթան ու կուգան, տանելով եւ բերելով Լիրամանցիները, հայրենաբազուութեան ու հարստութեան տենդերով...





Լիբանան... .

Բազմիցս ներտեսարուած է հոգիս՝ սլաքներով սիրոյ . . .

Սրբահարուած եմ քեզի ու վիրաւոր՝ ինկած եմ ծունկի:

Կը սիրեմ քեզ, ինչպէս ազատիկ երիտասարդ մը, որ գգլլած է իշխանուհիի մը կախարդական գեղեցկութենէն . . .

Սէր անյոյս, սէր անշէջ, սէր անկարելի . . .

Քեզ սիրելով կը տառապիմ ու կը տապալիմ . . .

Ունիմ լոկ ազատութիւնը քեզ դիտելու, շնորհը՝ շնչելու քեզ, եւ արտօնութիւնը՝ զովերգելու . . .

Ժամը ուշ է, յուսալու համար կենակցութիւն մը:

Ո՛չ երիտասարդ եմ, ո՛չ հարուստ, ոչ ալ ազատ, ո՛վ Նամիլէ Լիբանան . . .

Արդ, բան մը միայն կը մնայ կարելի .

Մերթ մնալ մէջդ, ու այրիլ եւ այեկոծուիլ, ըմպելով հեշտամբը տառապանքին . . .

Իսկ յանուն վերջնական միացումի, մեռնի՛լ, մեռնի՛լ ծոցիդ մէջ, ո՛վ լուսեղէն Լիբանան, ծով սիրոյ, լեռնապար յոյսի և երկինք հաւատքի . . .

Լիբանան, կը սիրեմ քեզ սրարբելով, կը յուսամ քեզ ռգեցիմուելով եւ կը հաւատամ հիանալով . . .

Կը սիրե՛մ, կը յուսա՛մ, կը հաւատամ՝ մէջդ մեռնելու մոլեռանդութեամբ . . .

Լիբանան, կեանքի ու Մահուան Սիրուհի, գրախտ վերագտնուած եւ նախատոնակ Արքայութեան, Լիբանան, Լիբանան, ծառն եւ մտքիս մէջ, ծովը՝ հագւոյս մէջ, լեռը՝ մարմնիս մէջ ու լոյսը՝ էութեանս . . .

ՆՇԱՆ ԳԵՇԻԿՔԱՇԼԵԱՆ



Մ. ԻՇԽԱՆ

ԿԸ ՍՊԵՍՆԵ ՍԱՀՈՒՄՆ... ~~~~~

Շուրջըս ամեն մարդ եւ ամեն վայրկեան,
Փակ գրան ետին կամ ճամբուն վրան
Կը սպասէ մահուան...

Գիւզակէն յետին մինչեւ լոյս քաղաք՝
Որքա՛ն պերն կիներ, այրեր ու տղաք
Կը սպասեն մահուան:

Խանութպանն արքուն՝ իր կրպակին մէջ,
Մովափէն անցնող գոյգը սիրատենչ
Կը սպասեն մահուան:

Ումանք երջանիկ՝ երգը շրթունքին,
Ումանք սրտաքեկ, խոնք ու լաւացին
Կը սպասեն մահուան:

Նախ յուզարկաւոր, ապա ուզելոր՝
Մարդիկ փոխն ի փոխ, մարդիկ գլխիկոր
Կը փայնեն մահուան:

Ցամաքէն երկինք եւ երկինքէն ծով
Թռչող ամեն նաւ խելագար քափով
Կը վազէ մահուան...

Այս աշխարհին մէջ, սպասման կայան,
Ո՞վ չունի պահած իր կուրծքին վրան
Տումսակը մահուան...

Բայց ֆանի՞ հագի, ֆանի՞ իմաստուն
Գիտէ թէ այսօր, հիմա, ա՛յն պահուն
Կը սպասէ մահուան:

Ու կեանքը երբեք չ'ըներ յուսախոր
Ան որ յարաշարժ կամ կ'իսամբրափ
Կը սպասէ մահուան...

ԱՌԻԻԾԻՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

— Մեզապարտ Սերո՛ր, դուրս եւ կո՛ւր:

Շղթաներու խուլ շունչին մը կը լսուի մութ զնտանի խորերէն. վտանգաւոր ու մեղապարտ Սերոբն է որ կը մօտենայ ծանրանիստ դրան երկաթեայ ձողերուն: Մեծղի կոճղ մը՝ առիւծի գլուխով, Հանդարտ մարդ մըն է երկաթեայ ձողերուն առջեւ: Լուռ է եւ անշարժ, արձանի մը նման:

— Կեա՛վո՛ւր, քեզի ըսինք որ Հարիւր Հնչուն ոսկին բերիլ տաս, այլապէս գլուխդ կ'երթայ. փաշան Հրամայեց որ քեզի ազդարարեմ, վերջին անգամն ըլլա՛ով: Դուն այս ճանապարհին վրայ շա՛տ ոսկիներ տուած, ու քու վտանգաւոր խաղերը խաղցած ես: Զարը գտի՛ր, ես ալ կը միջնորդեմ: Փաշան թերեւս քեզ շղթաներէն ազատէ եւ դուն տունդ դառնաս: Ես գացի. չքնանա՛ս:

Սերոբի փոխարէն շղթաները մռնջիւն Հանեցին ու ան ծանրաքայլ վերադարձաւ զնտանին անկիւնը:

Սերոբ պատանեկան օրերէն մատաղցու արձանագրուած էր Ընկերութեան, ու տասը տարիներէ ի վեր կը ծառայէր սուրբ գործին: Մեծատան դաւակ, բոլորանուէր առատութեամբ կ'օգնէր ազատագրական շարժումին, անձամբ դեկավարը Հանդիսանալով իր ջրլանի գիւղերուն: Շէն ու փարթամ տուն, դուռը բաց անցնող ու դարձողին, սեղանը պատրաստ՝ ծանօթ, անծանօթին առջեւ: Արիւթեան ու մեծ արժանապատուութեան տիպարն էր Սերոբը, սիրուած բոլորէն, ապաւէնը բոլորին, երբ յուսահա-

տական պարագայի մը դէմ յանդիման գային:

Եւ սակայն, ան մեղապարտ եւ վրտանդաւոր տիտղոսը կը կրէր իր ուսերուն վրայ՝ թրքական դատարաններէն եւ կառավարիչներէն նուէր ստացած, փոխարէն Հազարաւոր ոսկիներուն, որոնք միջոց կը ծառայէին իր ժամանակաւոր ազատութեան: Փաշաները, դատաւորներն ու ոստիկանապետները ոսկի կարասը գտած էին, ու պարբերաբար Հունձք կը Հնձէին շղթայի զարնելով Սերոբը, անոր վտանգաւոր շարժումները խափանելու կրկնակի դիտումով:

Քանի՛ երորդ անգամն էր որ Սերոբ Մուշի կամ Պիթլիսի բանտերը կը մտնէր ու կ'ելլէր: Քանի՛ անգամ լծկան գոմէշներն ու եզները ծախուեցան, ցորենի շեղջերը շուկայ հանուեցան տարիներու կամ ամիսներու առտապանքէն ազատելու այս անձուէրը: Հաշիւ չկար:

Երբ Սերոբը ազատ էր եւ գործի վորայ՝ շատերը խորհրդաւոր լռութեամբ օրերը կը հաշուէին թէ ե՞րբ պիտի կանչեն դէնք քաղաք, ինչ որ կը նշանակէր թէ շղթաները պիտի զնգային:

Ու երբ ան բանտն էր, ամէնքը լարուած՝ կ'աշխատէին դուրս բերելու զայն դէպի լոյս աշխարհ, ազատութեան ճանապարհը շարունակելու Համար:

Հակառակ այս դաժան պայմաններուն, աստուածային օրհնութիւն մը կար այս մեծատան վրայ: Հայած Հարստութեան տեղ նորը կուգար, եզներն ու գոմէշները շարան շարան կը լեցնէին ախոռները, ցորենի շեղջերը կը բրգա-

նային կաշերուն մէջ, շէն տունը անցնող ու դարձող հիւրերը կը կշտացնէր, ու անձնուէքներուն պաշար կը հասցնէր:

Թուրք կառավարութեան աչքին վրտանդաւոր դէմք մըն էր Սերոր, մեղապարտ, անոր համար որ մեղապարտ գործին կը միանար անոր հարստութիւնը:

Ազատագրական փոթորիկը կը սաւառնէր Մովսաարի եւ Նեմրութի գաղթիներուն վրայ, ու արիւնարբուներու զունը փախած էր այդ սարին: Եթէ ոճրագործ իշխանութիւնը ազնուական Ալրիւրի գլուխը արնաթաթախ, յաղթական կանչերով Պիթիւս կը տանէր, անդին ազատութեան զրօշակիւնները Խալիլ Պաշարի ոճրածին գլուխը Մովսաարի մաքաղեատիներուն վրայ կը նետէին՝ արծիւներու վրէժխնդրութեան յանձնելով զայն:

Գունը փախած էր բռնակաշերուն: Բանտերն ու շղթաները կը գործէին ժողովուրդի մը ազատութեան ոգին զրտաններուն մէջ խեղդելու համար:

Մեղապարտ ու վտանգաւոր Սերորը միշտ ցանկին գլուխն էր: Սերորը կըրկին բանտ կ'առաջնորդուէր եւ անմիջապէս ճամբայ կը հանուէր դէպի Պիթիւս, իր միջավայրէն հեռու, իրտո հակողութեամբ եւ զաղտնի հրահանգներով:

Մուշի գայիերը իրենց բաժին կաշառքը առած էին, բայց չէին կրցած ազատ թողուլ վտանգաւոր մարդը: Պիթիւսի փաշան կեդրոնական բանտ փոխադրել կուտար Սերորը՝ առիծի իր բաժինը ստանալու համար եւ ժամանակ մը շղթայի տակ պահելու այս հարուստ գիւղացին, որ կառավարութեան աչքի փուշը դարձած էր, առանց որեւէ մեղաւոր ապացոյցի:

Ու ահա, Սերորը տանութեանը անգամն էր որ բանտին ծանր շղթաները կը կրէր:

Մտածումներով ծանրաբեռն առիւծի գլուխը խոնարհած էր կուրծքին եւ անընդհատ կը ծխէր:

Բանտակից քանի մը շղթայակիրներ ալ կային, բոլորն ալ քելուտ աւազակներ

եւ մարդասպաններ:

Աւազակապետ Իբոն, որ տասնեակ մը ոճիրներ գործած էր եւ տասն անգամ բանտերէն ազատած, խօսքը ուղղելով Սերորին.

— Հայ՛, բանտին մէջ շատ չնն մտածեր, բանտը այսպէս է, երբ դուրս ելլես՝ այն ատեն մտածէ որ կրկին շղթայի շղարհեն քեզ: Ըսէ տեսնենք, մենք մարդասպանութիւններ ըրինք, կողոպուտներ ըրինք, մեզ բռնեցին եւ շղթայեցին, դուն ի՞նչ ըրիր որ մեր վիճակին հասար:

— Ես աւազակութիւն չըրի, ստոր համար զիս հոռ բերին:

Իբոն դարձաւ իր ընկերներուն.

— Աշխարհի բանը այսպէս անբարոսնել է. լաւ է որ մենք աւազակութիւն եւ մարդասպանութիւններ ըրած ենք եւ պատուաւոր կերպով այս շղթաները կը կրենք, այսպէս անմեղ տեղը մեզ կըրկին շղթայի տակ պիտի առնէին:

— Մօ, Հայ՛, շիտակն ըսէ, չըլլայ թէ դուն Ֆիտայի ես:

Սերոր հառաչանք մը ձգեց.

— Է՛յ, եթէ Ֆիտայի ըլլայի, լեռներուն վրայ կը մեռնէի, բայց այս նկուղը չէի մտներ:

Աւազակները հայուն մէջ Ֆիտային նշմարեցին եւ լռեցին:



Տունէն հասցուցած էին փրկագիրը:

Տերոր բանտապահին հասկցուցած էր թէ տեղի մեծ վաճառականէ մէ պարտք պիտի ընէր եւ ղոհացնէր փաշան: Փորձառու բանտապահը գործը վերջացած հաշուեց, վտահ թէ արդէն հարիւր հնչուն ոսկին հասած էր Պիթիւս: Յաջորդ օրն իսկ բաւիթեց իր սենեակը, շղթաները հանել տուաւ եւ միասին քաղաք իջան: Բանտապահը թուրք վաճառատան մը առջեւ նստեցաւ սուրճնատան մը ուր պահ գրուած էր ոսկիներու քաակը: Գործին եղելութիւնը գիտէին: Հաջիւ բարեւաստութեան ըրին

մը փոխանակեցին: Սերոր քսակն առաւ եւ վերադարձաւ բանտապետին մօտ: Անոնց նախաձեռնեցը իրար բռնեցին: Բանտապետը ոտքի ելաւ եւ անոնք անխօս ուղղուեցան փաշայի բնակարանը:

Երբ սպաման սրահը մտան, բանտապետը սպասուէր պաշտօնեային մօտեցաւ.

— Փաշան Սերոր աղան ուզած էր, յայտնեցէք որ ծառաները իր Հրամանին կը սպասեն:

Պաշտօնեան ներս մտաւ եւ քանի մը վայրկեանէն դուրս եկաւ.

— Ներս Հրամեցէք:

Բանտապետը կոճկուեցաւ, առաջ անցաւ խոնարհութիւններ կատարելով, Սերորն ալ կոճկի պէս անտաշ, բայց հանդարտ քայլերով անոր հետեւեցաւ:

Փաշան ժպտերեւ ընդունեց զանոնք: Քիչ մը քարոզ, քիչ մըն ալ սպասալիք կարգաւ փոսնալուր մարդոց հասցէին ու յոյս յայտնեց որ Սերորի պէս մեծատուն մարդ մը խոտվութիւններէն հեռու կը մնայ:

Բանտապետը փաշայի աչքի մէկ ահանարկէն, ներողութիւն խնդրեց եւ դուրս ելաւ սպաման սրահը:

Սերոր ժամանակ չկորսնցուց. արդէն շատ վարժ էր այդ դործողութեանց: Մօտեցաւ փաշայի գրասեղանին եւ քսակը դրաւ մէկ անկիւնը.

— Փաշա, տէր իմ, այս նուէրը ոչինչ բան մըն է, բայց կը խնդրեմ շատի տեղ ընդունէք, մենք ձեր նշորհիւ կ'ապրինք, թոյլ տուէք որ տուն դառնամ եւ իմ ընտանիքի, արտ ու ափի դործերուն նայեմ:

Փաշան ըսաւ թէ այդ նեղութիւններուն կարիք չկայ. արդէն ինքը համոզուած է որ Սերորի պէս մարդիկ հաւատարիմ հպատակներ են եւ զինքը ազատ թողելու համար կանչած էր իր քովը: Չայն մը տուաւ եւ բանտապետը ներս հրաւրեց.

— Ահմէտ էֆէնտի, Սերոր աղան ազատ կ'արձակեմ. անոր կ'ընկերանաս եւ

կը յանձնես Հայոց Առաջնորդին, ինձմէ բարեւ կը խօսիս եւ կ'ըսես թէ մեր ձեռքէն եկած բարեքը կ'ընենք իր ժողովուրդին:

Գետնամած խոնարհութեամբ Ահմէտ էֆէնտին եւ Սերոր դուրս ելան եւ ուղղուեցան Հայոց Առաջնորդարանը:

Սերոր այս անգամն ալ զլուխը ազատած էր:

✽

Առաջնորդ Սրբազանի մխիթարանքի խօսքերը Սերորի ազնու շմտան: Անհուն խոտվէք բռնուած էր:

— Այս աւերակ երկրին մէջ ապրիլն անկարելի է, Սրբազան, սորկուժիւնը ոսկորէն անցաւ ծոծին, լեռը պիտի բարձրանամ, կամ հեռանամ հայրենի աշխարհէն:

Առաջնորդ Հայոց ջանաց ողոքել բանտէ բանտ շղթայակիր Սերորը: Աղբիւր Սերորի արիւնտ պատուութիւնը յիշեցուց եւ խորհուրդ տուաւ համբուրութեամբ տոկալ աղէտին:

Ու պատահեցաւ որ Սրբազանն ու Սերորը միասին ճամբորդեն Պիթլիսէն Մուշ, զարտուղի ճանապարհ մը ընտրելով: Ճանապարհին Առաջնորդը խոստովանեցաւ թէ փաշան զինքը ճամբու կը դնէր այդ կեղբոնէն անվերադարձ, որպէսզի արիւնտ արարքներուն վկայ եւ միջամտող մը չգտնուի Պիթլիսի մէջ: Աղէտին ծանրութեան առջև երկու ճամբորդները, ծանր մասհողութեամբ զըլխահակ եւ լուռ՝ կը կտրէին ճանապարհը, վաղուան անորոշութիւններու եւ նոր ողբերգութիւններու մասին մտածաւորով:

Յաջորդ առաւօտեան երբ Սերոր պիտի մեկնէր Մուշուի գիւղ, խնդրեց Սրբազանէն որ իր անցքի ժամանակ մէկ օր հիւր ըլլայ իր տունը եւ իր աղն ու հացը օրհնէ:

Համաձայնեցան:

Սերորի տուն վերադարձէն քանի մը օր անցած էր, երբ Յակոբն ու Աւետիսը, Սերորի երկու կորելները, Մշոյ

շուկան երեւցան եւ փափուքով իմացուցին իրենց մէկ զանի երիտասարդ ընկերներնց, թէ այդ երեկոյեան իրենց պըսակադուրութիւնը պիտի կատարուէր Սուլտիի մէջ եւ զանոնք հրաւիրեցին Հարսանիքի: Անոնք միասին ճամբայ ինկան դէպի դիւղը ու երբ Հոն Հասան՝ Առաջնորդ Սրբազանը գտան բազմած Սերոբի օժանխին վերի անկիւնը:

Գիւղին մէջ իրարանցումը շատ էր: Սերոբի երկու զաւակները պիտի պսակուէին: Սրբազանին ներկայութիւնը վաւերական հաւաստիք մըն էր խորհրդատուր եւ հապկեպ այս Հարսանիքին:

Երեկոյեան մութը իլաւ Մշոյ դաշտին վրայ. լեռները մշուշներու մէջէն հսկայական ձեւեր առին, իսկ Սուլուխ գիւղը մեղուի փեթակի պէս իր համերգը կը թափէր Արածանիէ արծաթ ջուրերուն վրայ:

Գիւղն ամբողջ Հրաւիրուած էր Հարսանիքի:

Թմբուկն ու զուռնան լուսթեան կողմը պատռեցին: Ամբողջ փողովուրդը հրապարակ նետուեցան: Պար բռնող երիտասարդներն ու աղջիկները թմբուկի զարկերու առաջնորդութեամբ դէպի եկեղեցին կը ծաւալէին: Տղամարդիկ եւ կանայք, մոմերը վառած, մեծով ու պղտիկով՝ զանազան փողոցներէ կ'առաջանային դէպի եկեղեցի:

Սրբազանի մօտ փութացած էր դիւղի քահանան. Հոն Հիւրասենեակին մէջ կը մնային Մոււշէն եկած երիտասարդները: Բոլորն ալ կը սպասէին Սերոբի ազդանշանին՝ եկեղեցի մեկնելու:

Սերոբ թոնրատան կողմը անցած էր Յակոբի եւ Աւետիսի Հետ, Հարսանեկան զգեստաւորան համար: Անոնք չուշացան: Ու երբ Սերոբ իր երկու կորիւններուն հետ մտաւ Հիւրասենեակը, մարտական զգեստներով եւ ճամբորդական չարուխներով, Սրբազանը շուարուածի մասնուեցաւ:

— Այս ի՞նչ է, Սերոբ, ճամբորդ էք թէ պսակադուրութեան կ'երթաք:

— Սրբազան, այս է խորհուրդ խորին.

երթանք եկեղեցի, մեզ այսպէս օրհնէ. Աստուծոյ ընդունելի է:

Ու տարօրինակ Հարսանեկան թափօրը Սրբազանին առաջնորդութեամբ ուղղւեցաւ դէպի եկեղեցի, որ արդէն բերան բերան լեցուած էր շարականի երգեցողութիւն ունկնդրող փողովուրդով:

Թմբուկն ու զուռնան լուծ էին...

Գիւղի պատասխանատուներն ու խմբապետները դադարեցին տեղեակ էին: Հոն, անոնց մէջն էր աշատաղարկան շարժման վարիչներէն Միծօն: Փողովուրդը խորհրդատուր արարողութեան մը վկայ կը դառնար, հետաքրքրութեամբ ու յուզումով:

Երբ Սրբազանը իր աթոռը դրաւ եւ երգեցողութիւնը դադարեցաւ, Սերոբ առաջ անցաւ, Յակոբն ու Աւետիսը կանչեց իր ջով եւ Հրաւիրեց Միծօն կնչահայր պարտականութիւնը կատարելու:

Միծօն, զեբազոյն այդ պահի արժանաւորութեամբ, մօտեցաւ դէնքերը զբրկած: Կարգով կապեց փամփշտակայինները, եւ յանձնեց անոնց մէջ մէկ մօսին Հրացան: Համբուրեց պսակաւորներու ճակատները յաղիութեան մաղթանքներով եւ կեցաւ անոնց կողքին:

Փողովուրդը կուլար այս անօրինակ Հարսանիքին: Անմիջապէս ըմբռնած էր իրական ողբերգութիւնը:

Սերոբ իր զաւակները յափեց.

— Այս անտէր երկիրը արեան ծով դարձաւ: Մեր կեանքն անհամցաւ: Բանտերէն եւ շղթաներէն յոգնեցայ: Այս դէնքերը զբեկեցէ մեր նշանածներու փոխարէն... (Ճիշդ այդ պահուն երկու աղջիկներու բարձրածայն հեծկտուքները լուսեցան, լուսթեամբ արտասուող փողովուրդի շարքերէն: Անոնք իրենց հրդեհուած սէրը կ'ողբային): Քաշուիք մեր անառիկ լեռները, կոռիկք մեր ապաստութեան համար եւ մեռնիք պատուով, արժանի ըլլալու փառաց պսակին...

Ձիւռածները քալ էին եւ վճռական: Առաջնորդ Սրբազանը շճած էր զերազոյն այս խորհուրդէն, եւ սակայն բաժին մը պարտականութիւն ունէր կա-

տարելիք: Աղն ու հացը որ պիտի օր-նէք, թիկնեզ մարտիկներու փոխուած էին: Հոն, տաճարին առջև, լիբան պէս մեծզի երեք անձնուէրներ կանգնած էին զէնք ու զրահով եւ Աստուծոյ խորանին մէջ կ'ուխտէին մատաղ զառնայ Հայոց ազատութեան սրբազան սեղանին...

Առաջնորդը ծանրութեամբ ոտքի ելաւ, մօտեցաւ խորանին, եւ տնոր ձայնը լեցուց եկեղեցիի կամարները.

— Զգործս ձեռաց միտք ուղիղ արա՛, Տէ՛ր...

Արօթքը շարունակուեցաւ հատիկ հատիկ, օրհնութիւնը իջաւ բոլորին վրայ որպէս սփոփանք հոգիի, եւ «երթաք խաղաղութեամբ», խաղաղեցուց պահ մը այս աշխոժեալ ժողովուրդը:

Սերոր եկեղեցիի բակէն, ձեռքի վրճուական շարժումով մը, իր երկու կորիւններուն հետ բռնեց իերթակի ճանապարհը եւ բարձրացաւ Մովսսար:

Ժողովուրդը երեք հերոսներու յաջողութեան համար կ'աղօթէր...



Տարօնի առիձը իր կորիւններով լեռը բարձրացած է: Կարծես Տարօնի բոլոր եկեղեցիներուն զանգակները կը հնչէին՝ այդ լուրը հաղորդելու ամենուն:

Ու հեքիաթը հիւսուեցաւ հերոսական դուպարներու: Ձայն մը հնչեց Մովսսարէն, ձայն մը Սիփանէն, ու անոնց արձագանգը տունէ տուն, խումբէ խումբ, գիւղէ գիւղ անցաւ որպէս հոգեկան հաղորդութիւն, որպէս հպարտանք, ու բոցավառեց հարիւրաւոր քաջակորով երեսասարդներուն սիրտը:

Ժողովուրդը մը ամբողջ հաւատաց թէ իր լաւագոյն զաւակները, որպէս ընտրեալ խոյ, պիտի զոհարեիէ ազատութեան սեղանին:

Այդ օրերէն տարի մը հագիւ անցած էր, երբ առիձ Սերորի եւ իր կորիւններուն ձայնը լսուեցաւ Կովկասէն: Հոն գացած էր ստուար խումբ մը՝ բարձրաւանդակ ստաջնորդելու:

Ահհաւատար զոյամարտ մը կը մղ-

ւէր Անտոքի եւ Մովսսարի լանջերուն վրայ: Ու մարտիկներուն աչքերը ջուր կտրած էին փոթորկալի խումբերու ժամանումին սպասելով:

խումբերը Տարօն չհասան: Քանի մը աժիս անցած՝ ժողովուրդական երգ մը կ'աւելնար հայ դիպաղներդութեան տաղաչարքին:

Լուսին չկար, մութ գիշեր էր...

Բասն անցած խումբերն էին որոնք կուտեցան երկու օր անըզհատ եւ միւլե վերջին մարտիկը նահատակուեցան ազատութեան ճանապարհին վրայ:



Առասպելական խոյանքներու շրջանը պատմութեան անցած էր, ու անոր վերջիւումը դիւցազնավէպի մը սպասուրութիւնը կը թողուր, կարծես հեռուոր դարաշրջանէ մը մեզի փոխանցուած:

Տարիներ անցան այն օրերէն:

Ու յանկարծուտ համաշխարհային պատերազմը պայթեցաւ 1914-ին: Հայ ժողովուրդը զոյամարտի մէջ էր ամենուրեք:

Պատերազմի առաջին տարիները մեզ նետած էին Բասն, ու մենք կ'անցնէինք այն վայրերէն ուրկէ կ'արշաւէին ընտրեալ անձնուէրները, երբ «Լուսին չկար, մութ գիշեր էր»...

Տէլի Պապայի բարձունքներէն կ'առաջանայինք: Արեւտտ օր մըն էր: Կրկ կիրճին մօտեցանք, հին զինուորներէն մէկը, Բասնեցի Պետրոսը ինծի մօտեցաւ:

— Պարո՛ն, այն մեծ քարը որ կը տեսես, Առիձին Քարն է:

— Ի՞նչ առիձ, ա՛յ տղայ:

— Տարօնի Առիձ Սերորը, որ հոս կուտեցաւ Ռանի խումբին միացած: Այդ ժայռին ապաստանած էին Սերորը իր կորիւններով եւ կիրճէն բարձրացող թշնամին ձորը կը դլորէին:

Հին յուշերը իրենց ծալքերը կը բանային, ժայռը կը ցցուէր դէմս որպէս յուշարձան մը, անշրթիժ հերոսներէն աբիւնտ պատմութիւնը ազդակելու ան-

ցորդներուն:

կեցած էինք:

Հսկայ ժայռը Հասո իրանը հողին մէջ խրած՝ անտաշ գլուխը կը ցցէր, և թեւերը վեր կը կարկառէր, մարդկային զանգուածի մը կերպարը ստանալով:

Պետրոսը երազանքէ մը արթնցածի շփոթանքով կը խօսէր:

— Պարոն, այն տարին ինծի հրահանգած էին Հովիւ դառնալ այս լեռններուն վրայ եւ ճանապարհ ցոյց տալ դեռատար խուճերուն: Պանի խումբը պիտի անցնէր: Առաւօտեան արշալույսէն ես պարտաւոր էի այս կողմերը գտնուիլ:

Այդ առաւօտուն հազիւ ոչխարները ելած էին այս բարձունքները, երբ հրացանի կրակոցները սարն ու ձորը լեցուցին: Շփոթուած էի, բայց խուզարկու աչքով կը նայէի սահմանի ուղղու-

թեամբ անցնող խումբը տեսնելու: Արեւը երկու հասակ բարձրացած էր երբ դէմս ելաւ տասնեակ մը, Փէտայական հազուադէպով:

Նշանաբանը յայտնեցի, վտահանցան: Տաք կռիւր կը մղուէր լեռան միւս երեսը, Արփաշայի կողմը: Ինծի ըսին թէ Պանը այդ թեւով կ'առաջանայ: Ուղեցին գիտնալ Պնուսի ճանապարհը: Յոյց տուի ուղղութիւնը եւ թուեցի ձորերու եւ դեռտակներու անցքը:

Հետո խօսողը Առիւծ Սերորն էր, էր կողքին կեցած էին երկու կորիւնները, այնքա՛ն գեղեցիկ եւ այնքա՛ն առնական: Պօսքը մեր բերանը ճանց. հրացաններու որոտը սկսաւ անջն ու ձախէն: Սերորի խումբը նետուեցաւ այս քարերուն մէջ: Ես իջալ ձորը, անցայ դիմացի քարաբարձուները եւ մտայ քարանձաւ մը որ նախօրօք գիտէի: Բասենն ամբողջ պաշարուած էր: Թրքական բանակներու թիւը անհաշիւ էր: Կատաղի կռիւններ

տեղի ունեցան այս ժայռի բոլորտիքը: Քանի քանի անգամներ թշնամին ստիպուեցաւ հետուն քշուիլ՝ բազմաթիւ դիակներ թողնելով այս գիրքերուն առջեւ: Ինչ որ կրնայի տեսնել հետուէն՝ այս մեծ քարն էր, երբեմն մարդկային արագ շարժումներով, երբեմն ալ լուռ ու խոփուն, բայց երբ թշնամին երկու կողերէն գրո՛հ կուտար, ժայռը ուռճարի պէս կը պայթէր, կ'որոտար, կը թնդար, կարծես թէ լեռները պիտի կործանէին այդ ժայթքումներէն: Այսպէս տեսեց մինչեւ երկիր: Երկկոյնն դէժ ժայռէն արձակուած զնդակները հատիկ հատիկ էին: Վերջին փամփուշտներն էին ողջ մնացածներու կողմէ: Սեւ խաւարը իջաւ եւ ծածկեց այդ սուրբ նահատակները:

Պետրոսի աչքերը արցունքով պլշտորած էին:

Մենք այս մեծ յիշատակին առջեւ խոնարհած էինք, Հին օրերու սրբազան ապրումներով:

Պետրոսը աւելցուց թէ՛

— Մենք Առիւծին Քարը անունը տւելինք այս ժայռին, ու երբ Սահմանադրութիւնը հռչակուեցաւ թուրքերոյ մէջ, Բասենի երիտասարդութիւնը ուխտատեղի դարձուց այս քարը, որպէս Առիւծ Սերորի յիշատակարան եւ սրբատեղի:

Միտքուած էինք՝ Եարունակեցիինք մեր ճամբան որ վերջ չունէր:

Այդ ժայռը կը մնայ այն բարձունքին վրայ: Թերեւս օր մը Սերորի կոթողը դառնայ արժանաւորապէս, ինչպէս որ անոր նկարը, այսօր, հաւատաւոր երիտասարդութեան մը պաշտամունքի առարկան է:

Շէն տունը եւ շէնցնողները չկան.

Անձնուէր Սերորի անունն է անմահ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

3

145-2000



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն



Զարեհի ֆերթութեան մէջ անհուն,
 Մերք ջրվէժ մըն ես դուն վայրահոս,
 Մերք աղջիկ կապտաչուի ու փխրուն...
 Մեր խոցուած մտմտքը հրահոս: —
 Զարեհի երգերուն մէջ խոհում՝
 Թէժ, անմար կրակն ես դարերուն:

Մահարին ֆեզ երգեց վերյաշով,
 Ու տեսաւ աչհերուդ մէջ լուսէ՛
 Ոսկեկառ մանկութիւնն իր խռով,
 Որ կ'անցնէր նոր ցանուած արտերէ: —
 Երգերուն մէջ անոր դարձար դուն՝
 Հովի աշլ, բարտիներ ու աշուն:

Սարմէնի տաղերուն մէջ քակծառ,
 Նոր կեանքիդ ու բախիդ հետ հզօր,
 Դուն վաճայ ծովակն ես մշուշոտ —
 Երկիրը անբուսած, մեծաւոր: —
 Սարմէնի խօսքերուն մէջ լռիմ՝
 Կարօտի վիրաւոր կանչն ես հին:

Նորեհի տաղերուն մէջ որբի,
 Դուն եզար գրկամքի ապաւէն,
 Մշուշի, երագի ու կեանքի
 Երկիրը նորաստեղծ՝ հին սազմէն: —
 Նորեհի երգերուն մէջ համդարտ,
 Հին ողբին յաղթերգն ես լուսագարդ:

Իրանի արեւով ողողուն
 Սարեանի լուսայտոյց երգին մէջ,
 Հասեցար ինչպէս գետ վարարուն՝
 Ակերէն կարօտի մը անշէջ: —
 Սարեանի երգերէն բարձրացող՝
 Սպիտակ նշենի մ'ես ծաղկող:

Տարօնցին երգերով իր խոով —
 Նեմրուքի հովերէն գերարբած,
 Քեզ դարձուց Դաւթի թուրն անվրդով՝
 Նենգամիտ ռախին դէմ ցցուած: —
 Երգերուն մէջ անոր բարձրացար
 Յազք-ակամ դրօշի պէս պայծառ:

Շիրազի սիրերգին մէջ անմար,
 Դուն միշտ կես ինչպէս լեռն Արարատ,
 Մայրական բարբ սիրով մշտավտա
 Տրտփող սիրտն ես դուն անարատ: —
 Շիրազի տաղերէն տարածուող՝
 Ծիրանի գօտին ես լուսաշող:

Քերթողներ դեռ բազում, կապեցին
 Երգի խորձն իրենց բու ճարօտով,
 Հարսանեաց ջաները վառեցին
 Տրտփող մեծ սրտիդ բացերով: —
 Հայաստան՝ — սարսուռը առաջին՝
 Մեր արեամ սիրայարդ տեղեւնփին:

ԼԵՒՈՆ ԴՆՐՄԷՆ



ՄԷՍՍԷՊԸ

Գրեց՝ ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ

Այլ Գրիգոր չէին ըսեր իրեն, այլ Մէսսէպ, որովհետեւ այս թուրքերէն հայտնանքով կը սկսէր իր բոլոր մեծ ու միջակ ջղայնութիւնները, մանաւանդ երբ բարկութեան նիւթը ազգային ըլլար:

Ազգին զժբախտութեան համար ջըղայնացողներուն անյայտ թէնորներէն էր իր ցաւին ու նախասիրութիւններուն վրայ տեւաբար կեդրոնացած այս երկտասարդը:

Նախակրթարան մը աւարտած էր, եւ հակառակ ուսման համար խնեթ ըլլալուն, չէր յաջողած երկրորդական ու բարձրագոյն վարժարաններ յաճախել:

—Մէսսէպը սա բախտին... մեր թշնամիին մէսսէպը...: Սա պառաւը հողացող ծերուկ հայր մը ունենայի, ձայնս Սորպոններէն կու գար:

Հոգին կրծող քանի մը վէրքեր ունէր: Այդ վէրքերէն մէկն էր ուսումը չկարենալ շարունակելուն վէրքը:

Կօշկակար ընկերները նախ մըսթըր Բէմպրիճ, մըսիօ Սորպոն, ետքն ալ Փօն Կիւթենպերկ կոչեցին զինք: Չեղաւ: Կուր կը Հանէր այդ անուններով կոչուելուն համար: Կ'ըսուէին ծաղրական ձեւով մը: Բայց երբ ըսին իրեն Մէսսէպ, չառարկեց: Լաւ էր, կը բացատրուէին ցաւն ու ջղայնութիւնը:

Կը մանրացնէր աչքերը եւ վայրկեան մը այդպէս միտքը լաւ մը տաշելէ ետք.

— Ի՞նչ կայ ջցաւելու. կրակի պէս աշխատող խելք մը ունենաս եւ միայն կօշիկ չինես, որպէս զի ամէն մարդու առջեւ Վօշիկէդ վեր չելլե՞ս: Մօ չէ՞ք

հաւատար, ծօ ինչպէ՛ս հաւատացնեմ որ եթէ համալսարան գացած ըլլայի, աւարտելուս յաջորդ օրն իսկ սա աշխարհին շտի աշխարհ մըն ալ ե՛ս կը շինէի:

Մուռ ակոսաներով Արթին, որուն շապիկին կոճակները փրթած կ'ըլլային եւ կօշիկին կապերը քակուած՝ ուզելով հաւանութիւն յայտնել ըսուածին, կը կրկնէր նոյն խօսքերը, հեզուութեան ժպիտ մը շրթներուն.

— Աշխարհ մը, հարկա՛ւ կը շինէիր, եղած՝ աշխարհ ի՞նչ է որ, ոսկի՞ է, մէկ ծայրէն միւսը ճէվահի՞ր է. կը տեսնենք.— հող ու ջուր, բոյսեր, հայլայններ, մարդիկ. տեղ մը արեւ մը, տեղ մը լուսին մը, տեղ մը լեռ, տեղ մը ծով, ամէն տեղ քանի մը բան. մե՞ծ բան է ամէն բան կրցողին համար. հա՛ մեզի համար կօշիկ մը չինելը, հա՛ Աստուծոյ համար աշխարհ մը չինելը: Արդէն եղածը ի՞նչ է որ...:

Մէսսէպ այս եւ նման խօսքերու մէջ կը զգար որ իր ցաւին հանդէպ միւրթաբութիւն մը դրուած է: Եւ դրուած է հեզոող ժպիտ մը նոյն ատեն՝ կեանքին իրականութիւնը հարցմամբ հոգ:

— Կատակը մէկզի, կ'ըսէր. կը ստեղծէի: Եւ ի՞նչ բաներ... Բայց կը տեսնէ՞ք, տունը մայր մը ունիմ եւ տունէն դուրս ...կաշի: Ա՛խ, մէսսէպը այդ կաշին:

Բարկութեան շունչեր կը փչէր ունեւ գերէն դուրս, առատ առատ: Ընկերները գրեթէ բառ առ բառ գիտէին այդ վայրկեանին, թէ Մէսսէպ ինչ դառն եղբաւկացուքեամբ պիտի վերջացնէ կաշին:

րու զէժ սկսած իր յաւիտեանական տըր-տունը:

— Մարդո՞ւ գործ է կաշիով զրադե-լը. մարդը ո՛ւր, կաշին ուր: Կ'ամչնամ պէ՛. ուրիշներ օգնանս շինեն եւ ես կօշի՞: Տղէտ տիմարի գործ. զամը կաշիին մէջ խօթէ՛ հա խօթէ՛. աշխարհը թող հնարէ՛, ստեղծէ՛ եւ վազէ—եքթա՛յ, իսկ դուն դազկեանհիդ առջեւ նստած՝ կօշիկ հասցուր, պարոն Գրիգոր, կօշի՛կ:

Թէ՛ եւ իր մարմնական գոյութիւնը կը մնար կօշկակարատուն ըսուած քանի մը ծակերու մէջ՝ արժանապատուութիւնը սակայն վար չէր իջներ բնաւ համալըսարաններուն տանիքէն: Այդ արժանապատուութիւնը եթէ կարենար նիւթա՛նալ՝ ուրիշ որեւէ բանէ առաջ, պիտի ուզէր յառաջդիմութեան դըրշակի մը պէս ծածանիլ բարձրագոյն ուսման ամէն հիմնարկի վրայ:

Այդպէս, միշտ զէպի վերերը ձըզտող իր արժանապատուութեան համաձայն՝ ամօթ էր օգնանս եւ պօժպ աթօմիք շինող մարդկութեան համար լըջօրէն զբաղիլ տակաւին կօշիկի եւ այդ կարգի վրայ եղող ուրիշ մանր գործե-րով: Յետին աշխատանքներ էին ատոնք, տարիներով դասարան կրկնած աշակերտի ողորմելի զբաղում: Մտքի եւ գիտութեան այս մեծ ժամանակներուն մէջ, պէտք էր կոյրերուն, խուլերուն կամ անդամալոյծ ուղեղով մարդոց արհեսարը ըլլար ան: Մարդկութեան ամէնէն հըռչակաւոր օրերուն սկսած ենք, կը մտածէր, եւ սակայն ծակ տարատներուն թիւը միլիոնէն աւելի է, անթիփ փոքերը նորէն միլիոնէն աւելի են, ամէն մայթ, հրապարակ եւ նաւահանդիստ՝ բեռնակիրներով լեցուն է:

Ու տեսիլքէ մը յափշտակուածի փայլուն, ու ջերմ, ու խնթ անտրամարանութեամբ մը՝

— Մէսսէ՛պը, մէսսէ՛պը բոլոր պետութիւններուն, ինչո՞ւ, գիտե՞ն ո՛ւր հասած է գիտութիւնը այսօր, ո՛ւր հասած է մարդուն խելքը. ի՞նչ սխալ բաներ կ'ընեն, ասանց կշտանալու սխալ ու

սեւ բաներէն: Միրահարուած են անոնց: Աշխարհը մեքենայ, աշխարհը գիտութիւն, աշխարհը խելք՝ եւ ամէն փողոցի վրայ, ամէն տեղ, մանր թթու գործ, թթու զէմք, թթու տրամադրութիւն: Ես ըլլամ մեծ պետութեան զլուխ, ես ըլլամ մեծ գրող՝ կ'ըսեմ.— «Անմեղ մարդոց բարձր ուսում, բարձր գործ: Թող մտածեն՝ զիրք գրեն, մեքենայ հնարեն, Ֆապրիք շինեն, նկարեն, երգեն, ինչ գիտնամ: Իսկ ոճրագործներուն, փոխան մահապատիժի՛ փոքը գործ»: Աշխարհը ո՛ւր է հասեր. դե՞ռ մանր միտք, դե՞ռ մանր հողի, դե՞ռ հին ու մանր սիրտ մը. ալ ի՞նչ հասկցանք Քէմպրիճէն, Սորպունն, բոլոր բարձր դպրոցներէն. աւանակի՞ զլուխներ կը յաճախեն այդ տեղերը թէ՛ մարդու: Ամէն դացող ինչո՞ւ օգնանս մը չի շիներ, Գօսպ քթօլիփ մը չի շիներ, անոր հակառակը չի՛ շիներ: Ա՛խ, սա Գրիգորը պիտի ըլլար ուսում անողը որ...»

Օր մըն ալ, գործատեղին, երբ ան այս խօսքերը կ'ըսէր նորէն, ընկերներէն մէկը.

— Խնդիր չէ, ծօ՛, այս բաներն ալ պէտք են, ասանկ թող ըլլայ. ի՞նչ կայ որ, այնպէս չէ եղած եւ այժպէս է եղած ըսելով՝ թող ամէն մարդ կեց մը տայ աշխարհին եւ մեռնի՞, թող յիմարանոց երթայ, ինքզինք քանսէ՛ր ընէ: Մեզմէ լաւին թա՛ եօթը... ի՛ւֆ:

Եւ խօշոր «ի՛ւֆ» մը գրուեցաւ կարծես բոլոր ընկերներուն զէմքին վրայ: Եարունակեց ապա ուրիշ մը, քիչ մը հեռու վարկեանհի մը առջեւէն.

— Մեղք ես պէ՛, վերջացուր: Վալլախի պարսպ է շատ մտածելը. բոլոր հաստատութիւններուն թա՛ հիմը... ի՛ւֆ:

Այս երկրորդ «իւֆ»ին քով «մեռանք» մըն ալ նկարուեցաւ կարծես զէմքերուն վրայ: Ու երրորդ տղայ մը, հեռու դազկեանհէ մը այս անգամ.

— Աստուած վկայ մեր Գրիգորը չըլլայիր՝ կը ծեծէինք քեզ, Մէսսէպ: Հեբի՛ք է շօճուի ըլլաս. օրէ օր խենթ թօս-

քերը կը շատնան բերնիդ մէջ: Մեռնիլ կա՞յ, վերջացաւ: Գալուստ Կիւլպէնկեանը չմեռա՞ւ: Սորպոնիդ չի՞մը դնողը դերեմանի՞ն մէջ է չի՞մա թէ Սորպոնիին: Գերեզմաններուն մէջ ոչ ինխապէ՞րթա՞նք— գերեզման կայ, ոչ ալ Սորպոն—գերեզման: Ելեր եկեր ենք աշխարհ, օր մըն ալ կ'ելլենք կ'երթանք, շատ բարակ մանուշակ է:

Բայց Մէսսէպին մանարանները հաստ չէին մաներ բնաւ:

— Հերթի՞ք փիլիսոփայ ըլլա՞ք գլխուս պէ՛. մէկուն սիրտը այրած տեսա՞ք, ա՛լ կը սկսի՞ք:

Նման պահերու կը կանչէին ընկերները խանութպան Ալիին որ բերէ էրենց Սէվըն ափ:

Ձովացուցիչները, խօսք թէ հեղուկ՝ ի՛նչ օգուտ. ստանարանին մէջ իսկ դընէրը, պիտի ետար Մէսսէպի հոգին, եթէ իր ապրումները բառի չվերածէր:

— Ա՛խ այդ սուրբ Մեսրոպը, ախ այդ գպրոցնե՛րը, այդ դերեք՛րը, բոլորը կրակը դրին մէջս, իրենք հեռացան: Մնացինք ես, պառաւ մայր մը, կայի ու կրակ: Ես ա՞յս Գրեգորը պիտի ըլլայի: Մնողքս վարդ ցանեց, փուշ բուսաւ: Ի՛նչ կ'ուզէք ըսէք. սիրտս մէկ բան կը փրփրաւայ — գրուսն, Գրեգոր, սա եղածը չես, չեղած բաներդ ես, եւ ես չու սիրտդ չեմ, ես այն չեղած Գրեգորին սիրտն եմ:

Դեղկեահէ մը.

— Սէվըն ափը վերջացո՞ւր. մաման եթէ պապային բաւարար չափով նիվելը բած չըլլայ այդ գիշեր՝ կրնա՞ս ծնիլ եւ բախտաւոր մէկը ըլլալ առկէ ետք: Հարկա՛ւ փուշ պիտի ծնէինք, ծօ՛, 1915-ը ճիւղէի՞մ ժամանակ էր:

— Ալի՛, նորէն Սէվըն ափ:

Կը կանչէին քանի՞ օր հոգիով այս անգամ, կը խմէին մէկ ուսպով, ու կը զարնէին մուրճերը դամին վրայ, կաշիին վրայ, աշխարհի տիւնին վրայ, իմանին վրայ, մանաւանդ հին ու տխուր թուականի մը վրայ:

— Մարդ ըսածդ մեծ բաներով պէտք է գրադի, մեծ: Պարտիկ գործը տարուէ տարի քեզ կը պարկեցնէ. պարտիկ երկտասարդ մը կ'ըլլաս, յետոյ պարտիկ շափահաս մարդ մը, պարտիկ տափակ ծերուկ մը, որ այլեւս կհանքին մէջ կորսւած մէկն է, ոչ-ո՞ք մէկը:

Օ՛, Մէսսէպին վէրքերը թեթեւ չէին, չէին: Ուսումը չկարեանալ շարունակելուն ծանր վէրքին քով կը մխարաւելի ծանր վէրք մը՝ — հայութի՛ւնը: Երբորդ եւ ամէնչէն խորունկ վէրքը՝ տաճիկ ազգին հասցուցած շարիքն էր:

— Ամբողջ հայ ազգը ինծի պէս է.— խելացի եւ գթաբախտ: Դրկուած է զօրաւոր ըլլալու, եւ իր պատմութիւնը տկար է. երկրի ազգերուն արեւազգը պիտի ըլլար, եղաւ անոնց շատ պարտիկ աստղերէն մէկը: Իր թիւով պիտի լեցնէր երկիրը ըստածին ընդարձակ մասերը. հայրենի՛քը չկրցաւ լեցնել, որ քանի մը բարձրը լեռնազագաթ է միայն եւ քանի մը քաղցր հովիտ: Յետոյ Այրարատեան դաշտ մըն է, որ կտոր մը հաց ուտէ ազգը, յետոյ Աւարայրի դաշտ մը՝ որ կըրպի: Նախակրթարանի մէջ այդպէս սորվեցանք: Բայց աշխարհազարութեան դասին մէջ այնքան անծայր դաշտեր կան յին, այնքան բարեբե՛ր հողեր, այնքան դեղեցիկ ծովեզերքներ:

Կը շարունակէր տխուր, դուռնա, ջրային.

— Այո՛, ինծի պէս է մեր ազգը: Բա՛նտ մըն է: Բանտարկուած են մէջը լաւ բաներ, սրբութիւններ, մեծ մեծ քաջագործութիւններ, մեծ մեծ դիւտեր: Ձինք փրկելու համար ծնածները բանտարկուած են, — Մհեր, Արտաւազը, Արշակ թագաւոր, ո՞վ դիտէ դեռ քանիներ: Իմ մէջս քի՛չ բան բանտն է, ամէն հայու մէջ ի՛նչ բաներ բանտարկուած են, եթէ մտածես քիչ մը:

Կը մտածէր քիչ մը.

— Ե՛, կրակի պէս արթուն, կրակի պէս աշխատող եւ բարի ազգ մը, որ դա—

տապարտուած է կաշիի պէս ոչինչ բաներ ընելու, քանի որ որք է, տեղ մը չունի, հանգիստ չունի, դ՛ուբսն է:

Ու վերջացնել ուղեւորով.

— Ես ուսման սիրահարեր էի. չեղաւ. մէսէ՛սը ինքնականին: Ամբողջ ազգը սիրահարած է անուշ հայրենիքի մը եւ կը շարձարուի. մէսէ՛սը տանիկներուն: Գեղեցի՛կ Հայաստան, գեղեցի՛կ Հայաստան...:

Ամուր կուրծքով, ամուր հոգիով թուխ տղայ մըն էր Մէսէսը: Գանդուր մազեր ունէր եւ միջիտին վրայ ինքզինք ուղիղ պահող հասակ մը: Կեանքը կը դիտէր միայն ու միայն ազգային անկիւնէ, միայն ու միայն բարոյական հասկացողութիւններու անկիւնէն: Առողջ էին իր շնչերը: Կը սիրէր զօրաւոր եւ գեղեցիկ բաները: Բայց գեղեցկութիւնն ու զօրութիւնը ուրիշ տեղ չէր գտներ, եթէ ոչ քաջութեան ու ճշմարտութեան մէջ միայն:

— Մէսէ՛սը... այս այսպէս է, զլուխ կարեն՝ այսպէ՛ս է:

Ունէր բազմաթիւ ընկերներ, մեծ մասը կօշկակար: Ազգին ներկայով եփող մըն էր կեցած տեղը, ապագայով մտահոգ մը:

— Աշխարհին մէսէ՛սը... կ'ըսէր ընկերներուն. վայելելու համար՝ դուք կերկններու եւ աղբիկներու ետեւէն ինկէք ուզածոնու չափ, ես դէ՛մ եմ ամուրիութեան եւ պիտի ամուսնանամ: Ձեր ըրած ցածութիւններ պիտի չընեմ, հայու վայել չեն ատոնք: Հայ մը մեր տարիքին հասա՞ւ, քսան քսաներկու, շատ շատ քրտաւրճինդ տարեկան եղա՞ւ՝ իրաւունք չունի շամուսնանալու: Հայաստանի դէ՛մ է ատրկու: Քսան տարեկանին ամուսնանալը մեր օսածամանդութեան մէջ պէտք է դրուի: Կաթողիկոսը պէտք է հսկէ այդ յօդուածին գործադրութեան վրայ: Բոլորդ ալ խենթ էք, ցած էք, չէք ըրընք: Հայ ազգին զաւակ պէտք է, զաւակ՝ միլ որ չունի՝ դէ՛մ է Հայաստանին,

դէ՛մ է հայ ժողովուրդին: Միայն երե՛ք միխոն ենք, եղբայր, զաւակ պէտք է, զաւակ:

Կ'ըսէին ուրիշներ՝ «եկեղեցի», կ'ըսէին «զարոց», կ'ըսէին «գէրք», «կուսակցութիւն», «համերաշխութիւն»: Մէսէսը ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, այլ կը մնար թերահաւատ, աւելի ճէշը՝ չբաւարարուած սրամարանութեամբ մը: Ոչ ոք «Զաւակ» բառը չէր ըսեր, չէր գրեր, չէր պոռար «եկեղեցի», ու «գէրք», ու «զարոց», ու բոլոր լաւ բաներուն հետ: Այս ազգին լաւ բաներուն մէջ «ամուսնութիւն» եւ «զաւակ» բաները չկային կարծես: Կարծես բոլորն ալ, առանց բացառութեան, կ'ամչնային որ «զաւակ» ընելով՝ յանկարծ պզտիկ խօսք մը ըսած կ'ըլլան:

Ո՛չ, չէր բաւարարուեր բնաւ ու կ'ըսէր քովը կեցած ոեւէ ընկերով.

— Խո՛նչ կը գրեն, Խո՛նչ կը խօսին ազգին մեծերը. Աստուածը սիրես. Ձիսաստանէ՞ն եկած են. մեզ հարիւր միլիոն կը կարծեն, չե՞ն գիտեր որ վար դեն վեր դենս՝ եղած չեղածը երեք միլիոն հայ է: Ձէ՛, պապած, չէ՛, հազար անգամ չէ՛. այդ ըստածները գլխուս վերայ, աղէ՛կ բաներ են, բայց նախ եւ առաջ զաւակ, ամէն հայ մարդ իսրայէլի Յակոբին չափ զաւակ: Մարդուս ուղեղն ու հոգին իր ազգին համարեով կշտանալու են նախ, ետքը մեծ գործեր ընելը դիւրին կ'ըլլայ: Խո՛նչ կ'ուզեն ըսեն, ես հայութեան շատ ըլլալուն կարօտ ունիմ: Տեսնես հայե՛ր, հայե՛ր, ծովու չափ հայութիւն, օվկիանոսի չափ հայութիւն. թող խենթի տեղ դնեն. երբ հայ մը տեսնեմ, անոր քով ուրիշ մըն ալ տեսնելու անօթութիւն մը կը զգամ. երկու հայ տեսնեմ՝ կ'ուզեմ ուրիշ մըն ալ տեսնել: Բոլոր հայութիւնը տեսնեմ՝ չեմ դոհանար, կ'ուզեմ ուրիշ հայեր ես տեսնել: Ամուսնութեամբ եւ զաւակով կ'ըլլայ այս ամէնը. քիչ ենք, պապա՛մ, քիչ:

Եւ հակահասողի մը պատասխանելու վրդովուած շեշտով.

- Աղէ՛կ. ըսենք թէ երեք միլիոն եւ կեղեցի չինեցինք, երեք միլիոն դպրոց բացինք, երեք միլիոն կուսակցութիւն չձմեցինք, երեք միլիոն զիբբ զբեցինք. վերջացա՛ւ: Ըսենք թէ այս բոլորէն հոգ, Համերաշխութեան Համար երեք միլիոն անգամ ալ ամուր ամուր իբրեւ Համբուրցինք՝ ի՞նչ պիտի ըլլայ որ— Հայաստանը քիչ մը աղէկ, Հայերը քիչ մը գիտուն՝ մեր մեղքերը քիչ մը պակաս: Բայց անդին, չինք ամուսնանար, եւ երեք միլիոնը կ'ըլլայ երկու միլիոն, երկու միլիոնը՝ մէկ: Ծօ հղբայր, կը մեռնինք: Ամուրի մնանք եւ ա՛զգը մեռցընենք:

Միշտ երեւակայական հակաճառողի մը զիմաց գզալով ինքզինք.

- Եղբա՛յր, նախանձէք մեռնիլդ կու գայ. հինգ-վեց ամիսը անգամ մը՝ Զինաստան լման հայութեան չափ մարդ կը ծնի. ամէն հինգ-վեց ամիս՝ բոլոր հայերուս չափ նոր չինացի: Երանի՛ր Զինացիներուն, երանի՛ր, առո՛ղջ են:

Աւ դլուխը շարժելով.

- Ձէ՛ր, պապամ, չէ՛: Մտածելու կարճութիւն մը կայ մէջուղեբը, հետուն չտեսնել մը: Թիւով աւելի ըլլաս ինք՝ գոնէ տաճիկ ըստածէն:

Ընկերները կը կատակէին եւ կ'ըսէին. «Վաղը սիւրիւ մը լակոտ բեր, ազատուինք»: Բայց ինք ցուցամատը զըլխուն տանելով.

- Սէլօք կենաք եւ չխօսիք լա՛ւ կ'ըլլայ. այս գաժախիմ մէջ ուրիշ բան զժուար կը մտնէ:

Ճիշդ էր ըսածը, չէր մտներ: Այսուհանդերձ, քիչ կը պատահէր որ կիրակի օրերը եկեղեցիէն բացակայէր: «Փառք ի բարձունս...» եւ Մէնսէպ սկսած կ'ըլլար իր առաջին աղօթքը: Ասուծած կը խնդրէր որ հայերը բազմացընէ եւ բազմացեալ հայերուն բազում գաւակ, բազում հաց եւ բազում առողջութիւն տայ, ուրիշ բաներ տալէ առաջ:

Չբաւարարուած դլուխ մը ունենալով հանդերձ, հացէն ու հազուատէն ա-

ւելցած դրամը կը յատկացնէր առաւելարար զրբի, եւ ազգային բոլոր հանդէսներուն ու հաւաքոթիւններուն կը ջանար ներկայ ըլլալ:

- Մէնսէ՛պը աշխարհին, այս բաները աղու՛ր բաներ են: Այս տեսակ բաներ ալ չընենք, եզրիտ՞ ըլլանք: Ձէ՛ր, պապամ, չէ՛, մասնակցելու է. վերմակնիս ծախենք, ազգային բանի մասնակցելու, ամօթով չմնանք: Հայ ըսելը, յայտնի է, դիւրին գործ չէ. հայ ըսելը, ճիշդը, բարձր բաներու հասնիլ ըսել է. ասիկա չզիտոցող մէկ օր իսկ թող չմընայ ազգին մէջ. մնայ առա՛նց բան մը տալու. մէ՛ս... Հիմա ամօթ բաներ կ'իլլին բերնէս:

Ամօթ բաները ի վերջոյ բերնին մէջ չէին մնար անշուշտ, կ'ելլէին. ժողովուրդին բան շտուռը մարդը կարծես դիմացը եղած ըլլար. ըլլար ներկաներէն սեւէ մէկը:

Կը վերադառնար յետոյ իր այնքան փայփայած հիմնական գաղափարին:

- Ընտանիք, գաւա՛կ՝ յետոյ ինչ որ կ'ուզէք: Յետոյ՛ զերական, յետոյ վարժապետ, յետոյ տնտէս եւ եպիսկոպոս:

Ապա զարմացական եւ հաճելի դիմածութեամբ մը, որ կարելի էր նշաններէն մէկը համարել իր խօսելու տակաւ չեշտուող աշխոյժին.

- Եղբա՛յր, չե՛մ հասկնար, շատնալու ճամբան կնիկ մը ըլլայ եւ չշատնա՛ս: Այնքան դիւրին եւ հաճելի գործէ կը հրաժարի՞ն, ի՛նչ ծուլութիւն: Միայն երեք միլիոն ենք, ամօ՛թ է. մէնսէպը բոլորին, ուրիշներէն քի՛չ էրիկ ենք, մեր հայ կիները քի՛չ կնիկ են, հա՛ց չենք կրնար ճարել, վարժատո՛ւնը պակաս է, ի՛նչ ամօթ բաներ:

Լաւ տրամադրուած, նոյնիսկ ժըպտելով, կատակելով.

- Եղբա՛յր, պօմպ աթօմի՞ք պիտի հնարենք շատնալու համար, թէ պարզապէս պիտի ամուսնանանք, երկու ոտքով ենք, չորս ոտքով պիտի ըլլանք: Հայութեան փրկութիւնը երկու ոտքին վրայ երկու ոտք եւս զուգարելէն կ'ըս-

կրտի: Երկու էրեկի ոտք, առաւել երկու կնիկի ոտք: Ու վերջացաւ ահա: Ու հասնութիւնը շատցած է, փրկուած է, առողջ է:

Վերջացնելով.

— Այո՛, այո՛, այո՛. կանուխէն աղու ուր աղջիկ մը՝ եւ աղբ փրկելուն գիտերուն դիւտը աս է:

Քսանըհինգ տարեկան էր, երբ էր այնքան Մատաղոված գիւտերուն դիւտըրաւ Մէսսէպ: Վեց ամսուայ չափ էր ամբողջ անձը բարձրագոյն ջերմութեան մը մէջ պահողը ոչ Պէյրութի անօրինակ տաքերն էին անշուշտ, ոչ ուսման առնուազն տասնամեայ տեւչը, և ոչ ալ Ձիւնաստանի ծնունդներուն եւ մարդահամարին վիթխարիութիւնը, բազում ամսած հայկականին հետ: Այդ ջերմութիւնը բոյր եւ կարծես յաւիտենութիւն պարունակող քաղցր հրդեհ մըն էր եւ կը կոչուէր Տէր Աւետիսի միջնեկ աղջիկ Հայկուհի:

Վեց ամիս գինով բան մը եղաւ Մէսսէպ: Վեց ամիս եղաւ նաեւ սարսափելիօրէն արթուն բան մը, պատկերի մը առջեւ, որ խորունկ նայուածք էր, բաւական բարձր հասակ եւ գիծերու ներդաշնակութիւն:

— Աւխարհի ամէնէն գեղեցիկ աղջիկը ինձի կու տանն:

Վեց ամիս այս հարցումը ճանկեց ուղիղը, Հայկուհի անունէն ամիջնապէս ետք: Ու չկրցաւ նաեւ ընդունիլ, վայրկեան մը իսկ, որ էր սրտին այդքան բուրբոյրին պատկանող մէկը կրնայ իրենը չըլլալ:

— Մէսսէպը, չի՛ կրնար ուրիշ ձեւով ըլլալ, չի՛, չի՛...

Ձի՛, չի՛ եւ եղաւ Մէսսէպին ուզածը: Վեց ամսուայ գինով բանը, արթուն բանը, հրդեհ բանը՝ եղաւ վեց ամիս վերջ Տէր Աւետիսին զնահատած տղան, եղաւ երեցկիւնին փնտաած բնաւորութեամբ երիտասարդը, եղաւ Հայկուհիին հաւնած փեսացուն: Ոչ մէկ թաղեցի

բամբասած էր, ոչ մէկ ծանօթ դէշ վրակայած:

Գիւտերուն դիւտին համար, պաշտօնական նշանտուրը կանխող նախատօնակ ըրին Մէսսէպ եւ ընկերները: Հասարակեցան Մէսսէպին տունը, իրեկուան ութին:

Ընդարձակ սենեակ մը, ընդարձակ սեղան մը: Ընդարձակ մօեղէն, ընդարձակ սալատներ, ընդարձակածաւալ օդի: Ամէնուն մէջ անհուն տրամադրութիւն:

— Կենացը Տէր Աւետիսին:

Գաւաթներուն պարունակութիւնը կիտուեցաւ:

— Կենացը երեցկին մայրիկին:

Երգեցին.

— Վրաւթիս տակ բան չմնաց:

Մէսսէպ.

— Մայրիկ, մեծ շիշը հոս մօտեցուր:

Սարգիս.

— Մայրիկ, ջու՛ կենացը, դուք եւ մենք Գրիգորը բարով ամուսնացնենք, շնորհաւոր ըլլա՛ք, տառօք ամենուս:

— Շնորհաւոր, շնորհաւոր:

Մայրիկը.

— Հայկուհիին կենաց, տառօք ձեռքի:

Բոլորը միասին

— Համաձա՛յն, համաձա՛յն:

Կամաց կամաց բոլոր դաւաթներուն տակ բան չէր մնար, բան չմնաց: Տաքցան, շիկացան: Բերուեցաւ դարձեալ օդի: Ու խմեցին դարձեալ նոյն թափով: Երբ խորունկ յատակով շիշը մուտք գործեց դռնէն, կլոր դէմքով Դանիթ.

— Օղիին կենաց, ուրախութիւն բուսցընող է:

— Թող ըլլա՛յ, թող ըլլա՛յ. կեցցէ՛ տիրութիւն չորցնող ջուրը:

Կակաչի պէս կարմրած ճակատով Սարգիս.

— Ժպի՛տ է օդին, արե՛ւ է օդին:

Բոլորը.

— Կեցցէ՛ խաւար խորտակող կրա-
կը:

Արթին, որուն յոնքերը սկսե՛ր էին
վեր-վար ըլլալ:

— Քառս էին տղաքը, եւ Աստուած
ստեղծեց արջիկները. տեսաւ որ թէ՛ եւ
շատ բարի բան մը ըրած է, բայց կա-
տարեալ բան մը չէ ըրած տակաւին: Ոչ
շատ տաքութիւն կար մէջտեղ, ոչ շատ
պայծառութիւն: Ստեղծեց այն ստեղծ օ-
ղին եւ տեսաւ որ սէ՛րը ստեղծած է, և
տեսաւ որ լո՛յսը ստեղծած է: Տաքու-
թի՛ւն, պայծառութի՛ւն, կատարելու-
թի՛ւն:

Մէսսէպ.

— Կեցցէ՛ պաղուծեան թշնամին:

Մենք Հին քառոսի մը ձեռագիրներն ենք
եւ օղի խմելով կը սպուրենք կեանքին
մէջ, իբրեւ սիրոյ եւ ուրախութեան մա-
տենաշար:

Սիմոն Գէորգիին, կամայ ձայնով.

— Վալլաւի Մէսսէպ տէրտէրէն պը-
րաբար ալ սորոված է:

Մէսսէպին.

— Այսինքն մենք Հաստր Հաստր լոյս
պիտի տեսնենք. պիտի խմենք, սիրենք,
սիրենք խմենք, մինչեւ որ քեզի պէս
սպուրենք եւ լո՞յս տեսնենք կեանքին
մէջ:

Ժպտեւելով.

— Մէսսէպ, մեր բոլորին պեսն ես,
հոգին ես, կենսո՞ցը:

Միասին.

— Կեցցէ՛ Մէսսէպը, որ մեր հոգին
է եւ նոր Հայերուն բազմապատկութեան
նշանը:

Սարգիս.

— Ոտքիդ տէրը եղի՛ր եւ պսակուե-
լու՛ք յաջորդ օրն իսկ՝ բազմապատկէ՛:

Գարձ Սիմոն՝ կարճուկ մը ոտքի ել-
լելով եւ մատը վեր, աչքերը վեր.

— Մէսսէպ, դուն Հայութեան բարի
ամպն ես. կ'ուզենք քեզմէ՛ գաւակներու
տեղատարափ:

Ձեռ գիտե՛ր ինչո՞ւ մինչ այդ լուսած
սուր ձայն հանող սուր կզակով դեղին
Մերթ.

— Վա՛յ խեղճ աղջկան դիւտուն, Հա-
յութեան սա կատաղած ամպը իր վրոյ
պիտի գոռայ:

Դաւիթ.

— Ի՞նչ կարծեցիր, եղէ՛ք, մեծ ազ-
գերուն Հետ մրցելու Համար գոռալու է,
որոտալու է. հոգը մի՛ ընե՛ր, ոչ մէկ
Հայկուհի նման որոտումներէ կը վախ-
նայ:

Մէսսէպ.

— Մեր Հոռ խմած ժամանակ ո՞վ դի-
տէ քանի՞ չինացի ծնաւ: Վնասը բառը
բերնէ՛ք եւս՞, սա թաղին շափ չինացի
արգէն ծնած է կարծեմ:

Գէորգ չէ՛կ դի՛ծ մը եղող պեխը շո-
յելով.

— Փոխ դրամ ուզելու պէս փոխ
մարդ ուզելու է չինացիներէն. ի՞նչ կ'ըլ-
լայ, օր մը ետ կու տանք: Թող քան
միլիոն չինացի այսօր Հայ ըլլան, օր
մըն ալ մի՛նք 700 միլիոն կ'ըլլանք եւ 20
միլիոն Հայ չինացի ըրած՝ կը դրկենք:

Մէսսէպ.

— Պարսպ կատակները ձգեցէ՛ք: Եթէ
Հայը ուզէ՛ տաճիկին շափ կրնայ ըլլալ:
Պէ՛տք է ուզէ:

Գիշերը այսպէս դնաց. դրացիներ-
բուն աջըրները կանչեցին եւ սկսաւ տա-
կաւ լուսնալ:

Վերջին անգամ մը եւս խոշոր գա-
ւաթներ պարպուեցան Մէսսէպին եւ
Հայկուհիին կենաց: Յետոյ բոլորը եղ-
բայրներու պէս՝ բարե՛ բարե՛՝ իբարու
նայեցան, Իրար Համբուրելու մթնոլորտ
մըն էր: Իայց գուսպ եղան:

— Գիշեր բարի մայրիկ, գիշեր բա-
րի Մէսսէպ:

— Տառօսը ձեզի՛:

Վերմակին տակ անուշ ջերմութիւն
մը պատած է մարմինը: Ընկերները գա-
ցին, քնացան թերեւ: Ինք չի կրնար:
Արգէն իրաւունք ալ չունի. Փակած է
փեղկերը, Բայց գուրբը ով գիտէ որ-
քա՛ն արեւ կայ: Հարիւր քալ վար, ծո-
վը որքա՛ն կապոյտ է արեօք: Մէրվի-

տի ինքնաշարժները սկսած են արդէն աշխատել, կ'երազէ: —

Երկրորդական ուսում եւ համալսարան՝ չիբականացան: Բայց սիրոյ խընդրին մէջ բախտը հետը եղաւ: Հիմա ինք եւ Հայկուհին միասին պիտի քայլեն կենսաբնի մէջ: Կը յոգնի՞: Անոր հետ մինչեւ աշխարհին ծայրը քայլէ, չի յոգնիր: Ուրիշ է այդ աղջիկը, ուրիշ: Բուն Գրբիգորը գտնողը ոչ մայրը եղաւ ոչ ալ ուրիշ մէկը: Հայկուհին եղաւ:

Օղբն եւ ներքին ուրախութիւնը ծարաւուցիին գինք: Գնաց փարչէն խմեց ջուր: Նստաւ սպա մահճակայի եզրին: Ընկերները միտքը ինկան:

— Տառտը մեզի տղաք. ուրիշ որչա՞ք զեղեցիկ աղջիկներ ունի մեր ժողովուրդը:

Վաղը պէտք է ըսէ իրենց.

— Պէտք է շուտ ընել, պէտք է մէջտեղ բերել շատնալու ժպիտ, շատնալու ուրախութիւն, բազմանալու քէյֆ: Ընտանիք ընտանիքէ ետեւէ, բազմութիւն բազմութեան ետեւէ, սերունդներ վա՛կոնի պէս իրարու շլթալուած՝ եւ այդպէս Հայոց Առատութեան էքսփրէսը պէտք է սուրա՛յ մարդկութեան մէջ:

Ժպտեցաւ միտքը այցելոյ զազափարեհուս, պատկերներու: Պիտի ըսէր ուրիշ խօսք մը եւս տղոց.

— Բոլորիդ մէտէ՛ պը, ամուրի եւ վաանգաւոր լախոսներ, բոլորիդ մէտսէպը, կը տեսնէք օր մը, թէ Գրիգորը ըստածը ինչպէս իր զազափարեհը կը գործադրէ: Ինծի կ'ըսեն Մէտսէպ, հայ ժողովուրդին Մէտսէպն եմ ես: Հայոց պատմութիւնը նորածին պղտիկպարոն կամ պզտիկօրիորդ մը ըրած՝ պիտի ճչացնեմ մայրանոցի մը մէջ: Մտիկ ըրէք: — Ընդա՛յ, ընդա՛յ՝ եւ նայիս Հայոց տարիքոտ պատմութիւնը, մօրուսաւոր ծեփո՛ւկ պատմութիւնը, դարերուն ու աշխարհի ճամբաներուն ծայրին կարծես շնչասպառ եղած կորաքամակ պատմութիւնը երախայ մը եղեր՝ կը ճչայ մայրանոցի մը մէջ: Մեր ազգին ծերութեան ցուպը տասնըվեց տարեկանէն

առդին կոնակիս իլաւ, կապուտոցուց մարմինս, հողիս, արժանապատուութիւնս. պիտի զարնեմ զայն եւ կտորեմ մայրանոցի մը դրան երկաթներուն վըրայ: Կը տեսնէ՛ք:

Յետոյ՝

— Տէր—Չօրին դէմ մայրանոց, ծերութեան դէմ բոցամօրուս պատանի: Հակացեիս բարոյական, հակաձշուշ խօսակցութեան ասկէ ետք: Ազգային գիշեր ու գերեզման ըստածին դէմ մինչեւ վերջ կտի: Այսպէս՝ եւ յետոյ գիշեր, եւ յետոյ վարցոց, եւ յետոյ ուրիշ բաներ:

Ու յետոյ գինով բան մը եղաւ, լուսաւոր եւ անհանդարտ բան մը: Ելաւ տունէն դուրս: Օթոստարտին վըրայ կեցուց թաքտի մը եւ հրամայեց՝ — Անթիլիաս, Կաթողիկոսարա՛ն:

Պիտի ըսէր Վեհափառին.

— Բայց Վեհափա՛ռ Տէր, ես հայ ցաւին թա՛ մէտս... ճեղա՛յ, տասնկ բաներու մասին միայն մէ՛կ հօգի պիտի մտածէ, ե՛ս միայն. Լուսաւորիչին երկու տուններէն մէկը չէ՞ սարկաւ. ա՛յի, Վեհափառ, աղուո՛ր Վեհափառ, երանի սա պարզ Գրիգորը չըլլայի, կօշկակար Գրիգոր մը չըլլայի, բոպէ մը գոնէ էլ— լէիք աթոռէդ, եւ ես Լուսաւորի՛չ Գրիգոր ըլլայի. բոպէ՛ մը գոնէ:

Ու եթէ չկարենար ըսել, պիտի կըմկըմար գոնէ.

— Ե՛ս ալ Վիրապէ մը կու գամ...:

Վանքին բակին մէջ, Եղեռնին անհունները պարփակող անակին առջեւ, ծերութենէն եւ օսարութենէն փլած եպիսկոպոս մը, երեւի բաւական խուլցած, հրաժարած ալլեւ ուրիշին ձայնը լսելէ՝ տասն անգամ թերեւս Մէտսէպին փափաքը կրկնել տալէ ետք, ըստաւ.

— Որդի՛, ամէն հայ վիրապի մէջ է, բոլորը պիտի էլլեն վիրապէն, տուն գնա, Վեհափառն ալ այս պիտի ըսէ, Վեհափառները այսպէս կ'ըսեն:

Ու խորունկ զարայրի մը չՔաքարէն

ինկող հատիկ հատիկ բառերով.

— «Ոոննարհեցո՛ր, Տէ՛ր, զունկն քո ե լուր ինձ, զի...»

Մէսէսէպ քանի մը քայլ հեռացած էր արդէն ու չլսեց թէ ինչ ըսուեցաւ չարունակութեան մէջ: Հրաժարեցաւ վեհափառը տեսնելէն: Երբ վանքին դարպասէն դուրս կ'ելլէր, զպրեմանքի սան մը, խումբ մը ընկերներու մէջ— տեղ կեցած, բարձրաձայն զրարարով սեղ կարդար, մարգարէական շեշտ մը զնկոյզ ձայնին մէջ.

— «Մեծ եւ անեղ է օրն զատաստանի՛ն...»:

Մէսէսէպ ամուսնացած է: Ոտչոր ու բարտութիւններ եղած են տունին մէջ, ութ ամիս, ինը ամիս: Ուռած փորով, մեծ ու բարի աչքերով ուրբարտութիւն մը՝ Հայկուհիին, խոշորագոյն ցաւերով, իրիկունը հասած է մայրանոց: Իսկ Մէսէսէպ զեռ գիշեր մը առաջ տեսած եւ Հայկուհիին չպատմած երազի մասին կը մտածէ, սենեակին մէջ երթեւեկ ընելով:

Տարօրինակ երազ: Իրբ թէ Հայկուհիին մայրանոց տարուած է երազ տեսած գիշերը, եւ անկէ իրեն կը հեռախօսեն, հոն կը կանչեն զինք: Ճնշուած սրտով երբ մայրանոցին քով հասած էր, մայրանոցը անհետացած էր իսկոյն: Ուրբեանը աղչուակ մը իրեն ըսած էր թէ Հայկուհիին մեռած է: Գետ մը արցունք թափած էր ինք: Ու տեսած էր ապա, որ ինք կը մագլցի երկինք զպած սանդուխէ մը վեր: Քանի երկինք բարձրանար, վարը երկրին վրայ կը տեսնէր որ ծո՛վ առ ծո՛վ հայութիւն կը լեցուի պայծառ, անսպառ, անվախճան հայութիւն մըն էր ատիկա, բարձր լեբան մը շուրջի լանջերէն սկսեալ ալի՛ք ալի՛ք գէպի աշխարհի չորս կողմերը ծաւա-

լող, կայսառ ու կորովի ժողովուրդ մը: Կարծես լեռը կը խօսէր իր լանջերէն մըր՝ ջիւնի պէս բխող անհատնում ժողովուրդին, ու մարդիկ հաս հաս, ու բազմութիւններ ամբոխ առ ամբոխ՝ բարձր լեբան պատգամ առած՝ խոհուն ու քաջ տրամադրութեամբ մը կը տանէին զայն աշխարհի բոլոր ճամբաներուն, կեանքի եւ ստեղծագործութեան բոլոր ուղիներուն:

Իջաւ յետոյ լեբան բարձրագոյն զագաթին վրայ: Ու հոն տեսաւ որ մեծ ջուր մը անցած է ամէն կողմէ: Եւ տեսաւ, չքեղ, սպիտակ տապան մը: Ու տապանին վրայ դրուած էր ՄԼԽԱԿ: Եւ նաւի նմանելով հանդերձ տապանը՝ կը նմանէր նաեւ մաքրափայլ մարբանոցի: Ու լեռը աւելի երիտասարդ էր քան նկարներու վրայ իր տեսած Աւուրատը: Թերեւս Աւուրատին երիտասարդ հասակն էր ան՝ աւելի բարձր, աւելի սուր, աւելի արեւամօտ: Ու թերեւս ուրիշ բանի մը համար՝ աւելի չքեղ էր իր երանգին այդ լեռը: Այդպէս էր, այո՛, այդպէս: Եղաւ որովհետեւ տարօրինակ, խորհրդաւոր, սքանչելի բան մը: Մէկ ալ անսպառ հայութիւնը հաւաքուեցաւ վերտին բարձր լեբան շուրջ: Եւ լեռը եւս առաւել բարձրացաւ, կրկնապատուեցաւ կարծես: Այն ատեն տեսաւ որ դրկին մէջ կաթի ճերմակութեամբ նորածին մը կայ, ե ինք թեւ առած, հասած է երկինքի ծայրերուն, որմէ անդին ճառագայթապատ անհունութիւն մը փռուած էր: Ճշաց նորածինը՝ ընդա՛յ, ընդա՛յ: Այդ ձայնը զինք իջեցուց երկր: Խնդալիք բան մը եղաւ. երկու թեւերը երկարեցան նոյնիսկ հորիզոններէն անդին, ու կարծես իր երախային հետ եւ իր կնոջ հետ՝ ամբողջ երկարագունար սեղմած է կուրծքին ու կը մրմնջէ.

— Շնորհակալ եմ...:

ԵՒՈՒԱՐԴ ԳՅԱԶԵԱՆ



Ա Ր Ա Ն Ե Ց



Մեր յուսանեղ յաւերժութեան տեսիլքն ես դուն,
Ո՛վ աստուծոյ եւ վիհերու հօր աստուած,
Քեզ դիտելով կը զըրանութիւն մենք օր քան զօր,
Ու մեր պատումն է քեզ համար վեհակերտուած:

Պուն լեռ մը չես քան ինչ. այլ մեր իսկ արիւնէն
Քիւրեղացեալ ժայթ մը դէպի կամարն անհուն.
Զիւնըդ պակն է մեր անեղ պայտարներուն՝
Որ մեզ ազատ ու դարձուր կը հռչակեն:

Ո՛վ Վահագնի մենեան, ուր մենք ազօրամած,
Մեր յուսալիւ հայցումին մէջ բազկասարած՝
Ինչ կը սպասենք Արդարութեան յաղթանակին:

Մեծաւանայ քու ջրվէժներդ արցունքներ են.
Մայր կողերուդ վրայ տասակներն իսկ կ'արիւնին
Մեր վէրերէն, մեր կարօտն, մեր յոյսերէն...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՔ

ՍԻՐՈՑ ԵՒ ՄԵՂՔԻ ԷԱՄԱՆՈՒԱԳ

Ո Ս Կ Ե Մ Ա Տ Ա Ն Ե Ծ Ն

— Ա —

Գարնան գիշեր մը խաղաղ, լիպուսնին տակ շքեղ,
Մով ու ցամաք, շուրթ-շուրթի, կ'ընէին քաղցր զըրոյց,
Ճայերուն հետ ըսպիտակ՝ մեզմ' հովն եղաւ ուղեցոյց,
Դէպի ափունք նաւեցի, նուզփիւններով սիրագեղ:

Տարիներով քափառիկ եւ ծովաւեհն մը տեղ,
Տարփատենչիկ, խենթ ուսօրդ նայտոներու մշտախոյս,
Ուղեմուր տարագնաց կղզիներու ամառոյց՝
Նաւըս ափին կապեցի եւ այդ գիշեր լուսաւեղ:

Եղէզները մեզմածուփ սրբփացին սիրազոյզ,
Արմաւենին հեգանագ, ջերմ համբոյրի մը տոչոր՝
Եզաւ կանանչ առագաստ, խոստում՝ բօրփի, կեանքի մո՛ր:

Նարնգեմայն ծաղկափթիք շնչեցի բո՛յրը արբշիւ,
Կտհակներուն կաքնալանջ մռոցայ հեշտանքը պատիր,
Ըրի հա՛ղը ծըլարծակ կեանքիս կայան անյողողո՛ղ:

— Բ —

Եղանք հըզօր գինակից ընդդէմ կեանքին ու մահուան՝
Մարգարտայեռ դուն պատեան ու ոսկեշող եւ դաշոյն,
Ու քալեցինք քեւանցուկ, մեմք՝ համակ սէր ու ողբոյն,
Դէպի անհուն ուղղածի՞գ՝ լուսաաւարի մեր ճարման:

Եղան ծափերը ծնծղայ, շուրթերն՝ ազօքէ, շարական,
Ճանանչալար վին ու թառ՝ սիրտն այգադէմ մարդերուն,
Ու ոսկեհունչ գանգերը՝ քաղցրանըւ՛գ օրհնութիւն.
Միևչ հնչեցին, գերթ գուգերգ, քայլերը մեր յաղթական՝

Յ. ԳԵՂԱՐԿ

Ջոռ գառնուկին արեամբ քաց մինչև սեմը տրնակին,
Որ ցայգն ի վեր առանձինն, այլ վառած ջանն իր վրճիտ՝
Սիրապատար դուռն իր բաց՝ լուռ կը սպասեր մեր այցին:

Երբ մասներով ֆազրադող փակեցի դուռը ետիդ՝
Սիրտերը մեր սիրավառ եղան լապտեր կայմերուն,
Մահիճը՝ նաև ըսպիտակ, սիրոյ անա՛փ ջուրերուն:

— Գ —

Նըծոյցն այգուն կը դռփեր որմիս՝ սմբակն իր ոսկի,
Կ'այեհասէր, քիւիս տակ, սըրինգն արծաթ հովերուն,
Տընակս ուսին էր դրեր բիւրեղ խարոյկ մ'արեւի՝
Կեանքին դիմաց եւ լայսին երբ բացի դուռն իմ ժըպտուն:

Միսերուս մէջ դեռ կ'անէր քմերն անա՛յշ, ցընորո՛ւն,
Բայց չէր մընար փերթ մ'իսկ վարդ շըքեղ տօնէն երէկի,
Լուսափրթիք ո՛չ կամար, ոչ իսկ քընար մը ցնծուն...
Անհետ մեկնեք, հեռացեք էին դէմքեր սիրելի:

Երկինքն անծա՛յր էր: Շուրջի՛ պայտէզն ամայ ու խոպան,
Արեւուն տակ, տան սեմին, կանգնած միմա՛կ, դուն ու ես...
Կ'անցնէր ճամբէն, հացի սով, մարդ մը նըկուն, տխրեքես:

Վերցուցի բահ ու բըրիչ, գարկի հողի մուք սրտին,
Բերիւր ցնցուզ առ ցնցուզ լուսաշիք ջուր ակօսին,
Ու խորն աչքիդ, ցնծագին, տեսայ ծիլերը վազուաւն:



ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻՆ

Տ Ղ Ա Ն

Նախորդ օրերուն պէս Հինգշաբթի դարձեալ անորամադիր եկաւ տուն, Ուրբաթ նոյնպէս ու Շաբաթ իրիկուն տան ընթացիկ ծախքերուն յատկացուող դումարը զեղչած յանձնեց կնոջ: Ապա ջղային շարժում մը ըրաւ: Հառաչեց: Վառեց սիկառէթ մը:

Իր շաբաթականին սակը ծածուկ պահելու սովորութիւն մը ունէր ժապ, իսկ յաւելեալ ժամերու ստանձնած աշխատանքներուն վարձատրութիւնը բոլորովին հակահշոէ դուրս կը ձգէր իր շահը: Իր շահուն հետ յաւելում եւ նուազում կը կրէր տան յատկացուելիք դրամը: Կինը վարժուած էր այս ելեւէջներուն եւ ամուսինին տուած դումարին համաձայն կը կազմէր տնտեսական իր յայտագիրը: Այսպէս ապրած էին վեց տարի շարունակ, իրենց ամուսնութենէն ասդին: Կինը բնաւ չէր դանդատած: Եւ կամուտի պակասը երբեք այսքան չէր աղղած ժապին վրայ: Առաջ կը պահէր իր պազարիւնութիւնը, կը խօսէր, կը խնդար, լաւատեսութիւնը չէր կորսնցընէր: Փոխուած բան մը կար անոր մէջ, ամէն ինչ տակնուվրայ դտաւ Ազնիւ: Մտահոգուեցաւ: Ուզեց բաժնել ամուսինին հոգեբը: Բարութեամբ մօտեցաւ անոր: Առաջին օրը ժապ ջղային բացապանչութիւնով մը փակեց խնդիրը: Երկրորդ օրը նորէն պոռաց, երրորդ օրը իր խոժոռ դէմքով հարցում ընելու համարձակութենէն զրկեց կինը ու յաջորդող օրերուն շարունակեց պահել իր ջղային վիճակը: Գուգար տուն, կը հայհոյէր գործին, կ'առանձնանար ու կը ծխէր անընդհատ:

Գրեց՝

Պ Օ Ղ Ո Ս

Ս Ն Ա Պ Ե Ա Ն

...

.....

Երեսունին մօտ, բարձրահասակ ու վայելչակազմ մարդ մըն էր Ժազ եւ կը ննջական պայուսականբու վրայ աշխատող առաջին կարգի արհեստաւորներէն մէկը կը հաշուրուէր: Մարդարեանի աշխատանոցին մէջ սորված էր արհեստը եւ տարիներէ ի վեր չոն կ'աշխատէր: Կը սիրէր հիւր ընդունիլ, հիւր երթալ, զուարճանալ, զուարճացնել ուրիշները: Այսպէս ճանչցած էր զինք Ազնիւ, այսպէս էր միշտ, ամուսնութենէն առաջ, ամուսնութենէն վերէր, այլ հիմա կը պտտիք բոլորովին հակառակէս երկուոյթի մը առջեւ: Տխուր, խոժոռ մարդ մը կար հիմա դիմացը: Հարցումներ չէր ընդուներ, անշան պատճառով մը կը ջղայնանար, կը պոռար մեծ տղուն շարժումներուն ի տես, կը գայրանար պզգտիկին ճիշտուն ի լուր:

— Ի՞նչ ունիս, Ժազ, ինչո՞ւ այսքան շատ կը ջղայնանաս:

— Դուն քու գործերուդ խառնուէ, կը պատասխանէր Ժազ ու կը քաշուէր մէկ կողմ, կը հայտնէր աշխարհի, մարդոց, գործին ու ինքնիքին մուտալով կ'առանձնանար իր սենեակը:

Ազնիւին ճանչցած մեակ տղան էր Ժազ, առաջին սէրը, երջանկութեան ազբիւրը, ամէն ինչը: Անոր հետ, իր կեանքը, առաջին մէկ վարկեանէն եղած էր քաղցր օրերու շարք մը: Սկզբնական շրջանին, ունեցած էր վառի պահեր, մտահոգութիւններ, անբուն անցուցած գիշերներու յիշատակներ, բայց այդ բոլորին մէջ Ժազը դեր չունէր, մայրը ունէր: Աղքատ ընտանիքի աղջիկ էր Ազնիւ, ուսումը քիչ, պզտիկ, անփորձ: Մայրը կը թուէր ասոնք ու կ'ընդգիտմանար տղուն որոշումին: Կացութենէն բան չփոխուեցաւ ասկայն: Խոռովեցաւ միայն երիտասարդ աղջկան սիրտը, վիշտ խառնուեցաւ հովուերգական ասպրումներուն մէջ, ատեն մը պզգտորեցաւ երջանկութիւնը: Ժազ չազգուեցաւ եղած առարկութիւններէն, խա-

ղաղեցուց Ազնիւը եւ անուն ու դիրք ու նեցուղ աղջկիներուն մասին մօր հիւսած երազները քանդելով՝ սիրտը աղջկան հետ զնաց եկեղեցի:

— Ես ի՞նչ կրնայի ընել, ինք սիրեց, ինք առաւ. աշխարհ ասանկ է հիմա, կ'ըսէր մայրը ինքզինքը պարտադրել ուզող, այլ իր առջեւ անտարբերներ միայն պտած հոգիի մը խորունկ զժգոհութեամբ: — Հանգուցեալը պիտի ըլլար որ: Յիսունը անց կին մըն էր Ժազին մայրը, լեցուն մարմնով ու պատկառանք աղդող հեղինակութիւն մը: Կը զուրգուար առողջութեան վրայ, մազկրուն մէջ ինկած ճերմակը ներկով կ'անհետացընէր, կը սիրէր լաւ հագուել, երիտասարդ երեւալ, մարդոց ուշադրութենէն չվրիպիլ: Արարփիայի արեւեկեան զառիթափին վրայ, ամուսինին կենդանութեան վարձուած տան մէջ իր հմայրը դօրացուցած կին մը, որ մեծ յարգանք կը վայելէր հիւրերուն մօտ: Ժազ այդ տան մէջ երիտասարդ եղած էր: Այդ տան սեմէն առաջատու մտած էր Ազնիւ եւ մայր եղած երկու մանչերու: Մեծը հինգ տարեկան էր արդէն ու փոքրը ըսկըսած էր ոտքի ելլել եւ բառեր թոթովել: Ազնիւ ինքզինքը երջանիկ զգացող հոգիի մը զուարթութեամբ ներս մտաւ տունէն, իր պարտականութիւններուն լրիւ կատարումով նուազագոյնի իջեցուց կեսուրին արտունջները եւ Ժազին վիշտ չպատճառելու իր թծախնդրութեամբ՝ յաջողեցաւ ստեղծել խաղաղ ու գորովալի մթնոլորտ մը իր շուրջը:

Իր խաղաղութիւնը վրդոված էր հիմա, գորով՝ պակասած եւ Ժազին խոժոռ ակնարկներուն առջեւ կ'ապրէր խորունկ անձկութիւն մը: Հարսութեանէն ասդին առաջին անգամն էր, որ ինքզինքը առանձին կը գզար Ազնիւ, վիշտ կը մտնէր իր կեանքին մէջ, ամուսինին եւ իր միջեւ ստեղծուած զաղտնիքի մը անտանելի բեռը կը զգար:

Ամառը սկսած էր արդէն երբ Ժազ դրամը պակսեցուց, խօսիլը դադարեցուց եւ գիշերները ուշ զարու սովորութիւնը

որդեզրեց: Պատկերները պատկեցնել հողք, Ազնիւ կը նստէր ննջարանի պատուհանին առջեւ եւ տխրօրէն կը դիտէր Ալէյէն Սանին երկարող լեռնաշղթան, Անթիլիասի ծովախորը, գիւղերուն լուսերը, բայց չէր յաղոգիր մտածումը կէտի մը վրայ կեդրոնացնել, կը վերադառնար իր անձկութեան ու կը խրէր պատճառը անստոյգ իր տխրութեան մէջ: Հեղձուցիչ տաքը երբեմն կը խոզիկը պզտիկներուն հանդիսը: Կը հանգստացնէր զանոնք եւ նորէն կուզար նոյն սեղը, կը նայէր շորս դին, քան մը կը փնտռէր, փնտռումը չէր զտնէր եւ կը զգար, որ ունեցածէն քան մը կը փախչի: Այս մտահոգութիւնը ուրիշ մտահոգութեան մը ծնունդ տուաւ մէջը, յիշեցուց իրեն զաւակներուն պարագան, նոր ցաւ մը: Փոքրը ամառանոցի պէտք ունէր, իսկ Ժազին ընթացքը բոլորովին կը քայքայէր մեծին մասին ձմեռուան շրջանին շինած իրենց երազները: Վերամուտին լաւ դարոցի մը մօտ գեղեցիկ տուն մը պիտի վարձէին եւ Սագօն դէպրոց պիտի երթար: Ամառանոց երթալու եւ քաղաքին մէջ նոր տուն մը վարձելու երազներէն յուսահատելէ հաջող ներքին խաղաղութեան մը ծարաւով կը պայակէր Ազնիւ եւ դուրդորանքի կարօտ մը հետզհետէ կը մաշեցնէր իր երիտասարդ սիրտը:

Այս անձկալի օրերուն, առտու մը, Ժազ տունէն դուրս ելած ատեն պատուիբեց, որ պատրաստուին ամառանոց երթալու: Հասկցուց, որ Տուարի մէջ տուն մը վարձած է: Ուրիշ մանրամասնութիւն չտուաւ: Գնաց:

- Մատաղ ըլլած իրեն, մարդ է, էրիկ մարդ, ճիշտ հանգուցեալ հայրը, ըսաւ մայրը թրքերէն եւ Ազնիւին աչքերուն մէջ ուղեց տեսնել իր խօսքերուն անդարդաթճը:

Տղուն որոշումը իմանալէ հաջող հրճուանքը անպակաս եղաւ աչքերուն մէջ: Պերճանքը սիրող կին մըն էր Ժազին մայրը եւ ամառանոց երթալու մեծագոյն վայելքներէն մէկը կը համա-

րէր: Թեթեւ ուրախութիւն մը եկաւ քաղաքի անունը նաեւ Ազնիւին սիրտը: Շատ երազներ կապեց նոր շրջապատին:

Կանանչազարդ ձորի մը նայող տուն մըն էր Տուարի իրենց բնակարանը՝ շրջապատուած հայ վարձակալներով լեցուած քարաշէն շէնքերով: Կեսուրէ առաջին մէկ օրէն ծանօթութիւն հաստատեց դրացիներուն հետ եւ ամառանոցին պարզեւած հանդիսաւոր հպարտութեամբ սուրճ խմելու հրաւիրեց զանոնք, սուրճ խմելու դնաց, զրոյցի նստաւ եւ պտոյտի ելաւ անոնց հետ: Սագօն իր կարգին տարեկիցները զտաւ եւ մօտակայ անասնաւորին մէջ վայելեց անասնաման ազատութիւն մը: Ազնիւ փոքր մանչուն հետ տուն մնաց, խոհանոցով զբաղեցաւ եւ իր սրտին եռուզեռը մտիկ ըրաւ: Առաջին օրերուն կէ խորհէր, թէ Ժազ մէկն տարուայ պէս այս ամառ ալ կանուխ պիտի վերադառնար գործէն եւ ճաշը միտսին պիտի ընէին: Բայց Ժազ շարունակեց ուշ գալ տուն: Այնպատանքի հին օրէնքին ջնջումը յիշեց, նորէն օգտուեցաւ, հայտնից վարպետին, աշխարհին, մարդոց: Գործին շատութեան եւ վարձատրութեան ատեն վարպետին հանած տաղտուկին կը վերադարձրէր Ազնիւ Ժազին մտալութիւնը: Այս տպաւորութիւնը պզտիկ հանգարտութիւն մը կը բերէր սրտին, ինքզինքը պատճառ համարելու ցաւապէս մտահոգութիւնը կը հեռանար իրմէ պահ մը, բայց շուտով կը յանձնուէր միեւնոյն մտատանջութեան:

Ամառանոցի հովիբը բան մը չլիք խեցին Ժազին ներքո: Օրըստօրէ ան աւելի կը խոտանար, մայրը՝ սկսած էր հետեւել սղոյն: Այս վերջինը շատ չէր մտահոգեր Ազնիւը, ամուսինին խորթ ակնարկները սակայն սուրի պէս կը մըլտուէին սրտին: Կարծես բնաւ չէր սիրուած անկէ, քաղցր խօսքեր չէին ըսած իրարմ, մտերիմներ չէին եղած: Ազնիւ վերստին կ'ուզէր մտնել անոր հողիին մէջ, չըսցնել տառապանքը, վերադար-

ձընել զուարթութիւնը: Ամուսինին սիրած կերակուրները անպակաս ըրաւ սեղանէն, ժազ կրկին դէմքը ծամածոկեց, անոր հաւանած հաղուստները հագաւ, աչքերը չպայծառացան, բոլորքը գործածեց՝ անտարբեր մնաց նորէն:

— Ի՞նչ ունիս ժազ, ինչո՞ւ չես խօսիր, ինչո՞ւ այդպէս կը նայիս, կրկին հարցուց Ազնիւ երբ լուս դործունէութիւններուն յուսահատական արդիւնքին առջեւ դտաւ ինքզինք:

— Ձիս անհանդիստ մի ընեմ, ըսաւ ժազ կտրուկ:

— Մարդը անհանդիստ մի ընեմ, աղչարարեց կետուրը:

Ազնիւ անհանգիստ չըրաւ մարդը: Ելաւ դուրս: Կրաւ էր գիշերը եւ լեռնային հովուն հակադեղութիւնը զորաւոր՝ իր այրող դէմքին վրայ: Բանի մը չկըրցաւ կառչի մտաքը: Ելաւ ոտքի, կրօթընցաւ ծառին, լսեց դարձեալ ամուսինին ու մօր փափուտքները: Կարծես դաւադրութիւն մը կը պատրաստուէր իրեն դէմ: Ամուսինին ծնողքին մասին լսած կէս բերան շուկկները հետզհետէ սկսաւ տեղ գտնել մտքին մէջ և մօր ու որդւոյն միջեւ խորացող մտերմութիւնը առաւել եւս անեցուց իր անձկութիւնը: Ժազին հայրը արագ հարստանալու տենդով ձեռնարկած իր վերջին գործին հետեւանջով բանտ տարուած եւ հոն ծեծի տակ ու մահուան դնով յաջողած էր մեծ կտակ մը ժառանգ ձգել: Կտակը կուուանձոր դարձած էր առաջին ամուսնութենէն մնացած աղկան եւ երկրորդ կնոջ միջեւ: Կինը բաժին չէր հասած ամուսինին աղկան, աղջիկը կ'ատէր հօր կինը: Դադրած էին իրարու բարեւ տալէ:

Ազնիւ լսած էր այս բոլորը, բայց չարժաոքիքներուն հաւատք չէր ընծայած: Սկսաւ ընծայել: Երկուն ընող բոլոր զորոյցները հետզհետէ մերկացան իրենց խորհրդաւորութիւններէն եւ իրական պատկերներու վերածուեցան իր մտածումին մէջ: Երկիրտով լեցուեցաւ հոգին: Վասիւր մտերմիմ մը կարօտը ըզ-

ղացուց իրեն, Փնտեց մէկը: Զհամարձակեցաւ անուծի մը զիմաց կանգ առնել, իր վերջին օրերը հաշուող մայր մը ունէր միայն աշխարհի վրայ եւ զթութեան կարօտ եղբարքի մը:

Ամառանոցի այս տառապազին եղանակը չէր վերջացած տակաւին, երբ օր մը, ճիշդ կէսօրին, եղբայրը յայտնուեցաւ եւ իմացուց մօրը յեղակարծ հիւանդութիւնը: Փափաքած էր աղջիկը տեսնել: Ազնիւ շտապեց: Տուն հասած ժամուն, մօր տաղանապը անցած էր և անկողնին մէջ նստած՝ հանդարտօրէն կը խօսէր: Ուզեց որ աղջիկը քովը մնայ, պէշերը չբաժնուի իրմէ: Համաձայնեցան: Պէտք էր ժազին իմացնել որոշումը: Եղբայրը վարի խանութէն հեռաձայն բացաւ գործատեղին: Ժազ սովորականին պէս դորձը աւարտած էր ու կէսօրին մեկնած: Լուրը ցնցեց Ազնիւը: Ինք իջաւ վար: Մարզարեան զարմանալի դտաւ Ազնիւին ըրած հարցումները. Ազնիւ զարմացաւ Մարզարեանի տուած պատասխաններուն ի լուր: Զարցուցաւ յետոյ: Աշխատանոցը կը պահէր ամառնային իր կառնը: Կէսօրէ վերջ ո՞ւր կը մնար ուրեմն ժազ, ո՞ւր կ'ըրթար, որո՞ւն հետ կ'անցնէր ժամանակը: Վայրկենանօրէն նոր իմաստ մը տուաւ անոր հազուստ կապուստին, չարիկներուն, տարատներուն, կոչիկներուն անող թիւերուն: Ամէն օր նոր յարգարանջով մը կ'ըրթար գործի, գործէն կը վերադառնար դէմքն ու մազերը բծախնդիր հոգածութեան մը երթարկած: Յիշեց այս բոլորը, բայց պատճառը խուսափեցաւ իրմէ դարձեալ: Ելաւ վեր: Ձեղեղալ համարեց մօրը մօտ մնալու որոշումը եւ հրաժեշտ տալով մեկնեցաւ:

— Ո՞ւր է իր մինչեւ հիմա, պոռաց ասպտամբ ձայնով մը, երբ ժազ սովորականին պէս տուն եկաւ գիշերը:

— Կը բաւէ, գոռաց ժազ, զգուեցանք այս հարցումներէն, կը բաւէ ալ, ըսաւ ու սկսաւ գործին մասին խօսել, վարպետին հայրոյն:

— Գործատեղին չէիր, ոչ, փնտռեցի

քեզ, դուն սուտ կը խօսես :

Ժառ ցնցուեցաւ մէկէն : Ազնիւին անակնկալ մեկնումէն լուր չունէր : Կինը մանրամասնեց, ինք՝ գոյնը փոխեց : Անցաւ լուսացարանին կողմը : Խօսեցաւ ինքնիբնէն : Կրկին հարձուցեց աշխարհին, օճառը դետին դարհուս ու ետ գառնալով հեղճեց :

— Ո՛ր էիր, ո՛ր մնացիր : Ո՛ր պիտի մնայի, քու ծառայութեանդ մէջ զարձեալ, նոր տունը մաքրել կուտայի, որ վայելեա :

— Ո՛ր տունը :
— Նոր տուն վարձեցի, որ դազրիս զլուխս ցաւցնելէ :

— Նոր տո՛ւն, զարմացաւ Ազնիւ : Առանց ինծի ինչպէ՞ս նոր տուն կը վարձես :

— Դուն իմ զործերուն մի խառնըւի :

— Դուն մարդուն զործերուն մի խառնուիր, խտացաւ կեսուրը :

Եղանակին վերջաւորութեան, Կիրակի մը, առտու կանուխ, ամառանոցէն ուղղակի նոր տունը փոխադրուեցան : Տօրայի վերջաւորութեան, նարնջենի պարտէզի մը եզրին նորակառոյց շէնքի մը երկրորդ յարկն էր : Կեսուրը հեղ մը քննեց սենեակները եւ աճապարեց դարձեալ տղան գովել :

— Մարդ է, մարդ, ճիշդ հօրը պատկերը :

Նոր տունը իր արտաքին երեւոյթով զարմացուց Ազնիւը եւ Հիւրանոցի կահաւորումին ի տես ուղղակի շքեցաւ : Հարուստ տեք մը ունէին թիկնաթուները, ապակեպատ սեղան մը զբաւած էր կեդրոնը եւ անկիւններուն զետեղուած սիկառէթներն ու ծաղկամանները միւսներուն հետ կը կազմէին Հիւանալի ամբողջութիւն մը : Տասնհինգ տարեկանէն ասդին, լման տասը տարի, Ալչնի երազած էր իր տան մէջ ունենալ այդ բոլորը : Երազը իրականութիւն դարձած էր Հիմա, այլ այդ իրականութեան մասնակից չէր իր հոգին : Խորթ

բուն մը կը տեսնէր այդ նորութիւններուն մէջ, վանողական հրապոյր մը : Անգամ մը եւս ձախ պատին վրայ տարածուած գորգին նայեցաւ ու իր միտքը նորէն անցեալին գնաց, այն լաւ օրերուն, երբ ամէն ինչ ժադին հետ միասին կ'առնէին, երբ իր կարծիքը կը հարցուէր, ճաշակը յարգ ունէր : Կ'ուզէր ըմբռնել ժադին ըրած այս ինքնագլուխ կարգադրութիւններուն բուն շարժառիթը : Ձէր յաջողեր : Կը նայէր նոր բերուած առարկաներուն ու իրեն այնպէս կը թուէր, թէ ինք հիւր մըն է անոնց մէջ :

Ամառանոցէն բերուած Հին զոյքերը միւս երկու սենեակներուն մէջ տեղաւորեցին, տան մաքրութիւնը վերջացուց, հեղ մը եւս սրբեց ապակիները եւ ելաւ պատշգամ երկաթէ ձողերուն փոշիները աննլու : Քուլտի պատշգամէն զէր ու միջին տարիքով կ'ին մը ժպտեցաւ իրեն, զլիսով բարեւ տուաւ, յետոյ ծօտեցաւ աւելի եւ փոշիին անպատեհութիւնը առաջ քշելով յարողեցաւ խօսքի բռնել Ազնիւը : Զուսակներուն թիւը հարցուց, Անուիին մասին հետաքրքրուեցաւ, իրենց ամուսնութեան թուականը հասկցաւ եւ ապա ժպտելով յարեց :

— Զարմանալի է, ես կը կարծէի, թէ պարոն ժառը նոր նշանուած է եւ ամուսնանալու կը պատրաստուի :

— Նշանուած, հարցուց Ազնիւ ինքզինք կորանցուցած :

— Ի՞նչ գիտնամ : Աղջիկ մը մօրը հետ կուղար եւ ժադին հետ միասին կը ճողկին նոր զնուած զոյքերուն տեղերը : Ի՞նչ գիտնամ, ձեր ազգականը ըլլալու է :

— Աղջիկ մը մօրը հետ, հարցուց Ազնիւ զպուռած կատաղութեամբ :

- Այո, աղջիկ մը մօրը հետ :
- Ինչպէ՞ս մէկն էր աղջիկը :
- Քսան տարեկան կար, քիչ մը լեցուն մարմնով, թուխ ու մազերը երկար :

- Անո՞ւնք :
- Անո՞ւնը : Կարծեմ Լուսին :

– Լուսիբ՝ն:

– Բայց ինչո՞ւ կը զարմանաս, Հարցուց գէր կինը հետաքրքրութիւնը աստիճան մը աւելի սրած:

– Անունը Լուսիբ՛ն է քսիք, Հարցուց նորէն Աղնիւ կմկմալով:

– Անպայման օրիորդ Լուսիբը ձեր ազգականը չէ, անպարեց իր կտակածը հաստատել դրացիքն:

Այդ պահուն Աղնիւին կեսուրը բացաւ պատշգամին դուռը եւ ընդհատեց երկու նոր դրացիներուն խօսակցութիւնը: Աղնիւ ներս մտաւ: Մտքինը կը դողար: Ոտքերը չէին հնազանդիք կամբին: Դրացի կնոջ տուած տեղեկութիւնը տհաճոր տեսարաններ բացին իր երեւակայութեան առջև: Ամէն ինչ յտակ երեցաւ աչքերուն առջև, ամէն ինչ պղտոր՝ մտածումին մէջ: Ժապ այդ աղջկան զոհած էր իր ժամանակը, շահը, զուարթութիւնը, խօսելու, կատակելու հաճելի սովորութիւնները եւ իրեն բերած էր մտայլ դէմք մը, կուշկ սիրտը, խոժոռ նայուածքը, անտարբեր հոգիքն: Խոհանոցը տակնուվրայ էր, սիրտ չունեցաւ կարգի դնել իրերը: Նոս դարձաւ: Միջանցքի պատէն կախ հայելիին մէջ դժուարաւ ճանչցաւ ինքզինքը: Փոթորկեցաւ կրկին: Լսեց բանալին ձայնը: Քայլ մը առաջ անցաւ ու ցցուեցաւ ամուսինին դիմաց:

– Կ'ուզեմ հասկնալ թէ ո՞վ է Լուսիբը, պոռաց յանկարծ:

– Լուսիբ՛ն, կակազեց ժապ անակրեկալի եկած:

– Ո՞վ է այդ աղջիկը, զոռաց կըրկին:

– Դուն գործերուդ խառնուէ եւ լուէ, վճռեց ժապ ինքզինքը գտնելով:

– Դուն զու գործերուդ խառնուէ ու լուէ, երկրորդեց կեսուրը:

Աղնիւ չլռեց այս անգամ: Գոռաց, սպանաց, լսածները թուեց, աղքատորութիւններ ըրաւ ու երբ երկու զինակիցները զինք առանձին ձգեցին, ննջարան մտաւ ու պարպեց սիրտը:

Ժապ հեւրանոցի թիկնաթոռին մէջ

Թաղուած կը մտածէր: Մայրը մօտացաւ ու բաներ մը փսփսաց ախանջին եւ ուղղեցաւ խոհանոց: Մօրը փսփսուրը կատարութիւն բերաւ իրեն: Տճգունեցաւ աւելի: Իրենց դրացի պատշգամին նայելով հայհոյանք մը մտայաց: Պատուահաննէն ու պատշգամէն զինքը լրտեսելով ամբողջ ամառը անհանգիստ ըրած էր զինք այդ կինը ու հիմա իր հաւաքած տեղեկութիւնները հաղորդելով կը շարունակէր սիրտը խոռովել: Ելաւ պատշգամ: Վայրկեան մը ետք նորէն ներս խուժեց: Աչքին զարկաւ խոհանոցին անկիւնը դրուած ուխտիկի հին շէր: Քամեց անոր բովանդակութիւնը դաւաթին մէջ: Վառեց սիկառէթ մը: Խմեց: Միեց: Մայրը վերջացուց ճաշի պատրաստութիւնը: Փորձեց բան մը ուտել: Կոկորդէն բան չիջաւ: Նորէն պատշգամ ելաւ, հառաչեց կրկին, հայհոյեց եօթներորդ անգամ:

Թիկնաթոռին մէջ, ժապ փորձեց իր մտածումները դաստարել: Յանկարծ լոյս մը ծագեցաւ մտքին մէջ: Գայծառութիւն մը իջաւ սրտին ու աչքերը նոր փայլով մը զուարթացան: Փառտեցաւ միտքը պղտորող նոր մշուշը ու զբքջաց:

Ճիշդ այդ պահուն ներս մտան Աղնիւին մայրը, եղբայրը, եղբոր կինը եւ Սապոյին տարեկից աղջնակը: Ժապ խանդավառ աղմուկով մը ընդունեց բարեգալուստի եկած հիւրերը: Ժամանակ չտուաւ անոնց Աղնիւին մասին հարցում ընելու: Կնոջ զգացումները շոյող բարձրաձայն արտայայտութիւններ ունեցաւ եւ փաղաքշական խօսքեր արտասանելով շտապեց ննջարան: Մօտեցաւ կնոջ: Եռոյց մազերը,, ձեռքը պտտցուց երեսներուն վրայ, բառերուն մէջ զուրդուրանք զբաւ եւ սպա խնդրեց, որ մոռնայ եղածը, մպտի, ինքզինքը ուրախ ցոյց տայ: Ժապին յանկարծակեան այս կերպարանափոխութեան առջև անակնկալի եկաւ Ագնիւ եւ ուրախութիւն մը ծագեցաւ հոգիին մէջ: Վերջին կուրիւն, իր անդիլող ընդդէմութեան, սպանալէքներուն բարեբար արդիւններ համարեց այս բարեփո-

խուժիւնը եւ տեղի տուաւ շուտով: Կը սերէր ժազը, իր առաջին ու միակ տէրն էր անկա, պէտք ունէր անոր շնորհքին, գուրգուրանքներուն, իր ներքը կուտակուած ցուրտը վաճող կրակներուն:

Միասին ելան դուրս: Ողջագորուեցաւ Հարապատներուն հետ: Համարուրեց եղբոր աղջնակը: Փայլ ստին աչքերը: Յնծուծեան մէջ էր հոգին: Ժազ մէկ վայրկիանէն միւսը եղած էր անցեալին մէջ ծանօթ մարդը, ոգմկարար, Ժպտուն, զուարճաբառ: Հանճարուր գրուազներ կը պատմէր, Ազնիւն սնունդը կուտար, Հարցումներ կ'ուզէր, կարծիքը կը հարցնէր: Ազնիւ երազի մէջ կը զգար ինքզինք, իր ուարճութեան մէջ սեւ երազ մը կը թուէր իրեն իր կեանքին մուկ շրջանը կազմող անցնող սամառը:

Ժազ թոյլ շտուաւ, որ երեկոյան կանուխ մեկնին Հիւրերը: Անմիջապէս սեղան մը սարքեց: Գարեջուր բերել տուաւ, պզտիկները նոր խաղալիքներով ուրախացուց: Յաջողեցաւ ստեղծել զւարճ միջոցութեամբ: Մինչեւ ուշ գիշեր կերան, խօսեցան, զուարճացան, բաժաններ պարպեցին իրարու կենդանութեան: Հիւրերուն մեկնումէն յետոյ, Ժազ հեռանալու նշան մը ըրաւ ձօրը, կանչեց Ազնիւր խոհանոցէն, տուաւ անոր կիսով լեցուած բաժակներէն մէկը եւ առաջարկեց խմել իրենց վերագտած երջանկութեան Համար: Մայրը դիտեց տեսարանը եւ խորամանկ ծայրտով մը քաշուեցաւ ներս:

Ազնիւ խոհանութիւն Համարեց իր լսածները կրկին չիլիջներէլ Ժազին եւ եռանդով սկսաւ տունը եւ խոհանոցը վերըտին կարգի դնել: Նոպայ մը, շար երազ մը կը համարէր իր տառապանքի շրջանը եւ լռելեայն փառք կուտար Աստուծոյ: Գործերը աւարտելէ ետք, հոր ննջարան մտաւ, Ժազին աչքերը զոցուած էին արդէն եւ խաղաղութիւն մը իջած դէմքին վրայ: Զգուշութեամբ մարեց լոյսը:

Վերագտած երջանկութեան ուժգ-

նութենէն ետք մարմնի անհանգստութիւն մը շարունակեց արթուն պահել Ազնիւր: Հետզհետէ ծանրացաւ ցաւը: Ժազ հանդիստ կը քնանար: Զուգեց խոռովի զայն: Գալարուեցաւ, կծկուեցաւ ինքն իր մէջ ու երբ ցաւին դիմադրելու կամքը դաւանանեց իրեն՝ պիտակցութիւնը կորսնցուցած էր արդէն: Ոչ ոք լսեց իր ճիշերը ու ինք բնաւ չիմացաւ այն ողբերը, որոնք արշալոյսին իր հոնդիւններուն աստիճանական նուաղումին հետ բարձրացան եւ շրջապատին մէջ իուճապ ստեղծեցին: Յաւագին ճիշեր, լացուկոծի աղաղակներ, օգնութեան կանչեր իւրար կը խաչաձեւէին տան մէջ, պատըշաճմանն ու պատուհանները լեցնելով գիշերազգեստ հետաքրքրներով: Այդ պահուն Ժազ վար խոյացաւ մէկէն ու վազեց մայր պողոտային ուղղութեամբ: Գրացիներէն ոճանք վեր բարձրացան, ուրիշներ վերի յարկերէն վար իջան: Ազնիւ կռնակին վրայ երկնցած՝ իր ուժեղութեան վերջին լարումով կը կուռէր մարմինը բզբզող ցաւերուն դէմ: Կը ցնցուէր մերթ, ձեռքերը պատին կը զարնէր, կը հոնդար պարբերաբար: Կեսուրը ձեռքերուն մէջ կը ճզմէր Հարսին երակները, եղած Հարցումներուն կ'աշխատէր պատասխան գտնել, դէմքը հիւանդին անկողնին մէջ կը թաղէր, լալու փորձեր կ'ընէր շարունակ: Կին մը վազեց քաջախ բերելու: Պառաւ մը ձեռքով ջերմութեան աստիճանը ուզեց հասկնալ եւ դիտու յուսահատական շարժումով մը մէկ կողմ քաշուեցաւ: Պահ մը վերջ Ազնիւ նուազեցուց հոնդալը, դէմքին դիմերը վերագրածան, սկսաւ խաղաղիլ:

Ժազ խուճապահար վերագարձաւ, հտեւէն՝ բժիշկ Լեւոնեանը, Բժիշկը հիւանդին դէմքը դիտելէ ետք՝ անապաւրանքով քացաւ պարուսակը ու երբ ասուղը ձեռքին ետ դարձաւ, Ազնիւ կը քընանար այնպիսի ջուճով մը, որուն ասոջնու գիտութեան մարդերը, միւս բոլոր մարդերուն պէս կը խոնարհին ու կը լըռեն:

- Ինքզինքը մեռցուց, տունս քան-

զեց, կ'ըսէր Ժազ հեկեկալով ու կը յիշէր
եւ կը յիշեցնէր վերջին գիշերը, իրենց
երջանկութիւնը, համերաշխ կեանքը:

Յուզումը զսպած մէկ պահուն Ժազ
նկատեց շուրջը խոնոտածներուն մէջ ծա-
նօթ երիտասարդ մը, Յովհաննէսը: Մօ-
տեցաւ անոր եւ խնդրեց, որ երթայ եւ
Լեւոնեանէն առնէ մեռելին վերաբերող
տեղեկագիրը: Յովհաննէս աճապարեց:
Տեղեկագիրը պատրաստ չգտաւ սակայն:
Իժիշկը յայտնեց, որ հիւանդը քննելու
առիթ չէ ունեցած ինչ եւ մեռելին տիրոջ
տուած պատճառներուն վրայ հիմնուե-
լով՝ ի վիճակի չէ տեղեկագիր պատ-
րաստելու: Նման պարագաներու մեռե-
լին վերջին քննութիւնը եւ մնացեալ ձե-
ւակերպութիւնները կատարելու պար-
տականութիւնը քաղաքապետութեան կը
պատկանի:

— Ոչ, ոչ, շարունակեց Լեւոնեան
գլուխը օրօրելէն, տրուած տեղեկու-
թիւնները բաւարար չեն վիժումի մը հե-
տեանք համարելու համար այս զբժ-
բախտութիւնը:

Յովհաննէսին մտքին մէջ տեղ չըրո-
նող օրինակն ու բժշկական ուրիշ ման-
րամասնութիւններ ալ թուեց բժիշկը ու
եբր երիտասարդը կը պատրաստուէր
մեկնելու, յարեց:

— Եղելութիւնը քաղաքապետութեան
իմացուցած եմ:

Յովհաննէս վերադարձաւ: Իժիշկին
տուած տեղեկութիւններուն խորհրդա-
ւորութիւնը կասկածով լեցուց միտքը,
կասկածը խոհմբ դարձնուց զինչ ու տան
մեկնուել մէկ անկիւնին մէջ տուաւ Ժա-
զին իր զեկուցումը: Անմիջապէս զգաց
իր բառերուն ձգած ազդեցութիւնը:
Յուզումը սարսափի վերածուեցաւ Ժա-
զին աչքերուն մէջ: Սուռապահար դուրս
ելաւ, նորէն եկաւ, գտաւ Յովհաննէսը,
վերտօն կրկնել տուաւ բժիշկին բառե-
րը: Կոթնեցաւ պատին ու ձեռքը ճակ-
տին դրած սկսաւ մտածել: Նոր իրա-
րանցումի մը պատճառով երբ բարձրաց-
ցուց գլուխը՝ աչքերուն դէմ ցցուած
գտաւ քաղաքապետարանի բժիշկը եւ եր-

կու ոստիկաններ: Նոր գող մը ցնցեց
մարմինը: Ուրիշ գոյն մը ծածկեց դէմ-
քը:

Իժիշկը հարցումներ ըրաւ: Ժազ
շանդադարձաւ վիժումի պատմութեան:
Անգիտացաւ պատճառները: Քանի մը
վայրկեաններու խնդրի համարեց պա-
տահածը: Հոգեվարքի մասին վկայու-
թիւններ ուզեց տալ, բայց բառերը խղ-
ղըւեցան կոկորդին մէջ: Չկրցաւ զսպել
արցունքը: Իժիշկը կատարեց քննութիւ-
նը ու ցած ձայնով խօսեցաւ. Ոստիկան-
ներուն հետ, Ոստիկանները պտոյտ մը
կատարեցին տան մէջ, մտան խոհանոց
եւ կերակուրի մնացորդներ, քանի մը
զաւաթ ու պնակ առած ելան դուրս եւ
սպա, բժիշկին թխադրանքով հրահան-
դեցին քաղաքապետարան փոխադրել մե-
ռելը:

Դպպալը յատուկ կառքի մը մէջ դը-
րին ու Ժազ ոստիկաններուն հետ հետե-
ւեցաւ անոր: Պատշաճմէն Ազիւնին մայ-
րը հետեւեցը: այս տեսարանին ու Ժա-
զին մօր վրայ յարձակելով պոռայ:

— Ոճրագործնե՛ք, աղջիկս դուք մեռ-
ցուցիք:

— Ես մեղք չունիմ, աղապակեց Ժա-
զին մայրը, իր տեղը թող զիս զերեզ-
ման իշեցնեն, եթէ ես բան մը ըրած եմ.
եւ մեղք չունիմ, կրկնեց ու շարունակեց
լսօր:

Յովհաննէս լսեց, տեսաւ այս բա-
ները ու միտքը բոլորովին պղտորեցաւ:
Ժազին դործատեղին լուր տալու պար-
տականութիւն մը ստանձնած էր: Կա-
տարեց յանձնառութիւնը: Մանրամաս-
նութիւնը ուզեցին: Չուզեց շփոթ բա-
ներ ըսել: Քալեց: Դուրս ելած պահուն,
աշխատանոցին դրան մօտ պայտուակ մը
յարդարող կլոր դէմքով ու դայծառ աչ-
քերով երիտասարդ մը յայտարարեց:

— Աչքը լոյս օրիորդ Լուսինին:
Այս յայտնութիւնը նոր հարցումի
մը առջև դրաւ Յովհաննէսը: Ի՞նչ ըսել
կ'ուզէր արդեօք այդ տղան, ո՞վ էր օ-
րիորդ Լուսինը: Իր լրածները ետև ետևի
կը խոժէին մտածումին մէջ ու փոխա-

նակ Ազնիւին մահուան պատճառը հասկնալու իր ճիշդին նպաստելու, առաւել եւս կը թանձրացնէին մշուշը:

Հասաւ մեռելին տունը: Ժառ չէր վերադարձած տակաւին: Ծանօթներ ու դրացիներ խոնուած էին տան մէջ ու վարը՝ մայթերուն վրայ: Մարդոց աչքերուն մէջ յուզումը տեղի տուած էր բան մը հասկնալու մտահոգութեան: Դրացի գէր կինը խումբ մը կիներու կը պատմէր, որ Ազնիւին հռոզիւնէն ազդուած մինչեւ առտու չէ քնացած: Ուրիշներ ուրիշ խումբերու բաժնուած ուրիշ կարծիքներ կը յայտնէին, ենթացողութիւններ կ'ընէին, կ'ուզէին հասկնալ անպատեւի այս մահուան ստոյգ պատճառը:

Իրիկուն եղաւ: Կացութիւնը նոյնը մնաց: Ոչ ոք կրցաւ ճշգրիտ տեղեկութիւն մը ունենալ ռեբերգութեան մասին: Դազաղը կը մնար քաղաքապետարան ու ոստիկանապետը կը շարունակէր հարցաքննութիւնը՝ Առտու ելք մը զըտնուեցաւ: Ըստեցաւ, որ Ժառ չօրհնական իր ժառանգէն բաժին մը յատկացրելով՝ օգտուած է աղքեցիկ մարդու մը բարեացակամութենէն:

Ազնիւին զէմքը արդիլուեցաւ ցոյց տալ յուղարկատրեւրուն:

Յաջորդ օր, ճիշդ այն ժամուն, որ Ազնիւին մարմինը հողին յանձնեցին, ցաւակցութիւն յայտնելու եկած ծանօթներու եւ դրացիներու ներկայութեան՝ Ժառին մայրը խուլ ճիշ մը արձակեց ու լռեց: Բժիշկը եկաւ, քննեց մարմինը եւ սրտի կաթուածով մեռած ըլլալու վկայութիւնը տալով մեկնեցաւ:

Ժառին խորթ թոյրը մասնակցեցաւ յուղարկատրեւրութեան:

Իր մօր ու կնոջ քառասունքի հոգևանդատը կատարել տալէ ետք, Ժառ ամէն տեղ անտէր մնացած գաւակներուն մտահոգութիւնը սկսաւ պտտցնել: Կարելի չէր այդպէս անխնամ պահել զա-

նոնք: Հոգածու մը պէտք էր: Զուլացաւ ընելիքը ճշգրէլ: Որոշեց անյապաղ ամուսնանալ: Երկար փնտրտուքներ չըրաւ: Պատշտականացուց օրիորդ Լուսինին հետ ունեցած իր կապերը ու վերջացուց խնդիրը: Որոշեց նաեւ փոխել աբբանիճեալ տունը: Նոր մը վարձեց Աշրաֆիայի բարձունքին: Մաքրութիւնը ընելու եւ նոր սառցաստը պատրաստելու գործը յանձնեց խորթ թոյրը եւ ինք գործի գնաց: Երկու օր ետք, իրիկնադէմին, Օթէլ Տիէօ հիւանդանոցին տնօրէնութիւնը իր մօտ կանչեց գինէ: Հօր սառագաստը պատրաստելու համար պաշն հետը տարած էր խորթ թոյրը եւ վերագարձին ինքնաշարժի զօրաւոր արկած մը ունեցած էին: Սազօն կուրծքէն զարնըւած էր: Չգիմացաւ ցաւին: Տարին գայն հարազատ մօրը թով:

Ինքնաշարժի արկածը պատճառ դարձաւ, որ երկու նշանածները երկու ամիս ուշ մտնեն նոր սառագաստը: Երնունդի մեռելոցին երկուքը միասին գերեզմանատուն գացին եւ ուրիշ սպաւորներու պէս մոմ վառեցին ու խոնկ մը խեցին թով թով գրուած երեք շերամբլուրներուն վրայ ու արցունք թափեցին բոլոր սպաւորներէն աւելի: Անծանօթներ մասնակից դարձան այս երիտասարդ զոյլին երեակ գժբախտութեան:

Մեռելոցէն վերադարձին Ժառ եւ Լուսին աչառ շունչ մը քաշեցին եւ ազատօրէն ժպտեցան իրարու: Նոյն գիշերը իտըն-միօք պարահանդէսի գացին: Ազնիւին պարիկ մանչուն խնամքը Լուսինին մայրը ստանձնեց ու երկու երիտասարդները զուրս ելան եւ ամէնուն պէս սկսան կեանքը վայելիլ պարի ու շարժապատկերի սրահներուն մէջ, սրճարաններուն ու Լիբանանի ծովափնեայ արուարձաններու միւս հաճոյալայրերուն մէջ:

— Ո՞վ, ո՞ր մէկ երիտասարդը կրբնայ իմ ըրածս ընել, կ'ըսէր Ժառ ամէն հանդիպողի: Դիւրին չէ երեք ամսուան մէջ երեք մեռել թաղել ու ամուսնանալ: Ո՞վ կրնայ այսքան ծախքի դիմանալ:



Ոչ ծունկի հմ, ոչ բազկատարած (Սեղ է աշխարհը),
 որ չըլլայ թէ արգահատիս,
 բանի մը չեմ կոթնած ու չեմ ալ աղօթեր,
 ոչ իսկ խոնարհ եմ կամ ինքնամփռփ.
 այլ կը քալեմ, բորոտին պէս, ապրողներու եզերքէն
 փռզոցէն՝

շփոթ ու գորշ գիտակցութեամբ մը յարդած:
 Այսչափ:

Ինծի համար կարեւոր չէ ով ըլլալդ, ուր ըլլալդ
 կամ անունդ.

մեզի համար որ հազիւ կամք
 հոդէն օդին կէս ճամբուն՝

կարեւորը ըլլալդ է:

Ուրեմն կաս.

պէտք է ըլլաս, գո՛նէ դուն,
 ով անձնական ու անմակրայ, անգլխազիր ժամանակակից:

Կը բաւէ ու կ'աւելնայ.

այ ի՞նչ պէտք ունիս որ հաւատամ, քեզ Տէր կոչեմ,
 ձրի փառք տամ:

Հաւասարէ հաւասար, ինչպէս եմք մեմք, մարդերս,
 ինչպէս է ան, իմ աշխարհս,

ծխախոտի կոխկոտուած պարապ տալիք,

(կը ծխե՞ս... վերջինս է, կը կիսուիմք)

անձիւր ծովը ձայներու մինչեւ ականջ մէջը սուգուած.

շարժումներու և ձեւերու չվերջացող ու փանթասքիփ հեքեքը

(երեք խնձորները ե՞րբ պիտի իյնան...).

Իրականութիւն մը գոր սալարկեր եմ բառերով

գորս երբ հանեմ,

ամէն մէկուն տակը վիհ մը կը բացուի.

Իմաստները, յաջցները՝ սուտ գրպաններ՝ ուր հաւանաբար բան մը կայ...

մարդիկն անթիւ՝ իմ աշխարհիս,

արձակարդի գացած են, գործը թողած քարտուղարին,

որ դուռը կղպած կը հեռախօսէ անդադար, գործը թողած դռնապանին,

որ ինքնիքն հետ կը խօսի, ըսածներս չի հասկնար,

քիչ մը փախուկ ըլլալու է...:

Ահաւասիկ այս եմ ես —

բացակայ մը:

Այնպէս որ ո՛չ մէկ բանի պէտք ունիմ —

տարօրինակ կերպով մը

ինչ որ կուգայ դէպի ինձի,

հագիւ հասած գիտակցութեան սանձաններուն,

ինկզինճէն կը գատուի ու իմ մէջս կը ձուլուի

ու ինձ նման քացակայի կը վերածուի:

Տարօրինակ կերպով մը

միս մինակ եմ, սիրահարներու, ծեր հարուստներու, մահապարտներու նման,

ինչպէս յիմար ժայռ մը, ցցուն՝ շուարուի ովկիանոսին

որուն սառած մակերեսին

հազարաւոր պարապ լաստեր կը ծփան խուճապահար՝ ինկզինճէնում կառչած:

Այսպէս է որ

ես եմ ներկան, միակ ներկան,

առունձնութեան մէջ արձագանգող...:

(Մի խնդար վրաս, մի՛ խնդար,

հակասութիւններէ գատ ուրիշ ի՞նչ ունիմ որ,

ի վերջոյ)

Այ պէտք չունիմ ոչ հոգիի, ոչ աստուծոյ, ոչ ալ մանուսնա՝ արքայութեան —

հազարաւոր գաղտնի-ապրող ու կիսաւարտ

էականներու եւ իրերու

Ուրիշութեան

խարխուլ, անտէր խանութն ուսիս, խխունցիս պէս,

ես կ'երթամ:

Եկայ նորէն,

ինչպէս կուգայ տարեդարձս ետ իմ հովս ու կը դադրի.

ետիս ձգած կեանքին իմաստն ու արժէքը

որոնք արդէն մաս կը կազմեն իրեն, կեանքին,

յաւիտենական ու անազարտ յգութեան մը նման.

Մարդկութիւնը՝ —

այսինքն փրկութիւն կամ կորուստս իբր մարդ, եիմա

եթէ մէկը պատահմամբ ուզէ վնեղ, առանց ինձի հարցնելու.

բայց ամէն ինչ ուրիշ տեղ է, ուրիշ բան է...

Եկեղեցին՝

կրօնի սանդուխը

գլխուս մէջ ու ինքն իբ վրայ կլոր կլոր կը դառնայ

բայց դուրս չ'ելլեր, դժբախտարար:

Եկայ ինձի, իմ շուրջս կամ մէջս:

Իմ տագնապս՝ ներկայութեան տագնապ է

իմ անձնութեան մակարդակին,

հոն՝ ուր ներկայ եմ ու քացակայ, հոյն ատեն,

ուր

այն որ ես ըլլալու եմ, վեր ի վերջոյ,

կը դեգեբրի, յոգնած ու շուարուն, տառապանքի, քրջանկութեան ու զղբումի

հառուկիս կեդրոնին:

Ո՞ւր է որ կամ, ե՞րբ է որ եմ,

Ես,
 երջանկութեան մէջ, որ գողութեան պէս բան մըն է,
 տառապանքն՝ որ ինչպէս համահարակ՝ գիս ալ վարակեր է,
 դուրսէն եկած բայց անվստահացիկ,
 քանի որ իր այսօր արդէն ունէի ես, սկիզբէն:
 Մէջս եմ արդեօք
 գոյումներու այս անհամար բորենիները, որ լուռ ու ծածուկ կը բզկտեն.
 ուրկէ՞ ծնաւ
 գութի նման սա վարակիչ սպառումը
 որ լռյսին տակէն, մութին տակէն, ամէն ինչի մակերեսին
 լոյծ ու անգութ կը տրոփէ.
 Ե՞ս եմ անձը որ ստորագրեց
 յանցանքներու հագարաւոր մուրհակները
 գորս ամէն վայրկեան կը հաւաքեմ, ամայութեան չորս կողմէն:
 Ինչպէ՞ս, ինչպէ՞ս պիտի կրնամ վճարել,
 ես յի անպէտ շփոթանքէ գառ ուրիշ բան չեմ,
 հաւանաբար:

Ուրեմն քայնէք միասին,
 ժամանակակից,
 դուն որ կաս, ես որ կամ՝ թէ չկամ...:
 Գէթ հասկցիր՝ ինչու անձս կը քայքայուի
 երբ կը ցանկայ քեզի նմանիլ,
 Ըլլա՛ւ,
 հոգ չէ թէ նամբուն քարը, անձրիի կաթիլ մը, սէր մը, ցաւ մը
 կամ պարզապէս ջշինչ,
 բայց ըլլալ:
 Ձէ՞ որ երկուքս ալ նոյն թակարդը ինկած ենք —
 դուն չես կրնար չըլլալ, ես չեմ կրնար ըլլալ,
 յաւիտեանս յաւիտենից,
 Ամէն:

Վ. ՕՇԱԿԱՆ



ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ



Յէ սիրտը մարդու միշտ անլար լինի,
 Լեզուն՝ մեղրածոր, անուշ կը խօսի:

Յէ Լեզուն խօսի միշտ քաղցր ու անուշ,
 Ականջը նրան սիրով կը լսի:

Ականջը մարդու երբ լսի սիրով,
 Աշխարհում խինդը միայն կը հոսի:

Երբ խնդու.Ցիւնը հոսի աշխարհում,
 Կեանքը կը փոխուի շքեղ երազի...



Ասում են ինձ՝ ձերացել ես,
 Խորշումներ են փռուել դէմքիդ
 Խորն ու մէջն:

Ո՛ր, ասում եմ,
 Խորշումներն այդ, որ տեսնում էք,
 Ակունքն են կեանքի խոփին:

Այս ցեւերում, կրկին. կրկին,
 Իմաստու.Ցեան հացի հասկեր
 Պիտի ծաղկին:

Թեհրան

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ

Հեռագայ քանի մը էջերը մնայուն բաժինը պիտի ըլլան հայ գրականութեան նոր ուխտաւարներուն: Պատահական այցելուներ եւ արկածաբար գրիչ օտրժողներ պիտի չհիւրընկալենք անուշադէպ այսօրը, եւ ոչ ալ պիտի ուզենք իրենց տնունները սղուած սեանելու մարմարով ճամբայ ելած զոյց համար ցուցադրովայր մը գործնել այս էջերը: «Դեպի աղբիւր լոյսին» ամենոք նամբուն առաջին համգրուտները ընդունելէ ետք «Քաղցին»-ի այս ամսուհիները, հաւատացած ենք, որ հոս ժամանակ ներք իրենց մտքին ձայնին, այսինքն գրական կոչումին հուսաարիւմ՝ պիտի օտրուեցան արագան ուղեւորութիւնը եւ այրուելով ու արագրուելով, ամբողջով ու օտուելով պիտի պարտադրեն իրենց ինքնութիւնը:

Տ Ի Ս Ի Փ Լ Ի Ն Ը



Մեկէք աստղճագործ է: Ամէն ատու, նոր կրկէս մտած ցուլի պէս կը մտնէ գործարանէն ներս: Պահ մը կը կենայ, յետոյ մի քանի քայլ եւս կը յառաջանայ, նորէն կը կենայ, շրջապատը կը դիտէ ու դունչը առաջ կրկնցնելով կ'ըսէ:

— Բարի լոյս:

Կարճ հասակ մը ունի եւ շափազանց մեծ գլուխ մը. իսկ երեսները փուռն են նոր ելած կարկանդակներու կը նմանին: Մարմինը իւր կապած է եւ ատոր համար շատ չի սիրեր արագ աշխատիլ: Առտունները ժամը տասին զործի կուգայ իսկ իրիկունները չորսին տուն պէտք է ըլլայ:

Արտաբինով խտտախրտ մէկը կ'երեւի, բայց՝ ներքեակէն շատ բարի է: Իր ջլայնութիւնը խաղաղ լճի մը անփնաս՝ այնկոծութեան պէս բան մըն է: Ծուռով կը բարկանայ, բայց շուտով ալ իր հոգին կը պայծառանայ, կը ժպտի: Յոգնելի չի սիրեր, նեղութեան քնաս չի

պար մարմինը:

Չմեռները չի սիրեր. ամէն ձմեռ քանի մը քիջ կը պակսի, իսկ ամառուն նա չըջանին մարմինը կը ճկուննայ, ախորժակը կը բացուի եւ կը սկսի խօսիլ զինուորական տխրիւնի մասին: Ինքը զինուորութիւնը բրած է, տխրիւնով ապրած, եւ ատոր համար տան մէջ կ'ուզէ որ կինը եւ աղջիկը տխրիւնով շարժին, տխրիւնով ուտեն եւ տխրիւնով պառկին: Իր մօտ պետականացած է տխրիւնը եւ ուր ալ գտնուի, դուրսը, խանութքը, թէ տունը, նիւթը տխրիւնն է: Մարդիկ տխրիւնը դրին անունը եւ փողոցներէն անցած աստեղ, պղտիկները յաճախ կը պոռային:

Տխրիւնը մեզի թաղցի էր: Համեստ աղջիկ մը ունէր, որ մինչեւ բարձրագոյն վարժարանէն շրջանաւարտ ելլելը համեստ մնաց: Մտողքին միակ յոյսը ինքն էր, օրիորդ Համեստուհին: Այր եւ կին, իրենց կարելին ըրին, որ

իրենց աղջիկը ուսում առնէ ու զարգա-
նայ:

Համեստուհին դպրոցը աւարտելէ
յետոյ, արուեստից վարժարանը մտաւ
երգի դաս առնելու: Սկիզբը ամէն ինչ
լաւ ընթացաւ. յետոյ սկսաւ յաճախ
տունէն բացակայիլ, դիչերները ուշ
տուն գալ: Հայրը բարկացաւ, ուղեց
տիտիփիլինով սաստել աղջիկը, ըստ իր
տիտիփիլինին արժէքը ինչպէս էր:

— Երգի փորձ ունինք, կ'ըլլար պա-
տասխանը, երբ ուր ըլլալը հարցնէին:

Օր մըն ալ երիտասարդի մը հետ
ներս մտաւ Համեստուհին եւ երկուքը
մէկ քաշուեցան վերնայարկը: Մեկէք
շատ շախտքեցաւ այդ բանէն: Տեսնող-
երը ի՞նչ կ'ըսէին: Այդ օր բան մը չը-
սաւ: Շրջեցաւ սենեակին մէջ, շարու-
նակ տիտիփիլինին մասին մտածելով: Մի
քանի շարաթներ յետոյ այդ դէպքը նո-
րէն կրկնուեցաւ: Տղան երբ վերնայար-
կը կ'ելէր, Մեկէք լաւ մը դիտեց զայն:
Հասակաւոր, գեղադէմ, վայելուչ սը-
ղայ մըն էր, մտքէն հաւնեցաւ տղան,
բայց այդ վերնայարկը սիրտը կրկին
խոռվեց:

Աղջիկը կամաց կամաց փոխուեցաւ:
Լըլուժիւնը վերարկուի պէս ծայեց ու
մէկ կողմ դրաւ եւ շարժապատկերի
պատասխան վրայ տեսած աղջիկներու
ձեւերուն սկսաւ հետեւիլ: Մազին ձե-
ւը փոխեց, ձիւս պոչին նմանցուց մա-
զերը, յետոյ կարճ եւ նեղ հագուստներ
հագաւ, և կարողած հագուստներուն զը-
րեթէ բուրբին կոնակը եւ կուրծքը բաց
պահեց:

Մեկէք բարկութենէն պիտի պայ-
թէր, իսկ Համեստուհին մայրը, որ
սուաջ ամէն տեղ լեզուն դուրս ձգած իր
աղջիկը կը դուլէր, հիմա ներս քաշած
էր լեզուն եւ դրացիներուն լեզուները
սկսած էին դուրս ելլել: Բայց աղջկան
հոգը չէր:

Իրիկուն մը, երբ աղջիկը սովորա-
կանէն աւելի ուշ դարձաւ տուն, զար-
մացաւ որ իր հայրն ու մայրը արթուն
էին: Մայրը կծկտած էր բազմոցին վը-

րայ, իսկ հայրը սենեակին մէջ ջղա-
նոտ քալուածքով կ'երթեւեկէր: Աղջիկը
երկու ձեռքերը դրան երկու կողմերուն
վրայ դրած, համարձակ կեցաւ անոնց
դիմաց. կուրծքը բաց էր դարձեալ, մա-
զերը իջած էին ուսն ի վար իսկ տոխնք-
ները սեղմուած էին հագուստին մէջ:

— Ո՛ւր էիր, պոռաց հայրը: Մար-
դուն բերնէն կրակ ու բոց կը ժայթքէր,
իսկ անդին մայրը կուլար:

— Ո՛ւր էիր կ'ըսեմ զեղի, շարունա-
կեց Մեկէք, ամբողջ թաղը կը քնանայ
իսկ դուն մեր քուրճ փախցուցած փո-
ղոցները կը թափառիս:

Աղջիկը չխօսեցաւ, իսկ ինքը խօս-
քը աւարտելէ յետոյ նստաւ թիկնաթո-
ռին ու սկսաւ զարձեալ տիտիփիլինի մա-
սին խօսիլ աղջկան:

Ճ

Համեստուհին նշանուեցաւ այդ ե-
րիտասարդին հետ ու Մեկէք անոր ալ
սկսաւ իր գիտութեամբ տիտիփիլինին
մասին խօսիլ:

Իրիկուն մը ինք կը բացակայէր
տունէն: Տղան եկաւ եւ աղջկան հետ
քաշուեցան վերնայարկը: Կինը զեչ մը
տնտնալէն ետք քնացած էր: Մեկէք ե-
կաւ եւ ամէն բան բնականոն դտաւ:
Ինքն ալ մտաւ անկողին: Աչքերը չէր
գոցած տակաւին երբ ձայն մը հասաւ
ականջին: Վար իլաւ մահճակալէն եւ
կամաց կամաց աստիճաններէն վեր
բարձրացաւ: Շունը բռնելով հրեց
դուռը ու ներս մտաւ: Այդ ամէնը ինչ-
պէս եղաւ ինքն ալ չզիտացաւ: Աղջիկը և
տղան փաթթուած էին իրարու եւ կը
համբուրուէին:

— Անամօթներ, յանկարծ պոռաց
մարդը, եւ սուաջ նետուեցաւ: Իր աղ-
ջիկը այսպէ՛ս, այս վիճակի՞ն մէջ, ճա-
թիւը բան մը չէր:

Տղան ձեւ մը դտաւ ու փախաւ, իսկ
աղջիկը լուռ նստած մնացած էր անկող-
նին վրայ ու չէր դիտեր ինչ ընելը: Կի-

նը վեր շտապեց ու անմիջապէս աշխատեցաւ գոցել պատուհանն ու դուռը: Սակայն մարդուն ձայնը դուրս ելած էր անզամ մը եւ դրացիները իրենց ականջները սրած էին: Կինը կ'աշխատէր հանդարտեցնել ամուսինը, բայց Մելիք կատղած էր, տիտիփիլոն, կը պոռար, աղջկան մազերը ձեռքը անցուցած, տիտիփիլոն:

Դրացիներէն ոմանք, որ վեր հասած էին արդէն, վար իջնցուցին Մելիքը, որ յայտարարեց, թէ այլեւս խիստ միջոցներու պիտի դիմէ: Ժամանակ մը չուզեց որ աղջիկը իրեն երեւի, նոյնիակ կինը դաւաճան համարեց: Նշանը ետ ընել ուզեց, բայց աղջիկն ու սղան յայտարարեցին որ իրենք ետ չեն ուզեր ըլլալ: Քսաներորդ դարուն մէջ կ'ապրինք, ըսին անոնք, եւ աղջիկը պիտի որոչէ իր ընելիքը եւ ոչ թէ հայրը:

Մելիքը պարտուեցաւ այդ խնդրին մէջ: Երբեմն սենեակին մէջ կը քալէր ու ինքն իրեն կ'ըսէր.

— Ո՛ւր է առաջուայ տիտիփիլնը:

Հարսնիքը մօտ էր, բայց Մելիք քէն էր տակաւին: Ձէր ուզեր որ աղջիկը մօտենայ իրեն: Բայց որքան հարսանիքի

օրը մօտենար, Մելիք այնքան կը դգար, որ բան մը կ'անցնի կը դառնայ իր մէջ: Օրէ օր սիրտը աւելի կը ծանրանար, հողեպէս անհանդիստ կը դգար ինքզինք: Քէն ըլլալով հանդերձ կը դգար, որ աղջիկը պիտի ամուսնանայ, քանի որ քսաներորդ դարը ոչ տիտիփիլն կը ճանչնար, ոչ հայր, ոչ մայր: Տիտիփիլնը քաշուած էր պատեանը, ու մարդը ինչ ընելիքը չէր գիտեր: Կինը աղաչեց, պաղատեցաւ որ ընդունի աղջիկը: Մելիք բաւական լուռ մնալէ ետք հրաման տուաւ որ գայ: Աղջիկը եկաւ, ետեւէն նշանածը: Համբուրեց զանոնք ու մեղմ մեղմ սկսաւ քարոզի տիտիփիլնի մասին: Քարոզը երկար տևեց, բայց միւսները չ'ու հնազանդ մտիկ ըրին:

Աննախընթաց հարսնիք մը ըրին: Մելիք ուրախ էր հաշտուելուն համար: Այդ գիշեր, այր ու կին անկողինին մէջ երկար զրուցեցին: Աղջկան ու փոսային սիրուըտուքը որ այնքան զայրացուցած էր զինք, միտքը եկաւ կրկին ու հեշտանքի պէս բան մը արթնցուց մարմինին մէջ:

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ



ԵՐԳ՝ ՍԻՐՈՅ ԵՆ ՏՈՅՍԵ



Բազմարուրեան մանիշակներ քող ծաղկին
Մենուքեան ցուրտ ճամբաներուդ մէջ, ո՛վ Սէր,
Մեր յաղթ փառքի օրերն ահա կը հասնին
Ուրախ լէրի մեղեդիով օրհնաբեր...:

Ինչ փո՛յթ, ինչ փո՛յթ թէ հազար հեղ մեզ տանջեն
Կայծակնասուր խօսքերը պիղծ շրթներու,
Պիտի նորէն սրտերը մեր դաշներգեն
Նայն յանկերգով ու նայն սիրով տրոփում:

Թող լոյս աչքով հազար ձեռքեր խափանեն
Ջերմ հաւատքի մեր ակնադբիւրը գուլալ,
Բայց մեր հոգին միշտ կենսավառ ու գօրեղ՝
Պիտի ցայտէ նոր ազրիւրի պէս վարար...:

Հողմերուն դէմ կեանքի մուշի ցաւերուն,
Մենք շանթերու սլացքն ունինք անվեհեր.
Եղբրասայլ մահուան իսկ յաղթ սուրին դէմ
Մեր կամքն անշեղ ու մեր յոյսն է աննկուն...:

Մի՛ վիատիր, տե՛ս, Մասիսի վեհ լանջին
Նարեկացին բռնած ձեռքին մէջ նարօտ,
Իր սուրբ աջով ու աղօթքով սրտագին
Մեզ հայրօրէն պսակելու կը սպասէ...:

Մեր աստղաշող Արարատեան խնճոյքին
Պիտի հոսի գինին լոյսի պէս բռտր.
Ու սիրահար Սայեաթ Նովան իր սագով
Բորբ սէրերու լոյս ակունքին մեզ տանի...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՎ

ՅԱՂԱԳՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Վ Ե Ր Ա Մ ՈՒ Տ



Քարի, ժիր, տարօրինակ Հոկտեմբեր: Հոն. բնութեան գրկին մէջ, տերեւները կը սկսին դեղնիլ, դալկանալ, թօշմիլ, մինչդեռ հոս, մարդկային մեծ կեանքը կազմող երկրագունդի սա ծո՛վ փառաքներուն մէջ, հակառակն է որ կը պատահի: Կը թարմանայ ամէն ինչ, կարծես կը կանաչնայ: Աշխատանքին թափը կը բազմապատկուի յանկարծ, եռանդը կը սաստկանայ, կ'եռայ ամէն ինչ: Փողոցներն ու հրապարակները որչափ ալ լայն՝նեղ կու գան մարդոց, չեն բաւեր անոնց շարժումին, հերիք չեն անոնց հեռասպառ գործին համար:

Հոկտեմբեր է: Ամէն ռոտ կը վազէ, ամէն ձեռք կը շարժի, ամէն ուղեղ արտակարգ լարուածութեան մը մէջ է: Գործերը շարժարի վրայ են եւ կ'եփին Պուրբի վառեակներուն պէս:

Վերամուտ: Բոլոր համբաններուն վրայ աշխատող մարդերու մըրքիկ մը կայ: Քրտիմքին օրինեալ՝ մակընթացութեան ժամանակն է, ինը ամսուան համար, տաս ամսուան, տասըմէկ ամսուան:



Կեանքի եւ գարծաւեւութեան սա բանձր ժխարի սեզանին, փառափառ երկիրներու գրական աշխարհը, միջազգային գրական մամուլին ամենօրեայ վկայութեամբ, սկսաւ դարձեալ յորդիլ փայլով ու կենդանութեամբ: Դպրոցներու եւ շարժապատկերի սրահներու եռանդուն պէս եռուզեռ մըն ալ ողողած է կ'ըսուի, գրական բարձր հաստատութեանց ըստ պատման սրահները, նայագաւիթներն ու բակերը: Ճիշդ, կանչաւրտուփ, հասկնալի ու անհասկնալի ազդակներ, աշխոյժ, ազմուկ: Գրողներէ կը բազմանայ այս բազմութիւնը, մեծատաղանթ, փոքրատաղանթ եւ անտաղանթ գրողներէ: Եւ այդ ահագին, այդ աշխարհասփիւռ ազմուկը, այդ հասկնալի եւ անհասկնալի բարբառը — թերթերու մէջ, գրքերու մէջ, կահատներու մէջ, հրատարակչական տուններու եւ ուրիշ գանձաքան հիմնարկներու մէջ — գրողներու՝ ազմուկն է, գրողներու՝ բարբառն է, միշտ անոնց Ձայնն է:

վերամուտ է: Ուրիշ գործերու վերամուտ, եւ նաեւ գրական վերամուտ: Տեղ մը դպրոցականներ են, տեղ մը առեւտրականներ, տեղ մը հասարակ գործաւորներ: Իսկ ճաւ, գեղեցիկ խօսքի մարդիկ են՝ իրենց վերամուտի կեանքին եկած:

Զեն հանգչած միայն, չեն պտտած միայն: Զեն ծուլացած: Աշխատած են նաեւ ու եկած: Գործ տեսած են: Ու վերագարձած են հիմա աւելի բարձր տրամադրութեամբ, աւելի բարձր աշխատով, աւելի հիմնական ու աւելի շքեղ ծրագիրներով: Եկած են ահա հաւնելու, չհաւնելու, վիճելու, պառայու: Պիտի մզեն ներքին պայքարներ ու արտաքին պայքարներ: Կը խոստանան ումանք ծնունդ կամ յարութիւն տալ բանի մը կամ շատ մը բաններու: Կը սպառնան ուրիշներ կործանել բան մը կամ հարկուր բան:

Իրենց արուեստին խոր արժանապատուութիւնը ունին, բարձունքի մը հասնելու ահաւոր կիրք մը կայ իրենց մէջ: Կայ աշխատանք, լրջութիւն եւ պատասխանատուութեան զգացում՝ տաղանդաւոր ըլլան թէ բոլորովին անտաղանդ:

Գիտենք որ գրական մեր հեղափոխիչը վերի հարուստ եւ քաղաքային արտերէն մէկը չէ այսօր: Նոյնիսկ արտի մը կէսն է հազիւ, միւս կէսը հայրենիքին մէջ ըլլալուն: Բայց այս խանգարտը, կ'էս արտը, գրական հեղափոխութեան ամենէն վարիճը չէ, պէտք չէ՝ ըլլայ. ամենէն քարքարուտ անկիւնը որպէս չյանձնեցին զայն մեզի, մեզ կանխող սեռունքները, եւ ուրեմն ամօքներուն մեծագոյնն է զայն քարքարուտ վիճակով փոխանցելը օր մը, մեր ետեւէն եկող տղոց: Պէտք չէ այդ բանը պատահի:

Եւ սակայն այդ ամօքաբեր եւ տրտում բանը չպատահելու համար՝ հարկ է հաւաքուիլ, ամփոփուիլ, ճիշտ քափել:

Եւ որպէսզի լքուած, ամայի, քար ու փուշով լեցուն ըլլայ արտասահմանի հայութեան այդ գեղեցկագոյն անկիւնը՝ պէտք է համզիստ վերագարձող աշխոյժ մշակներու ստանձայնը լսենք իր ցատկներուն վերայ: Արեւելէն, արեւմուտէն, արտին չորս ծագեցող եկող խանդավառ հորովղի մը պայծառ քարքարը պէտք է լեցնել մթնոլորտը:

Մեզի պէտք է գրական մեծ վերամուտ մը՝ շքեղ, ու լուրջ, ու խոր տեսակի:

Դեղ մը աշխատանք կայ ամենուս համար, եւ ինչ որ կը տեսնենք, եւ ինչ որ կատարուած է ու կը կատարուի՝ մեզ բնու չի բաւարարեր: Դժուարահան ենք եղած եւ դժուարահան ալ պիտի մնանք, առանց սակայն յռտեսու ըլլալու: Քանի մը գործերով չենք խանդավառուիր: Քանի մը միջակ հրատարակութիւններէ ետք գրական կեանքն ու գրական բնակչեան ծափահարներ, շոյալ մտապատկերներով չենք գինովնար եւ փոյլ հանգիստի մը գիրքը:

Արդ, ամեն հայ գրող, երիտասարդ թէ ծեր՝ իր արձակուրդի շրջանը պէտք է վերջացած համարէ եւ անցնի գործի: Մշակներու եւ անդադապահ մարդոց երկարատեսու հունը վնասած է միշտ վերի ու վարի բոլոր տեսակի արտերուն. զգո՛յժ, քարերը կը շատան, գէշ խոսքերը աւելի՝ եւ ցորենը չի՛ բաւնիր:

Արձակուրդներուն հետեւաբար վե՛րջ եւ վերամուտ:

Զ Ր Ո Յ Ց

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կարելի է բանիլ, թէ ընդհանուր դժգոհութիւն կայ Սփիւռքի գրականութեան մասին:

Կան շատեր, որոնք ընդունելով հանդերձ մեր անհատ գրողներու նուաճումներն ու յաջողութիւնները, դո՛հ չեն երբեք մեր գրականութեան ընդհանուր վիճակէն:

Անշուտ ջանինք շնորհալի եւ տաղանդաւոր գրողներ, մէկէ աւելի: Սակայն, չենք կրնար մատնանշել գրական գործ մը, որ թուական բանար: Այսօր սպրոզ սերունդը, որ հին փորձառութիւնը չունի, կը մտածէ միշտ Ձօհրապէնքու եւ կը փնտռէ անոնց գործերուն առաջ բերած ցնցումները, կամ կը մտածէ Մեծարենցի մը, Սիւրբանթոյի կամ Վարուժանի հատորներուն մասին եւ մտաւորականութեան անվերապահ զնահատութեան, նոյնիսկ հիացումին վրայ:

Իսկ երէկուան նոր սերունդը, որ արդէն միջին սերունդ դարձած է այսօր, քիչ անգամ կ'անդրադառնայ հին գրողներուն եւ անոնց սպրած շրջանին տիրող մթնոլորտին, եւ կը փնտռէ ըզգայացունց նոր գործեր, որոնք յեղաշրջէին մեր գրականութիւնը:

Ան, անդրադառնալով օտար, Փրանսական եւ անգլեամերիկեան գրական գործերուն, կը պահանջէ իրաւամբ, որ հայ գրադէտներն ալ ատոնց հաւասար գործեր տան մեր ժողովուրդին: Զէ՛ որ տաղանդը մենայնորժ չէ որեւէ ժողովուրդի:

Բարերար է այս դժգոհութիւնը, որովհետեւ ամբողջական զոհոճակութիւն մը, խաղաղ ու անդորր, հոգեկան ու իմացական լիճեր պիտի կազմէր, ա-

ռանց փոթորիկի: Մինչ ալիքն ու ալեկոծութիւնը անհրաժեշտ են, անդունդներու կարգին բարձունքներ ալ ճանշնալու, ունենալու համար:

Այսօր, առհասարակ, գլուխ-գործոցներ կը փնտռենք եւ շունինք: Անշուտ, ունինք գործեր, որոնք ուշադրութիւն կը գրաւեն, սակայն, չունինք գործ մը, որ համազգային ուշադրութեան, հետաքրքրութեան առարկայ դառնար, գործ մը՝ որ անպատճառ ունենալ ուզէինք, փնտռէինք եւ չըզտնէինք, կամ դժուարութեամբ ձեռք բերէինք:

Ատեն մը մեծ ուշադրութիւն գրաւեց Շահան Շահնուրի գործը, «Նահանջը առանց երգի», բայց չըջնի մը միայն կը պատկանէր ան, եւ հեղինակին յաջող գործերը չբացին նոր հորիզոններ:

Համաստեղի գիւղական կեանքէն թաղուած պատմուածքները, կորուած կեանքի մը բարախուն ու հարագատ պատկերացումով, ուշադրութեան առարկայ եղան: Երկար ատեն՝ «Գիւղ» եւ «Անձրեւ»ը պահեցին իրենց հմայքը, քաղքենի դարձած մեր ժողովուրդին համար, որ կը յիշէ միշտ հայ կորուած գիւղերուն քաղցրութիւնները: Սակայն, իր յաջողական գործերը յաւելնել հըմայք մը չբերին, հակառակ անոր որ «Մպիտակ ձիւրք»ի Ա. հատորին մէջ մասնաւորաբար, ստորագրեց ան էջեր, ուր հայ կեանքը կը յորդի եւ լուր իր պատկերալից ոճը կը հասնի իր ըրումին: Համաստեղ մնաց հայ գիւղին արուեստադէտ պատկերացնողը:

Ուրիշներ, Վահէ Հայկ, Բ. Նուրիկեան եւայլն, նոյն աշխարհէն, յաջողու-

?)

2

թիւններ արձանագրեցին եւ ուշագրաւ դարձան լեզուի, կեանքի եւ պատկերնե-
րու կենդանութեամբ, սակայն չբացին նոր
թուականներ:

Հակառակ այս բոլորին, սակայն, Թլիզատինցին, Զարդարեանը եւ Հրանդը
— Կիրճեանը —, պահեցին իրենց անունն
ու հմայքը, չնայելով որ անոնց գործե-
րուն մէջ չեն պակսիր գորշ էջեր:

Օշական, իր կարգին, զիւղէն տը-
ւած իր պատկերներով եւ յետոյ, մա-
նուանդ իր «Մնացորդացոյցով, ընդգրկեց
Նայ կեանքը, լայն զիժերով, իր տալ-
նապներով ու վիշտերով, հոգեկան խո-
րունկ զգացումներով ու վերլուծումնե-
րով, սակայն իր լեզուական դժուարու-
թիւններուն պատճառով քիչերու հեղի-
նակը դարձաւ: Անտեսուեցաւ «Մնացոր-
դացը», եւ փնտռուեցան միայն գիւղա-
կան պատկերները, իրենց ընտանու-
թեան, պարզութեան եւ պարզուն գոյ-
ներուն համար: Մինչդեռ «Մնացորդա-
ցը» սահմանուած էր ըլլալու զլուխ-
դործոց մը, եթէ ամբողջանար եւ զիջ-
ուէին կարգ մը խորհրդածական էջեր,
թէեւ շատ արժէքաւոր իրենք իրենց
մէջ:

4. Զարեան իր գրութիւններով,
պարզուն ոճով ստատմներ փորձեց եւ
յաճախ զարմացուց իր ընթերցողները:
սակայն, մինչեւ իսկ իր գլխաւոր գոր-
ծովը՝ «Նաւը լերան վրայ», չյաջողե-
ցաւ Նայ ժողովուրդին փնտած հեղի-
նակը դառնալ:

Կան անշուշտ ուրիշներ ալ, ինչպէս
Վիգէն Գլակ, որուն կարգ մը պատմը-
ւածները գեղարուեստական արժէքի
հասան. Յ. Մնձուրի, որ դարձեալ Նայ
դիւղը եւ խոնարհ մարդիկը տուաւ, իր
միամիտ ու հաճելի պատմումներով,
ձմեռ գիշերներու յատուկ:

Արամ Հայկազ, իր պատերազմի ու
պայքարի յուշերով, գրականութեան
սահմաններէն ներս մտաւ ու պատուա-
ւոր տեղ գրակեց, որովհետեւ իր յուշե-

րուն մէջ զիտցաւ ոչ միայն իր, այլեւ
իր ժողովուրդին վիշտն ու պայքարը
պատկերացնել պարզ ու ռաստառ դիժե-
րով, արցունք ու ծիծաղ իրար խառնե-
լով յաճախ: Իր յուշերուն մէջ թէ ա-
ռանձին պատմութեան ընթացքին,
իր ներկայացուցած դէմքերը մասնաւոր
հմայք մը կ'աւելցնեն իր գրականու-
թեան վրայ, որ պիտի փնտռուի միշտ:

Կարելի է նոր անուններ յիշել դեռ,
ինչպէս Շ. Նարդունին՝ իր հեքիաթնե-
րով, Զարդարեանը՝ իր պատմութեան-
րով, Նշան Պէշիկթաշեանը իր երգիծա-
կան ղէմքերով, Կ. Փօլատեանը իր «Կը
հրաժարիմ Հայութենէն» գիրքով, Կ.
Մեհեանը, Յր. Պոյաճեանը, եւ այլն:
Կարելի չէ բոլոր անունները յիշել,
չմեղադրուելու համար «կողմնակալու-
թեամբ»՝ սակայն, կարելի է ըսել, որ
եթէ ոչ տրուած կեանքով ու կատարյալով,
դոնէ լեզուով ու ոճով, Սփիւռքի գրա-
կանութիւնը նուաճումներ արձանա-
գրած է, երէկուան հետ բաղդատելով:

Ամայութեան մէջ չէ քերթողութիւ-
նը, ոչ ալ աղքատ, սակայն քանի մը ա-
նուններ միայն կան, որոնք փորձած են
Նայ ժողովուրդի սերտը գտնել եւ անոր
բարխտումները տալ, ինչպէս Մ. Իւ-
թան, Ա. Մառուկեան, Վահէ-Վահեան,
Բ. Թօփալեան, Ս. Սահակեան, Քաջա-
րենց, եւ այլն, որոնք սակայն իրենց ա-
ռաջին գործերուն կը պարտին իրենց ա-
նունն ու հմայքը:

Ուսումնասիրական եւ քննադատա-
կան հատորները, Օշականէն սկսած մին-
չեւ Կ. Սասունի, Հայր Չանաչեան եւ
մանաւանդ Մ. Թէօյեօրեան, պատկերա-
ցուցած են եղածը միայն, առանց փոր-
ձելու նոր ակօսներ բանալու ստեղծա-
գործ աշխատանքի, որ պիտի գայ ապա-
հովարար վաղը, խորացնելով Օշականի
բացած ճամբան: Այդ ուղղութեամբ գը-
նահատել են Սնայպեանի եւ Շահինեա-
նի քայլերը:

Մեր ներկայ գրական սերունդը, որ

խան է Հիներով եւ նորերով, մեր գրականութեան դանդաղումը, չըսելու համար տեղ-քայլը կը բացատրէ տիրող ընդհանուր կացութեամբ:— ցրուած հայութիւն, հայրենիքի հեռաւորութիւն, անստոյգ ապագայ եւ այս բոլորին կարգին՝ քննադատութեան պակասը:

Կրնանք ըսել թէ այս բոլորը դեր ունին մեր գրականութեան զարգացման մէջ, սակայն, չըսենք սեւերդ, բայց անզոհացուցիչ բացատրութիւն մըն է, որ կը տրուի, որովհետեւ եթէ Հայրենիքը հեռու է, կայ անոր կարօտը, խոր զգացումը Հայրենիքի, որ մշտապես կանխելի մը նման կախուած է հայ հոգիներուն մէջ: Վարուժան եւ Մեծարենց նման հայրենիքի շունչին, ինչ որ մենք ունինք:

Յրուած է Հայ ժողովուրդը, բայց կայ վերջապէս հայ ժողովուրդը, իր վիշտով, բազմաքննով, տաղանդով ու ստատեաներով, որոնք հարուստ աստղած են գրականութեան համար: Անըստուգութիւնը մզիկ յատուկ չէ միայն, այլ կարելի է ըսել բոլոր ժողովուրդներուն: Ո՞վ կրնայ վստահութիւն ունենալ վաղուան վրայ:

Քննադատութեան պակասը: Այո, գորաւոր ազգակ մըն է քննադատութիւնը, եթէ միայն զիրքերու վրայ չհակի ան ու նոր հորիզոններ բանալ գիտնայ:

Գրականութիւն ու քննադատութիւն ստեղծելու համար, պիտի գիտնանք մթնոլորտ ստեղծել: Եւ յետոյ, երբ քննադատութեան մասին կը խօսինք, կը թուի թէ սխալ կը հասկնանք, չիթելով զայն գրադատութեան հետ: Քննադատութիւնը դատումի եւ արուեստի բըխում մըն է, ինչպէս վէպը կամ ճերթուածը, ուր դատումէն աւելի տիրականը զգացումն է: Սխալ դասաւորում մը ըրած ենք, քննադատութիւնը հեռացնելով բուն գրականութեան սահմաններէն. մինչ գրականութիւններուն գրականութիւնն է ան:

Քննադատութիւնը մեր մէջ, քիչ անդամ եղած է իր դերին մէջ, որ ստեղծադրածական Ա. Եարութիւնեանի դիմաստուերներուն եւ ճերթուածներուն միջեւ, կամ քննադատ Օշականի եւ վիպագիր Օշականի միջեւ, որոնք իրարու հետ մրցակցութեան մէջ են:

Նոյն պատկերը կայ միջազգային կեանքին մէջ: Ո՞վ աւելի հետաքրքրական է, Պալաք մը թէ Ալենի Պէօլ մը կամ Բէմի տէ Կուրմօն մը, նկատի ունենալով այս վերջիններուն քննադատական գործերը: Անտրէ Մօրուս, տեսակցութեան մը ընթացքին, կը պնդէր թէ նոյնքան արժէքաւոր ու յաւերժական են Ալենի Պէօլի դէմքերը, որքան Պալաքի դժած դէմքերը: Անշուտ, մէկուն մէջ դատողութիւնը տիրական է, միւսին մէջ աւելի կեանքը, սակայն երկուքն ալ, հաւասարապէս արուեստի եւ ստեղծադրածական շունչով կ'ապրին: Դէմքի մը պատկերացումն ու վերլուծումը նուա՞ղ նշանակութիւն ունին, քան ՎՊուդին Պէթօի մը ստեղծումը:

Կրնանք ճիշդ նկատել այն կարծիքը՝ թէ երկուքն ալ զոյգ կ'ընթանան. գրական որեւէ սեռ, — վէպ, բանաստեղծութիւն թէ քննադատութիւն — արժէքի կը հասնի զրոյհի տաղանդի զբովումով, ստեղծագործ շունչով, արուեստի բըխումով, թերեւս այն միակ տարբերութեամբ, այն որ քննադատութեան մէջ կրնան փուշեր ըլլալ, որոնք կը վերաւորեն ոչ միայն հեղինակները, այլ եւ նոյնիսկ ընթերցողները:

Ունինք Մեծարենցներ, Սիւմանթօններ, Վարուժաններ ու Զօհրայներ եւ կ'ունենանք ասոնց արժանաւայելի ջըննադատական գրականութիւն, որուն խորքով կը կազմուին գրական արժէքաւոր ստեղծագործութիւնները:

Մեր մէջ, ղտախտաբար, կը կարծուի թէ քննադատութիւնը կրնայ գրականութիւն ստեղծել: Այո, կրնայ նոր

հորիզոններ քանալ, սակայն չի կրնար ներընչումի եւ արուեստի տարրեր տալ գրողին կամ ժողովուրդին:

Այսօր հարուստ են մեր գրականութեան բոլոր ճիւղերը: Իրական քննադատ ունենալու համար պիտի փնտոենք նոյնքան իրական, անվիճելի գրողէտ ու բանաստեղծ: Եւ արդէն քննադատութիւնը եկած է գրախօսին հետ, որ քանի մը դիժ միայն կրնայ տալ գրքէ մը, եթէ բարեխիղճ է:

Հայ գրականութեան զարգացման պայմանները՝ նոյնն են ինչ որ բոլոր միւս ժողովուրդներուն համար: Հայ գրողը պիտի տայ իր շրջապատը, իր ժողովուրդը՝ իր աօրեայ կեանքին մէջէն, անոր յաւերժական բաղձանքները արձանագրելով եւ պիտի տայ հաւատքով ու տառապանքով: Քննադատը կը բաժնէ հայ գրողին ճակատագիրը: Հետեւա-

բար, կը մնայ որ հայ ժողովուրդը բանայ իր սիրտն ու միտքը՝ հայ գրականութիւնը փնտոելու համար, գրական հետաքրքրութիւն ու մթնոլորտ ստեղծելով:

Այս ստեղծումին մէջ, գրողները, բոլորը, կոշուած են իրենց դերը կատարելու: Ամէն սերունդ իր մտահոգութիւնները, բաղձանքները եւ զանոնք լուծելու միջոցները ունի:

Ապրող սերունդը ի՞նչ կը մտածէ այս մասին:

Տժգոյն են մեր օրերը, եւ հոգեկան ու իմացական արժէքները չունին անցեալի փայլուն հրապոյրը: Պիտի դիտնա՞նք ստեղծել զանոնք. կը հաւատամ, եթէ հայ գրողները ձեռք տան հայ ժողովուրդին եւ մշակոյթի բարձունքները առաջնորդեն զայն:

Գ. ՄՈՒԹԱՐԵԱՆ



ԳՐԱԳԵՏԻՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԸ

Մեծ է թիւը նիզակ ճօճողներուն, գրական կրկէսէն ներս, ըլլայ արտասահմանի, ըլլայ Հայաստանի մէջ.

...Երգում է, տե՛ս, գիշեր ու գօր Պոետների մի ազգ բանակ, Մակայն երգեր քիչ կան այսօր, Այլ կայ յաճախ թուրք ու քամաք:

Մեծ է այսօր բանակը մեր. Թէ բոլորիս էջե՞ զինուր, Կ'առնենք գիւղեր ու քաղաքներ, Բայց երգեր ենք գրում այսօր, Երգում ենք սէր, երգում ենք մեծ, Երգում պայքար ու աշխատանք, Մեր երգերում սակայն չկայ Այսօր, ոչ սէր, ոչ խոն, ոչ կեանք:

Այսպէս կը գրէր Ե. Զարեայ, իր «Թուրք բանաստեղծ բարեկամիս» կտորին մէջ, դեռ 1929-ին:

Հայաստանի մէջ, ուր արուեստագիտն ու գիտնականը նիւթական մարդի մէջ առանձնաշնորհեալներ են (Համեմատած բանուորին ու զիւղացիին) բընականաբար մեծ էր, ու է, թիւը անոնց, որոնք կը փափաքէին գրագէտի ցանկին վրայ անցնիլ ու վճարուիլ պետութեանէն: Եւ որովհետեւ զնահատանքի չափանիւրը արուեստի պահանջները չեն, այլ «պարտիա»յի ցանկացածը, բրնականաբար գրական քննադատութիւնը դովերդէց կամ ձաղկեց գրագէտները, ըստ «պարտիա»յի օրուայ զարգացական ուղղութեան եւ Մոսկուայէն եկած Հրահանգներուն: Նորէն ընականաբար, մարդկային տկարութեանց շտեմարան եղող մեծ թիւ մը «բանաստեղծներու», կամ «վիպագիրներ»ու տուրք վճարեց Սթալինին եւ ոչ արուեստին:

(Կը վճարէ այսօր այդ տուրքը «Պարտիային եւ ոչ արուեստին»):

Եթէ գտնուեցան բացառիկներ, որոնք հակառակ վարչակարգին, արուեստը փնտոցցին, արուեստը ընտրեցին որպէս ուղիղ ճանապարհ, առողջ կըրկնակի կ'արժէքաւորուին անոնք, քանի որ նման խիզախում մը կը վերջնաբար Սիպերիա աքսորով, երբեմն նաեւ «բընական» մահուամբ, մուժ զնտանի մը մէջ: Անոնք չունեցան երբեք գրական քննադատութեան մը ամուր պատուանդանը իրենց ռաբերուն տակ. մինչեւ անգամ յետ մահու, երբ իրենց հալածուած անունը վերականգնուեցաւ, իրենց գործերուն հրատարակութիւնէն դուրս ձրուեցան իրական արժէք պարունակող կտորներ, ու գրական քննադատութիւնը շարունակեց զիրենք համարել «տէլիսափոնիստ»:

Արտասահմանի մէջ, ուր արուեստագէտը առանձնաշնորհեալ մը չէր ու չէ, ուր գրականութեամբ զբաղիլը շահարկ չէ եղած երբեք, ըլլայ նիւթական, ըլլայ բարոյական դեմնի վրայ — մէկ կամ երկու ճարպիկ լարաբաղացները նկատի չունինք անշուշտ, այս հաստատումը կատարած ժամանակ, քանի որ անոնք բացառութիւններ են եւ անոնց անունին փակած է «ճարպիկ» բառը, որը եթէ զնահատանք մըն է չունայի բարբառին մէջ, առնուազն դրական որակում մը չէ արուեստի ու գրականութեան մարզին մէջ — Հայ գրագէտը իր յոյսէս չէ ունեցած առողջ գրական քննադատութեան մը պատուանդանը իր ոտքերուն տակ: Արտասահմանի գրական քննադատները, թիչ բացառութեամբ, մեղանչած են արուեստին դէմ, ոչ թէ վերէն եկող պարտադրանքով մը,

ալլ ունեցած քիչին վրայ գուրգուրալու (ինքզինքին տրուած պարտադրանքովը), չափազանցեալ ներողամտութեամբ մը, հանդէպ սկսնակներու, նոյնիսկ տարիներէ ի վեր գրէ՛լ շարժող ու սկըսնակի սահմանէն դեռ գուրս չեկածներու հանդէպ: Այդ ծայրայեղ ներողամտութիւնը, շարունակ ճիտասմայլից ապագայ տեսնելը գորոշներուն մէջ, սկսնակը, կամ գրազէտի սնուն մը ունեցողը անպայման քաջալերելու, շնեղացնելու ձգտումը, տեղ մը շին հասցնելը գրականութիւնը, որ ալ օգտակար կը դառնան գրազէտին:

Գրական քննադատութիւնը պարտականութիւնը ունի ըլլալու ամուր պատուանդանը գրագէտին, երբ նշմարէ թէ զօրուոր է արուեստագէտը անոր մէջ. ան պարտաւոր է նոյն ատեն, ըլլալու պահակը արուեստին, պահանջատէջը արուեստին: Հայաստանի գրազէտներն ու քննադատները իրենց յատուկ եզոզ դժուարին պայմաններուն մէջ, իրենց լուռ պայքարը ունին տանելիք, հակառակ երկրէն ներս տիրող կարգերուն, կարենալ ծառայելու համար արուեստին, վառ պահելու համար զայն: Արտասահմանի ազատ պայմաններուն տակ ապրող գրական քննադատին համար կայ ազատօրէն ու բարձրաձայն մղուելիք պայքար մը յանուն աւելի գեղեցիկին, յանուս աւելի արժէքատրին, մնայունին, տեւականին, յանուն արուեստին:

Գրական քննադատութիւնը պէտք է դուրս գայ գրքի մը մասին քանի մը տեղեկութիւններ տալու, քանի մը դժվասանական խօսքեր ըսելու, ու հասկցողքով մըն ալ, քիչ մըն ալ դժգոհութիւններ ունեցած ըլլալը յայտնելու հինցած ու մաշած սովորութենէն. պէտք է ձգտի իր կոշումին, պէտք է միտի ըլլալու իրական պահակը արուեստին, չմոռնալով նոյն ատեն պաշտպանը ըլլալ իրական արուեստագէտին:

Որո՞նք են գրական քննադատի մը

յատկանիշները, ի՞նչ կը պահանջուի իրմէ երբ կը քննէ ու կը դատէ գրազէտի մը, (որ արուեստագէտ մըն է, եթէ իրաւ գրագէտ մըն է) գործերը: Սակայն անհրաժեշտ չէ՞ արդեօք ամփոփ սահմանումը տալ արուեստագէտին, աւելի ըմբռնելի դարձնելու համար գրական քննադատին պահանջումը:

Ջեթէ կարենայինք, կ'ըսէ Հ. Պէրկսըն, ուղղակի յարաբերութեան մէջ մտնել ընտելեան հետ, եւ մենք մեր հետ, արուեստը աւելորդ պիտի ըլլար, կամ աւելի ճիշդ, ամէնքս արուեստագէտ պիտի ըլլայինք: Արուեստի բոլոր գեղեցկութիւնները կամ ընտելեան մէջ են, կամ ընտելեան մէջ մասը կազմող մարդ էակին ներքին աշխարհին մէջ: Բնութեան եւ մարդոց մեծ մասին միջեւ, մարդոց եւ իրենց ներքին գեղեցկութեանց միջեւ, թանձր վարատչոյ մը կազմուած է, առօրեայ կեանքին գործնական պահանջներուն հետեւանքով: Այս իրողութեան մանրամասն քննութիւնը վերապահելով ուրիշ առիթի, շեշտենք միայն, թէ առօրեայ կեանքը, ներթափանց կողմը կեանքին, կը պարտադրէ մարդուն զործնական» ըլլալ. գործնական ըլլալու համար պէտք է ընդհանրացնել տուեալները, կարելի եղածին չափ մեքենայացնել մեր գործունէութիւնը, բառերուն տալ բոլորէն ըմբռնելի իմաստ մը, որով իրերուն ու մարդոց անհատական տարբերութեանց վերացումին կ'ընթացէ, դեւրացնելու համար մեր յարաբերութիւնները, կեանքը: Մտաբորժը որ ոչխար կը դնէ, տաւը, քսան ոչխար կ'առնէ, իրեն համար ոչխարները նոյնն են, իրար նման են, մտացու են միայն, մէկ հասարակ յայտարարի վերածուած են:

Արուեստագէտը այն բացառիկ էակն է, որ մեզի հետ ու մեր շուրջը ապրելով հանդերձ, զինքնազիջ չէ եղած, անձնատուր չէ եղած Վեանաքի պարտադրանքին» ամբողջովին. իրեն համար ոչխարները դեռ կը պահեն իրենց անհատա-

կանոնութիւնը, եւ սպանդանոց դաջած
 Ժամանակ անոնցմէ ամէն մէկը իրեն
 յատուկ զգայնութիւն մը ունի, մասցու
 չեն, այլ անուն ունեցող իրարմէ տար-
 րեք կենդանիներ: Անոր համար ծառե-
 րը, ծաղիկները, կամ բոններն ու ծո-
 վուն ալիքները, ունին սեփական կեանք,
 սեփական գոյութիւն, տարբեր միւսնե-
 րէն, տառնձնախտուկ: Բնականորաբ
 այս իրողութիւնը աւելի եւս կը շեշտը-
 ւի, երբ արուեստագէտը կը մօտենայ
 մարդ էակին, ինքզինք կը սկսի զգալ,
 քննել, տեսնել: Արուեստագէտին ու լը-
 նութեան, կամ մարդկային ներքին աշ-
 խարհին միջև. «Թափանցիկ շղարջ մը
 միայն կայ»:

Երբ կը Պարզանք, կը դիտենք, կամ
 կ'ունկնդրենք արուեստագէտին գործը,
 յանկարծ մենք մեզ կը գտնենք մինչ այդ
 մեզի անձանօթ մնացած, մինչ այդ մեզ-
 մէ ծածկուած իրականութեան մը դէմ,
 որ կը վարակէ մեր հոգին ներքին խը-
 րովորով մը, կը տանի ներքին բաւարա-
 րութեան եւ հիպոստի, մանաւանդ եւ
 թէ արտայայտուող ճշմարտութիւնը ար-
 տայախտուած ըլլայ նաեւ գեղեցիկ ձե-
 ւով:

Կա՞յ նորութիւն արեւուն տակ, չէ՞
 ըսուած արգօք ամէն ինչ: Եւ այո՛, եւ
 ո՛չ:

Երեք միլիառի կը հասնի մարդկու-
 թեան թիւը այսօր, եւ սակայն երկու
 հոգի չէք գտներ ամբողջովին իրարու
 նմանող, թէ մարմնով ե թէ մտային ու
 հոգեկան աշխարհներով: Որով, ամէն
 մէկը ունի ի՛ր զգալու եւ տեսնելու կեր-
 պը, անպայման տարբեր ուրիշներէն:
 Ըսելու նոր ձեւ մը, դասաւորումի նոր
 կերպ մը. երեւութապէս փոքր, սակայն
 խորքին մէջ էական եղող զգայնութեանց
 տարբերութիւններ կը կապուին նորոյթը,
 կը զատորշեն արուեստագէտը իր Ժա-
 մանակակիցներէն ու նախորդներէն:

Այս ասոցի արտադրած գործին ար-
 Ժէքաւորումը, զննումը, երբեմն գիւ-
 զննումը, պարտականութիւնն է դրա-

կան զննողատին:

Ի՞նչ կը պահանջուի դրական զննա-
 դատէն, որո՞նք են իր յատկանիշները:
 Չմոռնանք, թէ վերջ ի վերջոյ մարդ մըն
 է դրական զննողատուութիւն կատարողը
 (պէտք չէ մոռնայ մանաւանդ ի՛նքը, զը-
 րական զննողատը...), իր տկարու-
 թիւններով ու առաւելութիւններով, իր
 նախընտրութիւններով, ճաշակի տար-
 րերութիւններով, համակրանքներով ու
 հակակրանքներով: Եւ եթէ ան ինքզին-
 քին թոյլ տայ ընթանալ միմիայն իր ա-
 զատ ու անկաշանդ մղումներով, պի-
 տի չկարենայ ըլլալ պատուանդանը րո-
 յւր արուեստագէտ գործիչներն, արժէ-
 քաւորողը իրաւ արուեստին, ու պիտի
 դառնայ միմիայն իր նախասիրութիւն-
 ները մատնանշող մը: Անհրաժեշտ է որ
 դրական զննողատը, կամքի լարումով
 մը ու ճիշդով մը, ինքզինքին պարտադրէ
 որոշ կանոններ դրական գործի մը մօ-
 տեցման համար: Ամէն բանէ առաջ, բը-
 նականաբար, անհրաժեշտ է որ ան ար-
 ուեստը սիրէ, արուեստի ծարանն ու
 փնտրումը ունենայ. որով, պէտք է
 պոյութիւն ունենայ իրեն համար, սահ-
 մանում մը արուեստի ու արուեստագէ-
 տի, որը ամէն զննողատութեան հետ
 մշտապակերտ ու կրկնելու պարտաւոր-
 ութիւնը շունի անշուշտ, որուն գոյու-
 թիւնը իր մտքին մէջ սակայն, մենք
 պէտք է զգանք:

Այս կուզայ մանակարեւոր յաւ-
 կանիչը, անկողմնակալութիւնը: Ան-
 կողմնակալութիւնը ոչ միայն թերինե-
 րու մատնանշման Ժամանակ, այլ նաեւ
 եւ մանաւանդ՝ ղովասանքի Ժամանակ:
 Գրական զննողատութիւնը անհրաժեշտ
 է որ կատարուի առանց կանխակալ կար-
 ծիքի հանդէպ հեղինակին, անոր անձին,
 անոր ձգտումներուն կամ տեսակէտնե-
 րուն, կամ գրադատուած գործին հան-
 դէպ: Անկողմնակալութիւնը անհրա-
 ժեշտ է մանաւանդ դրական զննազան-
 դպրոցներու հանդէպ: Գրական զննա-
 դատին պարտականութիւնն է ջանալ

հասկնալ, իրարմէ տարբերել ու բացարձակ ըրտր ձգտումներն ալ, ամենահակասական թուողներն ալ, քննադատի խառնուածքին, կամ այլ հեղինակներու խառնուածքին բոլորովին հակառակ եւ ողջ խառնուածքներն ալ :

Իմաստասիրական, ընկերային, քաղաքական, բարոյական, հոգեբանական իրեն համար խորթ հեղով, նոր ընդունուածէն տարբեր մտեցումները չպէտք է խրտչեցնեն զինք. կամ առնուազն, եթէ մինչև իսկ խրտչեցնեն զայն առաջին ու մակերեսային ընթերցանութեամբ մը, չպէտք է մղեն զինք նետելու մէկդի, ու բացասական կարծիքը դրժին մասին, կազմուած ներքին նախասիրութեան մը դէմ դացող նորութեան մը պատճառով, ընդհանրացնելու, արտասայտելու գրաւոր, զրկելով իրեն հրամցուած գործը, արդար ու անկողմնակալ գրական քննադատութեան մը բարիքներէն : Ընդհակառակն, եթէ կ'ուզէք, իբրև քննադատը պէտք է ինք փնտռէ գրական գործեր, որոնք ամէնէն թիչ կը նըմանին արդէն իսկ գոյութիւն ունեցող ու զնահատուած գրքերու. պէտք է մըղէ երիտասարդները, նորիկները մասնաւոր, փորձելու նոր ճամբաներ, եւ ոչ թէ կապկելու գոյութիւն ունեցող կամ մեռած համբաններն ու անունները. տաղանդը՝ տեսնելու, ըմբռնելու, մտածելու եւ զգալու մասնաւոր եղանակ մըն է ու այդ տեսնուածն ու զգացուածը արտասայտելու իւրայատուկ ձեւ մը : Ամէն հեղինակի անվիճելի իրականքն է դիտել, երեւակայնլ ու շարադրել ըստ իր անձնական արուեստի ըմբռնումին, կը բաւէ որ այդ ըմբռնումը գոյութիւն ունենայ իր գրքին մէջ, արուեստը չբացակայի իր գործէն. կը բաւէ որ ճշմարիտի ու զեղեցիկի տպաւորութիւնը ըստանանք լաւ մը, ու թերեւս կրկին ու կրկին կարդալէ ետք :

Քննադատը պարտաւոր է իր կիրքերն ու անձնական ձգտումները մէկկէ գրած, վերլուծել իրեն ներկայացուած

գործը, արուեստի յստակ շափանիչով մը, միշտ մտածումներու, ձգտումներու, արտասայտութեան զանազան ձեւերու հին ու նոր ըմբռնողութեանց լոյսին տակ. դատաւորի մը նման, պէտք է ճիշդ ընէ ըմբռնելու իր գրական դատումին եկած հեղինակն ու իր գործը ու, հեղինակին իսկ տեսակէտէն մօտենալով հարցերուն, պէտք է վիճի անոր հետ ու ասպացուցանէ ըսուածին ճշմարիտ չըլլալը, կամ ցոյց տայ զեղեցիկորէն ըսուած չըլլալը. եւ կամ, ընդհակառակն, պէտք է մեզի տեսանելի ու ըմբռնելի դարձնէ ճշմարտութիւնները, որ հեղինակը տուած է իր գործին մէջ, թերեւս առաջին իսկ ակնարկով ոչ տեսանելի ձեւով մը. պէտք է ցցուն դարձնէ թաքուն զեղեցիկութիւնները գործին, որովհետեւ ամէն արուեստագէտ արտասայտութեան նոյն ձեւը ունի, եւ երբեմն կը քողարկէ իր իսկ հոգիին մէջ գոյութիւն ունեցող զեղեցիկութիւնները, որոնց մասին խօսելու համար է որ գրած է իր գիրքը :

Կարճ խօսքով, գրական քննադատը պարտաւոր է հետախոյզ մը ըլլալ, գիտնալով թէ անձանթ նորութիւն մըն է զլիաւորաբար իր փնտռածը, որը պէտք է դիմանայ ճշմարիտին ու զեղեցիկին պահանջներով կատարուած լուրջ քննութեան մը :

Կայ նաեւ անշուշտ, անհրաժեշտութիւնը հիմնաւորուած ընդհանուր զարգացման մը : Ինչպէս արուեստագէտին համար, նոյնպէս գրական քննադատին համար, չի բաւեր ծանօթութիւնը գրականութեանց, կամ նոյնիսկ բոլոր արուեստներուն. անհրաժեշտ է աւելին, անհրաժեշտ է լայն (եւ եթէ կարելի է խորացուած) ծանօթութիւնը իրեն ժամանակակից, ինչպէս նաեւ նախորդող, իմացական, իմաստասիրական, ընկերային, ընկերաբանական, հոգեբանական շարժումներուն ու նոյնիսկ զանազան գիտութեանց ու քաղաքական հոսանքներուն ու մտադրութեանց : Մարդը, մարդիկ, ու իրենց շրջապատը, ազ-

զեցութեանց տակն են իրենց ժամանակին, նեղ ու լայն շրջապատին, անմիջական են և հետևաբար անցեալին, ցեղային ու արզալային պատմութեան, ժառանգականութեան, անձնական տաղտութեան, սիեզերական ալիքներու, ճառագայթումներու ետայն. որով, բնականաբար, արուեստագէտը, գրագէտը, որուն գործը ուսումնասիրելու պարտականութիւնը ունի զննադատը, ու նաեւ այդ գործին մէջ կեանքի կոչուած տիպարները, ազգեցութեանը տակն են այդ զանազան ու փոփոխուող պայմաններուն: Առանց համաշխարհային, համամարդկային և այլ տուեալներու ծանօթութեան, թերի պիտի ըլլայ զննադատին մօտեցումը արուեստագէտին, կեանքի կոչած տիպարներուն. ասկէ անհրաժեշտութիւնը՝ միջարզալային լեզուի մը ծանօթութեան ու յարատեւ ու լուրջ ընթերցանութեանց, կարելի եղածին չափ լայն հորիզոններով, ու կեանքին ու ժամանակին ներածին չափ խորացնելու քաղուած ծանօթութեանց պաշարը:

Վերջին պահանջը որ պէտք է դնել գրական զննադատին (թերեւս տառջին պահանջը) կը վերաբերի իր մօտեցման ու արտայայտութեան ձևին. ծաղրը, հեգնանքը, զանազան ձևի խաթրոցները լսելն ու կարդալը կրնան հաճելի ըլլալ ընթերցողներու մեծ մասին. ամէն մէկուն մէջ տեսարար արթուն է մանուկ մը, որ երգն ու պարը, խնդն ու ծիծաղը կը սիրէ, սակայն ստոնք տեղ չունին գրական զննադատութեան մը մէջ: Օրաթերթի մը էջերուն մէջ տեղի ունեցող լրագրապայքարի մը ընթացքին ներկի են սրամիտ խաթրոցները (ոչ հայհուակները) պայմանաւ որ քաջբռնչով մէջտեղ չբերուին անոնք եւ ունենան իւրականութեան որոշ հիմք մը. սակայն գրական զննադատութեան մը ընթացքին, երբ արուեստի փնտառումն է որ կը կատարուի, ներելի չեն անոնք, լըրուութիւն պէտք է հոն, մինչեւ անգամ երկիւղածութիւն, քանի որ ստեղծա-

գործութեան մը եւ ստեղծագործողի մը մասին են գրուելիքն ու ըսուելիքը. բնութեան ու մարդուն մէջ պահուած գեղեցկութիւնները ըմբռնող արուեստագէտները աւելի մօտ են Աստոյ, աւելի լաւ կ'ըմբռնեն զայն, ու գրական զննադատին կը մնայ յարզանքով մօտենալ արուեստին, արուեստագէտին, երբ զայն գտած է իրեն հրամցուած գործին մէջ: Իսկ եթէ ամբողջովին կը բացակային անոնք մատուցուած զրգէն, այն ժամանակ կարիքը չկայ արգէն գրադելու անով ու բացասական անկիւնէն մօտենալով զննելու քան մը, որ մեռած ծնած է:

Կայ նաեւ անշուշտ, գրական զննադատութիւն կատարողին ոճին հարցը, ու կարելի է խստասպահանջ ըլլալ այդ ուղղութեամբ, քանի որ ոճը արտայայտութեան այն լաւագոյն ձեւն է, որ ամէնէն շատ կը լարմարի ենթակային, ու ամէնէն աւելի կը նպաստէ զգացածն ու տեսածը լրիւ արտայայտելու իր ճիւղին: Բայց եւ այնպէս, ստանց շատ ծանրանալու այս մասին, ըսնէք թէ որքան դիւրին ըմբռնելի ըլլալ գրական զննադատին ոճը, այնքան լաւ: Ընթերցողը կարիքը ունի գրական զննադատին, լըրիւ ու լաւագոյն ըմբռնողութիւն մը ձեռք բերելու համար, արուեստի գործի մը մէջ. պէտք է որ կարիքը ունենայ ուրիշ գրական զննադատի մը, ըմբռնելու համար իր կարդացած զննադատութիւնը:

Քիչեւ «վերջին պահանջ» ըսինք, զննադատներու արտայայտութեան ձևին կապակցութեամբ, կը թուի սակայն թէ կարելի է պահանջ մը եւս դնել, զէթ մեր, հայ գրականութեան վերաբերմամբ արտայայտուող գրական զննադատներուն. այդ ալ նոր երեւան եկող գրական շնորհ ունեցող երիտասարդներուն ուղի մը ցոյց տալու պահանջն է: Մեր կեանքը, մասնաւոր արտասահմանի պայմանները չեն նպաստեր նո-

րեկներուն տալու պէտք եղած գրական փորձառութիւնն ու քաջալերանքը, ու անոնք շուտով կը կորսուին, կը խամբին, կամ միջազգային լեզու մը կ'ընտրեն արտայայտութեան համար, ու կը դառնան «ծագումով հայ» գրագէտներ, բայց ո՛չ հայ գրագէտներ: Անհրաժեշտ է, որ գրական քննադատութիւն կատարողը, երբ արուեստի արժէք տեսնէ նորեկի մը մէջ, իր կատարած քննադատութեան մէջ մտածէ նաեւ ճամբայ մը ցոյց տալու մասին, բարեխումբն համար զանազան ձեւերու մատնանշումներ րնելու մասին: Անշուշտ կը գիտակցինք թէ գրական լուրջ ամսագիր մը դասարան չէ, բայց պէտք է, ու կրնայ ըլլալ դպրոց մը, առանց դասարանի վերածուելու: Մենք չունինք գրական սալոններ, գրական մրցանակներ, գրական ամսագրեր եւ սակայն, հայ մշակոյթի յարատեւման համար անհրաժեշտ է որ նոր սերունդէն բարձրանան նո՛ր բանաստեղծներ, նո՛ր վիպասաններ, նո՛ր թատերագիրներ: Պէտք է անոնք օժտուած ըլլան աւելի զօրաւոր քեփիփով մը քան

իրենց նախորդները: Այդ բոլորը դըպրոցներու մէջ չեն սորվեցուիր, պէտք է գրական քննադատութեանց ընթացքին սորվեցնել: Հասարակ տեղիք խօսքերն ու քաջալերանքը պէտք է թողուլ անցեալին, ու պէտք է լուրջ, շինարար գրական քննադատութեան ենթարկել մեր հեղինակները, մանաւանդ նորերը, տալու համար անոնց ամուր պատուանդանը իրական արուեստին, ու պաշտպանելու համար իրական արուեստը պատեհապաշտներէն. բայց մանաւանդ, նպատելու համար հայկական գրականութեան մը զարգացումին, քանի որ համանուպի մը մէջ, ջութակէն մինչեւ սրինգ, ամէն մէկ գործիք իր բաժինը ունի բերելիք, ու իր արժէքը՝ անվիճելի ու անկորնչելի. համալիսարհային բազմազգ ընտանիքին բազմատեսակ մշակոյթներուն մէջ, հայ մշակոյթը ունեցած է իր արժէքաւոր տեղը ու պարտաւոր է պահել իր գիւրջերը, միշտ ձգտելով աւելի՛ գեղեցիկին, աւելի՛ բարձրին:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ





ԴԵՎՔԵՐ

Արտասահմանի գրական կարեւոր ֆգեմբերու վաստակին մասին մեր ընդ-ի. տպաւորութիւնները պիտի արձանագրենք այս բաժնին մէջ, այդ վաստակին հիմնական գիծերուն վերջանումով: Տպաւորապաշտէցերու այս շարքը կը սկսինք Կ. Զարեանով:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ



Այս հանրածանօթ դրողին սերնդա- կիցներէն մարդիկ զարտուղի մեծու- թիւն մը տեսան իր արուեստին մէջ, չգիտեցան ինչնատպութիւն մը: Ոմանց համար գեր-գրագէտի պէս բան մը եղաւ ան, խոր ու խորհրդաւոր անձ- նաւորութիւն մը, տեղը անծանօթ, նա- խասիրութիւնները անծանօթ, առօրեան անյայտ: Հրաշք-արուեստագէտի, ու նորէն հրաշք-մտածողի երկարատեւ քա- ռողութիւն մը կատարուեցաւ՝ համարեա ամէն մարդ արհամարհող այս մարդուն համար, որ իր մեծածաւալ ճեպին ալ- պեան ուղեւորը, այլ մանաւանդ տա- ղանդ վատնող ուխտադնացը եղաւ կար- ծես, ի հայութիւն զարձի իր առաջին օ- րերէն իսկ: Արհամարհանքին ու ամբար- տաւանութեան առջեւ անզամ՝ չյողմե- ցան կարծես շատեր ժպտելէ, վեթխարի է ըսելէ: Ծափահարեցին զայն նորածագ արեւ մը իբրեւ, մեր գրական երկնակա- մարին հորիզոնէն բարձրացող:

Անմիջականօրէն իրեն յաջորդող սե- րունդին յառաջապահ ուժերը սակայն - տաքարիւն ու տաքաիրտ տղաք - , մեր- ժեցին անոր գրականութեան մէջ իրաւ հայութիւն ու իրաւ հանճար տեսնել: Մեծածաղիթ եւ գոռ արտաքինի մը ետին,

բառերու թէ անձի՝ գտան խոնարհական արամադրութեամբ փոքր արարած մը: Կարծրափայլ սասցուածքներու տակ՝ հանդիպեցան արեւածաղիկի խոտոր ու խորթ կենցաղով տարբեր Զարեանի մը, որ գրեթէ անկերպարան մէկը թուեցաւ իրենց: Զղայնացան անոր սփինքային ախորժակներէն: Զայրացան: Եքեղափառ անբարոյութիւն մը թուեցաւ ի վերջոյ այդ ամբարտաւան Եամախին, Տէր- Զօրի անօրինակ գեհններէն նոր ժամա- նած տաք ու ըմբոստ տղոց համար: Պարսակեցին զինք խնայել չընտրող բա- ւերով: Նկատեցին կարծես՝ ենթադրա- գէտ մը:

Գովասանքին ու պարզակին աշխա- տակցութենէն ծնունդ առաւ ապա Զարե- անի առասպելը:

Այսօր, ըստած լուսն ու գէլը դուռ- չութեամբ կը ղենեք մէկկզի: Չենք զբա- ղիր իր անձով, երէկուայ թէ այսօր- ուայ: Չենք զբաղիր իր ունեցած վերջին ելոյթով, համակրելու եւ համակր- ւելու իր առեւտրական զբաղամներով: Փռքի եւ աւելի մէջին մուրացկանու- թիւններու կարօտ աշխարհաշրջիկե- րուն անձով զբաղելու սիրտ չունինք առ այժմ:



Գոյներու մոլի մըն է Կ. Չարեան և լոյսերու խենթ մը: Արուեստագէտ աչք մը՝ չըջապատի բնանկարներուն և մարդոց վրայ բացուած: Ու այդ աչքին, տեսնելու բացառիկ կարողութեամբ օժտուած այդ աչքին հասածը՝ խելօք լոյսեր չեն, ծոյլ ու հանդարտ գոյներ չեն: Ո՞հալ, ու խռովք, ու հոգի ունեցող լոյսեր են: Ապրող, շնչող, շատ անգամ մարդու մը պէս գիտակցութիւն, կամք ու սիրտ ունեցող գոյներ են կարծես: Չարեան դրած է գանձը իր ստեղծագործութեանց մէջ իրենց առանձին ճակատակիրն ու լինելութիւնը ունեցող գոյութիւններու պէս: Եւ արդէն, Չարեանի մտքին մէջ ոչ մէկ բան մահկանացու է, ոչ մէկ բան անկենդան, անշարժ: Ուժերու կուտակում է ամէն ինչ, ցըրուած, վերակուտակում: Լոյս, ալիք, թրթռացում:

Եւ սակայն, լոյսի եւ գոյներու այս մեծ ու մագնիսաւար խենթութիւնը տեղ տեղ կը կորսնցնէ իր բնական ու նուիրական հանգամանքը, վերածուելու համար արուեստական լոյս եւ գոյն յառաջնելու բռնի ճիղի մը, չըսելու համար անպարտութեան մը: Կը տեսնենք հեղինակը յայնժամ կեղծ յափշտակութեան մատնուած մէկու մը գիրքով: Չարեան զոհն է այս պարագային իր իսկ տաղանդին: Զոհը՝ իր թիւ մէկ առաւելութեան, զինք յալողութիւններու տարած առաջնակարգ մէկ նախասիրութեան: Շատեր, իրեն պէս, բարձր տաղանդով թէ միջակ՝ նոյն դժբախտութեան մէջ են:

Կեանքի մեծ ճամբաներուն մեծ անցորդներէն եղաւ մեր դրականութեան եւ կամ այս մենաւոր մատենագիրը, երկարատեն: Եւ իր միջոցները փոքր չէին. հարկ է ընդունիլ ատիկա: Եւ հարկ է սակայն արժանազդէլ նոյն ատեն, որ իր ճամբաներու գրեթէ բոլոր հանգրուաններուն վրայ, փլած մեհեանի մը փայլուն յիշատակներով պտըտող այս մեհեանագուրկ մարդը, քրճապետական չլազե-



ցած յաւակնութեան մը դաշնակը ըլլալու փոքր պայածը ստանձնեց՝ երբ պէտք չկա՛ր ատոր: Իր դրականութիւնը յօգտուեցաւ առկէ. ուռեցաւ թրեւա, բայց արժէքէ աւելի՝ ...օղով: Աւելին: Արմատացած, սեփական ապրում եղած անդերազանցելութեան համբաւ մը իր անաղարտ վիճակին մէջ պահելու յիսնամեայ մտահոգութիւն մը՝ բարձրագոյն խոհի եւ վերանցական բարդ հողեւիճակներու ստու յղութեամբ ուռեցուց իր գործերուն կարգ մը էջերը: Երանիքը բաժն չըլլա՛ր ատիկա՛ւ, նոր զարդափետուրի պէտք չունէր ինք: Բնութեան տուած փեստերները գեղեցիկ էին արգէն ու բաւարար՝ դուրսը հմայե տարածելու եւ ներսը ջերմութիւն:

Այսուհանդերձ, բոլոր տկարութիւններու զեղչէն ետք, Չարեան չի դադարի մեր արդի դրականութեան կարեւոր բարձունքներէն մէկը ըլլալէ:

Կեանքի արաստովոր կեցուածքներու այս բարձրագոյն պատմիրը՝ գոյն տուաւ մեր դրականութեան եւ առնական մարդու ստղծելու շնչաւ: Ու ստուաւ փայլ, ու ստուաւ տիւնամիզմ: Լայնցուց,

ընդարձակեց մեր գրականութեան սորորարար նեղ Հորիզոնը: Ունեցաւ մտքի թռիչք, օրակարգի նոր ու աւելի լուրջ հարցեր դրաւ սեղանի վրայ, ու փորձը կատարեց իմացական մեծ սուղումներու, դէպի տիեզերք եւ կեանքի յաւիտենական խնդիրներ: Իր յանդնութիւնը այս ուղղութեամբ՝ շատ անգամ ցոյց չէր եւ ոչ ալ կեղծիք էր:

Ուժեղ եւ անակնկալ խօսքի վարպետ մըն է Զարեան: Օշական ըսաւ՝ քառերու կախարդ մը: Երբ կը գրէ, ճառագայթող գոյններու քամի մըն է իր բերել ուզածը մեր գրականութեան: Առաւօտեան մաքուր օդերու թարմութիւն մը, առողջութիւն մը: Գրեթէ ամէն էջի վրայ կայժայռ կարծես կախարդական կարողութենէ մը ստեղծուած գունաւոր մրրիկը, խոհերու, մեկնաբանութիւններու եւ վսեմ ծաղրի այդ տարօրինակ պտուտահողմը:

Հուժկու մտածող մը ըլլալէ աւելի, մտածումներու ճարտար մեկնաբան մըն է, իմաստներու բարձրաճաշակ հանդերձող մը: Իր խօսքերը շլացուցիչ պայծառութիւն մը ունին, բայց չունին արուեստի համապատասխան ջերմութիւն:

Իր մեծ ու փոքր ստեղծագործութիւնները լուսայորդ նկարագրութեան եւ խոհի բարձրաթռիչ ասացուածքներու քեֆնիփոխը Ֆիլմեր են կարծես, եւ կը կոչուին «Երեք Երգ», «Օրերի Պսակը», «Անցորդը եւ իր ձմարան», «Տատարազո-

մի Հարսը», «Երկիրներ եւ Աստուածներ», «Բանկօսողը եւ Մամութի Ոսկորները», «Նաւը Լերան Վրայ» եւ ինչ որ կը մնայ տակաւին:

Զարեանի գրականութիւնը բառերու շքեղ տօնակատարութիւն մըն է, բանաստեղծական բարձրահունչ բարբառի անվախճան տօնախմբութիւն մը, նաւասարդեան աշխարհախումբ օրերէն մեզի հասած պտտառ մը օպիտակ տեսիլք:

Էթնոսական շեշտ մը, ուժ մը, ուժգնութիւն մը ունի իր կեանքին համար իտայական կղզի մը նախընտրած այս բանաստեղծը: Էին յոյնի մը պէս է, հին հռովմէացիի մը պէս, ու նաեւ հոգիին մէջ վայրագ Վիքինկի մը կեանքը ապրողի մը պէս՝ ծով ու խորհրդապաշտութիւն սիրող այս հայը:

Կ. Զարեան իր անձն ու խօսքը բեմ հանելու եզակի տաղանդ մը ունի, որմէ զրկուած են շատեր: Ունի հոգեկան բարդ կացութիւններ քանի մը բառի մէջ սեղմելու բացառիկ կարողութիւն: Այլ մանաւանդ բարձր խոհի վսեմ դերակատար մը կը ճանչնանք զինք մենք, իր ապրումները վսեմօրէն արտասանող մը:

Զարեանի գրականութեան մէջ անբաւարար՝ ջերմութեան մթերքն է, սրտին տաք ու խորունկ դրամազուլիս: Առանց այդ պակասին, ան պիտի կրնար ըլլալ մեր ազգային դիւցազներգութեան ու արուեստի աստուածներուն հարազատ քարտուղարներէն մին:

Ե. Գ.



Լեւոր Գիրքեր

ՔԱՊԻՆ-ի այս բաժնին մէջ նոր գործերու կարգին պիտի գրախօսային նաեւ 1960-61 տարիներուն լոյս տեսած գիրքերը: Մեր ծրագրէն դուրս կ'իյնան անելի առաջ հրատարակուած գործերը: Այս վերջիններս մասին ի հարկին պիտի արտայայտուինք աւանձին յօդուածներով:

ԹՈՒՂԹ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՄ

(ԵՒ. ՊՅԱԿՅԵԱՆ)

«Մի վարուիք քնիքցողի պէս, արուեստի չոր ֆնճադաօթի պէս»:

Եղ. Պոյանեան, իր «Թուղթ»ին մէջ, տեղ մը վերի խօջերով (մի վարուիք) կը մօտենայ իր զաւակներուն: Պոյանեանին աշակերտած ըլլալով՝ մենք ալ ձեռով մը իր զաւակներէն մէկը կը հաշուութիւնք, բայց դժբախտաբար այս է՝ ջերուն յանձնուող մեր տպաւորութիւններուն մէջ իր բաղձանքը յարդուած պիտի չպտնէ, որովհետեւ ներողամիտ ընթերցող քնաւ չենք եղած, եւ չոր քննադատին վրայ անկցած չար քննադատի մեր չար ախորժակները անլորդ կը պտնենք յիշել այտտեղ, որովհետեւ մեր ուսուցիչը դժուար պիտի հաւատար իր աշակերտին բարութեան:

Այո, չոր ենք ու չար՝ երբ խնդիրը դիրքերուն վերաբերի: Բարի չենք ու չար ենք կրկին, երբ կը խօսինք Պոյանեանի այս բաղձին մասին, որ, իր կարգին ու իր ամբողջութեանը մէջ, գորոչներու և հանրային այլեւայլ ասպարէզներու ներկայացուցիչներուն գործերն ու արարքները զարխօտող արասփելիօրէն դաժան ու իր դաժանութեամբ սերբելի համանուագ մըն է: Ինչ խօսք, որ ընթերցողին բարութիւնն ու չարութիւնը յարաբերական են գիրքերուն զօրութեան կամ տկարու-

թեան հետ: Յաղթական գեղեցկութեան մը առջեւ չի կրնար շարանալ ընթերցողը, իսկ վրիպած գործի մը դիմաց ոչ ոք կրնայ ապահովել անոր բարութիւնը: Զարունակենք սակայն բացայայտ ճշմարտութեանց այս թւումը եւ անցնինք մեր նիւթին:

Գիտուած է, որ հայրերը կեանքի և մահուան օահմանադուրծին վրայ կեցած՝ դողող մատներով կը գրեն եւ մարմրուն ձայներով կ'արտասանեն հայրական իրենց զօրաւորագոյն խօսքը, կտակը: Այս «Թուղթ»ը տարբեր ժամանակէ մը կուգայ սակայն. վերջին օրերը արդող հօր մը վերջին խօսքը չէ անիկա, այլ քառասունի եւ յիսունի ճիշդ մէջտեղը կեցած մարդու մը «անձկագին կանչն» է, ուղղուած տասը քիչ մը անցած եւ տասնի մօտեցող իր զաւակներուն: Ըսել կ'ուզենք կեանքին սեւ կողմերը եւ պայծառ երեսները պայծառօրէն դիտելու եւ դատելու տարիքի մը մէջ խմբագրուած է ան: Ուր՝ անցեալը չէ գերակշիռ մասը, աւարտած կեանքի մը փորձառութիւններուն մէկտեղումը չէ, այլ անմիջական կեանքն է, հեղինակին հողիին մէջ, արեան մէջ, շրջապատին մէջ շրջան ընող, թաւալող ու բազմախոր կեանքը:

Ընթերցողը դիրքը աւարտել շատ առաջ, կը ճշդէ որ իրար հրմշտուող հարցերով խճողուած մեր այսօրուան կեանքին հետ, անող գիտութեան, անող արուեստներու, անող խաբեբայութեանց, անող մեքենաներու եւ մեքենայութիւն-

ներու հետ՝ մեծ սէրերու, մեծ վտանգներու, մեծ ու ամպամած շփոթութիւններու յորձանապտոտսին դիմաց, անած են նաեւ հօր մը խոհերը ու զերթուածոյ մը, իրենց դաւակնիւրուն էջոյ մը ներկայանալու դասական սահմանները զանդեղով՝ առիթ տուած նարիւրէ աւելի էջերու վրայ տարածուելու անդիմադրելի զեղումին:

Հայր մըն է այս «Թուղթ»ին հեղինակը, առաւել՝ Հայ մարդ մը, առաւել՝ ուսուցիչ մը, եւս առաւել զբաղէտ մը եւ աշխարհը ալիկոծող Հարցերուն դիմաց առաւելագոյն անձկութեան մը մատնուած անձկագին կանչ մը: Հայ մարդուն, ուսուցիչին, զբաղէտին ու մտածող անձին պայթանակներն ու անկումները, յոյսերն ու յուսահատութիւնները, խանդավառութիւններն ու անձկութիւնները զով զովի կուզան հօր մը մէջ ու, «կեանքի որակային կողմերը ճշգրտ կողմնացոյց» մը իրբեւ, կը յանձնելին «ապագայի անպառ տեսիլքը» շարունակելու կոչուած իր երկու զաւակներուն՝ «աշխատող ուժին» (տղան) եւ «աշխատող զեղեցկութեան» (աղջիկը):

Պօյաճեանի մէջ կը տարանայի ու կը խանդավառուի հայը, կը հիանայ ու կը դառնանայ ուսուցիչը, զբաղէտը կը խորանայ, մտածող մարդը կը բաղդատէ իսկ հայրը՝ Հայրական անհուն փառասիրութեամբ՝ կ'ընտրէ: Կ'ընտրէ ինքմանաւոր արդիւնքներու տանող մեծ սէրը, մեծ հաւատքը, ստեղծագործ աշխատանքը, ամենագեղեցիկը, լի-իրաւը, լիազօրը:

«Թուղթ Չաւակներու» Հատորին հեղինակը, մեծ մասամբ ինքն է, որ կը լեցնէ գիրքը՝ սէր, Հայրենիք, ազատութիւն, մարդկութիւն, գրականութիւն եւ ուսուցչական կեանք կոչուած իր ճակատագրական ներթերով: Ինքն է զբնիւրող հերոսը, անմիջական ներկան է գիրքին միջավայրը, այդ ներկայէն առուած են միւս հերոսները: Կը նայի շուրջը ու իր տպաւորութիւնները թուղթին կը յանձնէ լուսակերպերով ու սե-

ւագրելով: Հիանալով ու հիասթափուելով յաճախ: Վերաւորուելով ու վերանալով միշտ: Կը ներկայացնէ ինքզինքը, իր ժամանակը, լրջապատը, մարդերը՝ համակրանքի եւ ծափահարութեան այդ դաժան հարկահաւաքները: Մօրաւատար սղիտութիւնը (տէրտէր), եւ տէրտէրին աշխարհաբար տեսակը (վարժապետ) եւ վերացական կրիփներու սրծգոյն պաշտօնեան (Գրողը): Կը մերժէ կէս-ներկայութիւնները (արուեստագէտները անշուշտ), քառորդ ներկայութիւնները (մարզաբեմերը ի հարկէ), բացակայութեան հետ շփոթառոգ ներկայութիւնները (սուրբերը անտարակոյս):

Պօյաճեան կը խօսի մարդ էակը ազատութեան ու կատարելի տանող մեծ ներթերուն մասին, այլ անոնց ախորժան ներկայացուցիչները կը դտնէ թոյլ, տխուր, ազէտ: Կը սահմանէ գրականութիւնը, ու տկար կը գտնէ զրոգները, կրօնքին վսեմ դերը կը վսեմագրէ, այլ նսեմ կը գտնէ անոր պաշտօնեաները, դիտութեան միթխարի յառաջընթացը կը դրոտատէ, բայց կը զարհուրի անոր այժմու ձգտումէն: Հայ կեանքին մէջ կը փնտնէ մանաւանդ մեր այսօրուան Պրոմէթէոսները, մեր մարգարէները, մեր անհուն տիպարները, փոխարէնը սակայն կը գտնէ զբոլոր մարգերում վրայ տուր տեղատուած խաչագողներ, այս կամ այն վարդապետութեան մեծ ծխակատարները, այս կամ այն ուսմունքի խոժոռ արարողապետները, գիտութեան եւ արուեստի վարձու մունետիկներ, կրօնքի եւ յեղափոխութեան մեծ շուկայի լուսավայտներ:

Պօյաճեան անողոք է մանաւանդ իր սերունդին հանդէպ, որ՝ «վախցաւ գահաբերութեմէ, վախցաւ հերասութիւն, համեստութիւն ու համբարութիւն պահանջող հանրային սրբագրութիւններէ, վախցաւ մնամանց խոժոռ գիրքի մըութեմէն, եւ որդեգրեց փայլուն զրծգոնութիւնը, մեծաւոր ան ձայնաւոր

ծոյնբու յատակ քամբսամբը, քոյլ արուեստագէտներու անհում շատախօսաւթիւնը:

Անհատական ու հանրային կեանքին մէջ փոթորիկներ տեսած, փոթորիկներու մասնակցած եւ ինքն իր մէջ փոթորիկող հոգիի մը զիրքն է Քուլպը, ամէն ինչ զօրութեամբ ապրող, բոլոր ինզիրները խորհրդածութեան նիւթ դարձնող մարդու մը ներքին կենսապրականը, իր մարմինն ու ժամանակն անշատուած եւ ուրիշ մարմիններու ու ժամանակներու մէջ ապրող մարդու մը խոռովիչ արկածահնչողութիւնն է տեղ տեղ, ապրումներու հեղեղային հարստութիւն մը, որ, ի դէպ, իր ճոխութեան հետ կը բերէ նոյնպէս հեղեղին հետ ենթադրելի կարգ մը անպատահութիւններ, վնասակար անկարգութիւններ:

Պօյանեանի խառնուածքը միշտ չէ ննազանդած իր մտքի հակակշռին ու ատկա վնասած է դասակարգումի եւ կառուցումի կենսական աշխատանքին: Միեւնոյն նիւթին՝ տարբեր հարցերու նուիրուած էջերու վրայ կը հանդիպի ընթերցողը, մինչդեռ պիտի ուզէինք, որ իւրաքանչիւր նիւթ սկսէր, զարդանար եւ աւարտէր առանձին զլուխի մը տակ: Օրինակ, եթէ աննէր սէրը, սիրոյ փիլիսոփայական իր իմացումը, իր փորձառութիւնները, սիրոյ անունով մարգոց կատարած մեծալործութիւններն ու գոհհոլութիւնները, այսինքն՝ եթէ այդ հարցին մասին գնանգան էջերու վրայ իր ըսածները թող գոյի բերէր ու դասակարգէր մտածումները, եւ այդպէս զարգացնէր իր բոլոր նիւթերը՝ այն ատեն կ'ունենայինք մեր օրերէն, մեր մասօրուան հոգեբանութիւնն ըխած, մեր ընթերցողին ճաշարը գոհացնելու կոչուած մեծ գիրքը: Կ'ունենայինք մեր օրերու կնիքը կրող այլ դասական գրականութեան անցած դասական գրականութեան մէջ նմոյշը: Որովհետեւ սերունդը, որ կայ այսօր, պատմութեան աւելի մտածումը կը սիրէ, կը սիրէ վեր-

լուծումը յախուան, սուր, դաժան խօսքերու այն անողոք մրրիկը որ կ'արշաւէ Պօյանեանի զիրքին մէջ ու սրբիկ կ'ընծայէ էջերը:

Կրկնենք:
Եթէ Պօյանեան կառուցումին քիչ մը աւելի ուշադրութիւն ընծայէր, եթէ կարգ մը տեղեր ընթերցողին վերապահէր որոշ հարկացութիւններ հանելու գործը,

Եթէ իր ընարած նիւթերուն մասին խօսելու իր արամադրութիւնը շայտնէր եւ ուղղակի միտնուէր անոնց մէջ, ու նաեւ միշտ չլիշցնէր մեղի, թէ դասականութեան հետ կը խօսի, այն ատեն, ըսինք արդէն, թէ ինչ որակ կը ստանար իր Քուլպըն:

Մեր առհասարակ ժառանգութեան հաւատարիմ ու ճշին ու յաւիտենական արեան» մը հրահանգով իր մտածումներն ու զգացումները ձեւակերպող հեղինակ մըն է այս Քուլպընին հեղինակը, բարի ու կոտազան, համեստ ու յախուան, յափշտակող ու յարձակող, արդարութեան ծարաւ ու իմացական արկածահնչողութիւններու ձեռնարկող հիասքանչ խելագար մը:

Կր սեւագրէ ու կը զգոռացնէ:
Կը վերանայ ու կը վարակէ:

Քուլպ Ջաւահիրուսը իւրայատուկ շեշտ մը կ'աւելցնէ Սփիւռքի զրահանութեան վրայ ու կը հանդիստնայ Պօյանեանի ստորալրած գործերուն աւելնէն տաքը, անմիջականը, ամէնէն հանդիսատէրը: Պերճաշուք նախադասութիւններու ճոխ հանդէս մըն է զիրքը ծայրէ ծայր, անակնկալներով յորդ, մտածումի փայլատակումներով եւ ներքին լոյսերով ողողուած բարախուն պատկերասրահ մը:

Միշտ պիտի կարգացուի այս գործը, եւ ընթերցողը բնաւ պիտի չմոռնայ ի մասնաւորի զսիրոյ առջեւ մեծագորկայարութիւն մը գոհաբերիչաւ խեղդութիւնը գործող խոռովիչ եւ իր գեղեցկութեամբ խոռովարար Շամիրամը, մեղի պէս պիտի սիրէ Քուլպ Ջաւահիրը:

բուս» հաստորին մէջ յարուցեալ նիւսէի այդ ալամանդեայ բողբ (էջ՝ 23): Պիտի շմոռնայ հասու զպատկանութեամբ» շարժող տիպարը (էջ՝ 37): Կրկին պիտի բանայ հայոց պատմութեան վերլուծման նուիրուած տասներորդ զլուխը (էջ՝ 62): Իր հողիին մաս պիտի կաղծէ յուլտունահար Մեսրոպ վարժապետին սրտատուչ խօսքերուն բովանդակ յուսուամբ (էջ՝ 85): Պիտի շմոռնայ ու միշտ պիտի յիշէ կնոջ անճանաչելի հոգիին ճանաչուած կատարող հրաշալի մասը (էջ՝ 107):

Պօսճեանի զուակնեբը, որ մեր տարիքին հասնելէ ետք պիտի հասկնան իրենց հօր կտակը, տարակոյտ շունինք, թէ իրենք ալ, մեղի պէս պիտի սիրեն անոր մէջ աչն մասը, որ՝ «վերացական երաժշտութիւն» կը կոչուի, պիտի սիրեն «արթնութեան վայրկեանին ռել մէկէն խաբուող» մարդը, «արգարալութեան զառանցամէքնու համանուագ» յօրինող անձը, «նոր ու խորունկ բաներու հետազօտութեան մեկնելու» պատրաստ խուզարկուն, «քոյններու մատենագիրը», «ամէնէն աւելի երախտապարտ պիտի մնան իրենց հօր զբառերու սուտ հնոց»ին, «հնոց թէժ պահող անձին, զբարդէտին»:

Բայց մեր տարիքը հասնելէ շատ առաջ պիտի ուզէինք, որ տղան կարգայտ - Անհրաձեշտ է տղուն գայրանալը հօրը դէմ: Հարկ է կռուիլ օր մը եւ աւտի: Նոր բաներ ըսել: Գիտ ընել: Ստեղծել:

Կարգայ ու գործարդէ: Կարգան ու գործարդին բոլոր տղաքը:

Պ. Ս.



ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Բ. ԹԱՇԵԱՆ

Միջակ ծաւալով հատոր մըն է որակով մեծարժէք այս ուսումնասիրութիւնը,

արգաստի՜ Բ. Թաշեանի տարիներու տեմազան շխտատուքին եւ կատարած պրպտումներուն: Մեր գրականութեան եւ այդ գրականութեան կցորդ հարցերուն հմուտ մտաւորակամի մը գործն է որ, իր, հեղինակին իսկ բառերով «աւելի շատ ուղղուած է գրականութեան եւ գեղեցիկ դպրութեանց թեկնածուներուն»:

Գրքին հիմնական առաջադրութիւնն է դիրութիւն մը ընծայել «մեր գրականութեան մայրուղին ուսումնասիրել փափառողներուն»:

Դիրութեան այդ շխտատուքը կատարուած է մտաւորակամի վայել լուրջ մօտեցումով ու բարեխղճութեամբ:

Արդարեւ, Բ. Թաշեան ճիգ չէ խնայած իր ուսումնասիրութեան ընթացքին, մեր ընդհանուր մատենագրութեան մէջ զանազան առիթներով ծնծուած զբոնքէ բոլոր հարցերը ի մի հաւաքելու, զանոնք իրենց կարեւորութեան կարգով դասասօրելու, բննելու եւ անոնցմէ համապատասխան երակացութիւններ հանելու համար:

Բ. Թաշեանի այս 240 էջերով գիրքը նախաբայում է կարծես հետազայ շատ աւելի ծաւալուն, շատ աւելի հետաքննող նայող շխտատասիրութեան մը, որուն առդար փառասիրութիւնը կրնայ ըլլալ, գործի լայն կտաւի մը վրայ այս անգամ, տալ մեզի հայ գրական ճիգին ընդհանուր պատմութիւնը, իր բազմադարեան յաւաքընթացին ու հոլովական ծիրին մէջ:

Նման խօստում մը զգացնել կաւտայ մեզի հեղինակը, *Ընծայականի* իր վերջին տաղերով:

Բ. Թաշեան, իբրեւ մտաւորական, գրականութեան ու լեզուի մասին իր կատարած մեծ աւ փոքր ուսումնասիրութիւններով, տասնամեակներէ ի վեր փաստը տուած է արդէն, քէ Գրի արտայայտութիւններու մոլի մը չէ ինք, քէ խօսելէ առաջ մտածել գիտէ, քէ մտածումներուն մէջ գիտէ մանաւանդ

կարգ, կանոն եւ շնորհաբան ղնել: Իր գործածած մաքրապայծառ հայերէնը արժանաւոր մշակմբերէն մէկը կ'ընէ զինք մեր Մեծաստանչիքն:

Յիշեալ բոլոր դրական տարրերում կը հանդիպինք այս գրիւմ մէջ: Կը հանդիպինք նոյնիսկ հեղինակի իմաստին, ժպիտի նմանոց խօսքի դարձուածքներուն եւ համբաւաւոր համեստութեան: Ջերմ շունչով գրուած ուսումնասիրական երկ մըն է, որ համակրանքով ու հետաքրքրութեամբ կը լսենք ընթերցողը, հանդէպ շօշափուած նիւթերուն:

Հեղինակը կանգ առած է 58 նիւթերու վրայ, որոնք այս կամ այն չափով կապ ունին մեր գրականութեան եւ այդ գրականութեան պատմութեան հետ:

Գիրքը համարեա ամէն էջի մէջ կը զգացնէ մեզի, թէ հեղինակը տասնամեակներով մտածած է ներկայացուած հարցերու մասին՝ ու տագնապած:

Երկարօրէն վէճի ենթարկուած ու դեռ վիճելի մնացած բոլոր հարցերը Իրենց պարզազոյն տարագով ներկայացնելէ եւ անոց մասին հին թէ նոր հեղինակաւոր գրիչներուն թեր ու դէմ կարծիքները յիշելէ ետք, մօտեցումի կարելի առարկայականութեամբ մը, գերծ աճէն ազդեցութենէ եւ կանխատրամադրութենէ, Բ. Թաշեան կը յայտնէ իր տեսակէտը:

«Ներածութիւն հայ գրական պատմութեան» հատորին հեղինակը իր ուսումնասիրած նիւթերուն մասին եւ անոց առիթով վերջնական վճիռներ չ'արձակեր:

Արդարեւ, Բենիամին Թաշեան յաւակնութիւն սնուցանելէ, որչափ զիտեմք, խրոչած է միշտ: Ձէ գնահատած եւ գնահատելի չէ՝ արդէն, գրական հարցերու քննարկման առիթով վարդապետական եղանակ մը որդգրելը:

Եզրակացութիւն: Բ. Թաշեանի այս հատորին մէջ կը կանատեսնենք՝

- 1.- Մտաւորականի բարեխղճութիւն,
- 2.- Հարցադրութեան յստակութիւն,
- 3.- Նախապշարու մէ գերծ մտալիճակ,
- 4.- Հետաքրքրութեան և արուեստի հայհեցմբերու բաւական լայն հորիզոն:
- 5.- Աօրեայ ապրում հայ գրականութեան եւ լեզուի եւ ապա
- 6.- Այս բոլորին վրայ տարածուող, այս բոլորը իր մէջ պարուրող սէր մը, զերմ շունչ մը, բծախնդրութեան տագնապ մը:

Բծախնդրութիւնը Բ. Թաշեանը հասցուցած է հոն, որ տագնապած է նոյնիսկ քանի մը բառերու սահմանումին համար. «Գրականութեան» Պատմութիւն» թէ «Գրական Պատմութիւն», «Հայոց» Պատմութիւն» թէ «Հայ Պատմութիւն»:

Յուսանք թէ մեր գրախօսած արծաւառ երկինք բարի հեղինակը կը ներմեզի, եթէ այս առիթով արձանագրած իր տագնապը գտնենք երկար եւ արւարդ: Այսինքն ի գուր վատնուած ճիգ եւ բծախնդրութիւն: Եթէ շատ մաղինք, օրինակ գիշեր ցերեկ մաղինք, վախճանք որ ոչ Գրականութեանը մնայ մաղին մէջ և ոչ Գրականը: Վախճանք որ չ'մնան նաեւ Հայոցը եւ Հայը:

Չենք գիտեր, ներելի՞ է արդեօք մտավախութիւն ունենալ եւ մտածել, որ 1961ի վախճանին իսկ, կրնան տակալին գոյութիւն ունենալ այս երկրագունդին վրայ մարդիկ, որոնք Գրականութեան Պատմութիւն կարդալու մակարդակին հասած ըլլան, եւ ակայն Գրականութեան պատմութեան մը մէջ փըմտենք պատմութիւնը ամէն բանի որ զգրուած է՝ փնտռեն դարձնալ պատմութիւնը «ամէն մարդու որ բան մը գրած է: Փնտռեն՝ նոյնիսկ պարզ բարեւազիք մը, բառ մը: Եթէ կան կամ երեսակայելի են իսկապէս նման մարդիկ՝ վայ է եկեր այս անգամ Գրականութեան ալ զլիտուն, Գրականին ալ, Հային ալ, Հայոցն ալ:

ԹՈՒՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ

— ԵՐ Ե Ի Ա Ն —

(ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ)

ՈՐՈՆԱԾ ԽՕՍՔԵՐ

Ես որոնե՞ր եմ... բայց գտել է քեզ
Համեստ, ճիսաքանի այս պատանին...
Եւ այսօր այնքան բախտաւոր եմ ես,
Որ ունկնդիր եմ նրա ծայնին:

Համօ Սահեան

1948-ին դրուած Հինգ տուննոց քերթուածի մը մէկ տունն է Համօ Սահեանէն մէջըներուած վերի քառեակը: Քերթուածը նուիրուած է ռորոնած խօսքերձու գիրտը ընող «Համեստ ու Հիասքանի» վահազն Դաթեանին, որ Հայաստանի դրահանութեան յետպատերազմեան սերունդին ուշագրաւ դէմքերէն մէկը համարուելէն ետք, այսօր, «Թոնոգրակեցիներ» պատմական քնարախաղով կը նուիրագործէ իր տաղանդը:

«Թոնոգրակեցիներ»ը նախ երեցաւ «Սովետական Գրահանութիւն» ամսաթերթին մէջ (1960, թիւ 9-10) եւ ապա լոյս տեսաւ Հատորով: Նոյն թերթի 1961 Մարտի թիւին մէջ Ս. Արզումանեանի ի մէջ այլոց ըսած քանի մը խօսքերէն զտա՝ այս գործին մասին յայտնուած կարծիքները տակաւին անծանօթ կը մընան մեղի: Բայց այն փաստը, որ մրցանիշ կոտորող տպագրանալով մը (10,000) լոյս կը տեսնէ Հատորը, ինքնին բացառայտ կը դարձնէ գործին զտած ընդունելութիւնը եւ հեղինակին շուրջ ծաւալած համակրանքը:

«Թոնոգրակեցիներ»ը Զորդ դարուն երեան եկած եւ այդ անունով ծանօթ աղանդաւորական շարժում ընդգրկող քնարախաղ մըն է, իրենց լեզուով «պատմական-արամատիկական պոեմ»

մը: Գործող անձերէն զլիաւորները կը կոչուին Վանահայր, Արուհ-հարդ ամիրա, Ալ-Իբն Մանսուր, իշխան Փառնակ, Քունձիկ արեղայ, Դանան, Փոկաս, Իշխանուհի Փառանձեմ, Սոփի, Նանէ, Տիրայր արեղայ, Սիմալոն պատմիչ, Սըմբատ Զարհաւանցի եւ ուրիշ երկրորդական տիպարներ եւ ամբողջ մը:

Առաջինը եկեղեցական մտայնութիւն մը կը ներկայացնէ.

Ներկորդը՝ իշխանատննչութեան.

Ներորդը՝ շահագործումի.

Չորրորդը՝ աւատապետական.

Քունձիկը բարձրարուեստ նննզն է ու նրբամիտ խարեբան.

Դանան ու Փոկասը պատուախնդրութիւնն ու անձնաղոհութիւնը կը ներկայացնեն.

Իշխանուհի Փառանձեմը գտող ու միանգամայն սիրախանձ կիներ է.

Սոփին ու Նանէն մաքուր սիրոյ խորհրդանշաններ.

Տիրայրը արեղան կեանքը ապրելու սենշանքը կը մարմնացնէ.

Սիմալոն պատմիչը՝ իր խղճին չղաւածանող անկաշտ մարդու տիպարը.

Իսկ Զարհաւանցին կ'անձնաւորէ գիտական միտքը, ժողովուրդը նախապաշարունակէ ազատագրելու եւ ընկերային հաւատարմութիւն հաստատելու

աշխուժ գործիչը:

Վահան Դաւթեան յաջողած է վերը յիշատակուած վիճակներն ու մտայնութիւնները ներկայացնող իր տիպարներէն իւրաքանչիւրը Համապատասխան միջոյրորի մը մէջ զնել եւ իրաւութեամբ օտեկ զանոնք: Երկար պիտի ըլլար մանրամանօրէն պատասխանել այս հարցումին: Պիտի ըսնէք միայն, որ անոնք՝ գրեթէ բոլորն ալ խոցելի են իրենց գործունէութեանց շարժառիթներով: Թրը դարուն ապրող այս մարդոց տեղ յաճախ քանակը զարու բանաստեղծը ինքն է, որ կը խօսի, կը խորհրդածէ, կը փիլիսոփայէ ու կուր կը սարքէ: Կը կործանէ վանքերը եւ Աստուծոյ պաշտօնանկներուն գոյութիւնը անիմաստ կը համարէ: Երկիրը՝ տաճար, ու քնութիւնը՝ ծէս: Կեանքը դրախտ, ու հանդերձեալ դրախտը՝ ցնորք: Մարդոց ի վերուստ տրուած եւ կամօքն Աստուծոյ բաշխուած հին դարերու բարիքները բռնութեան օրէնքներով կը բացատրէ եւ Թորդարու Արեանակալին տրուած ստորոգելիները վանական ու աւատապետական դասուն կողմէ ռամիկին աչքին նետուած փոշի ու քրտինջը շահարկելու միջոց կը համարէ ու կ'անցնի: Ամէն տեղ շահագործողները կը տեսնէ ու շահագործողները, զասակարգային տարբերութիւններ, տէրեր ու ճորտեր: Հաւասարութեան սկզբունքին զիտակից ըմբոստներ ու խուճապահար տիրողներ: Վահագն Դաւթեան իր հերոսներուն բերնին դրած է այն բոլոր տեսակէտները, որ Մարքսը բանաձեւեց, Լենինը տարածեց, Ստալինը պարտադրեց ու Խրուչչեւը կը ճզնի պահել:

Հին դարերէն վերցուած իր հերոսները այս նոր գաղափարախօսութեամբ շարժումի մղելով չի գոհանար Վահագն Դաւթեան, այլ կը զնէ զանոնք նոր գափարներով երգում ընող այսօրուան մարդոց ապրած միջավայրին մէջ: Ճիշդ է, որ բանաստեղծի մը անհատական փորձառութիւններն ու գաղափարները անհրաժեշտաբար պէտք է միջամտեն հին

նիւթ մը վերստեղծելու արարքին մէջ, բայց Դաւթեանի պարագային գրեթէ շրջուած արգիւնքի մը առջեւ կը գտնենք մենք զմեզ, Ընթերցողը ուրիշ դար մը փոխադրուած ըլլալու պատրանքը չ'ապրի, այլ յաճախ ինքզինքը կը զգայ նոր իրականութեան մը պատկերացումին գիմաց: Իր գործին մէջ այնքան շատ ներկայ է բանաստեղծը, այնքան թանձր են իր ապրած միջավայրին գոյները ու գործող անձերուն նկարագիրները, բարբերը, գործեակերպիւրը այնքան յստակ տրուած, որ իրենք իրենց նպատակի վերածուած են փոխանակ հին դարերը լուսաւորելու կողմնակի միջոցներ գտնալու: Կարեւս թէ բանաստեղծը հին դարերուն ետին ապաստանելով, հին մարդերու անուանական հանգամանքը եւ արտաքին հանդերձանքը պատրուակ ծառայեցնելով կը փորձէ իր ժամանակը տալ եւ իր շուրջը ապրող մարդերուն նկարագիրները եւ բարբերը բացայայտել: Եւ իրապէս տասնըմէկ դար առաջ ապրած մարդեր չեն Դաւթեանի հերոսները, այլ տանըմէկ տարի առաջ, երկու անգամ տասնըմէկ տարի առաջ ապրող թոնդրակեցիներ են անոնք, որոնք նոր աստուածներու խոստումներէն յուսահատ՝ վաճառքի հանուած իրենց Հայրենիքին համար պայքարի խլան նոր աւատապետներուն, ամիրաներուն, իշխաններուն եւ Գունձիկներուն դէմ ու նահատակուեցան:

Օրինակ, ի դէմս «ճարտար ու խարերայ» Գունձիկի, կարելի է յիշել մեր ժամանակին մէջ ապրած եւ իրենց արատաւոր յիշատակներով յայտնի ունէ չեկիտս:

«Եւ ի յայտ բերի դաւ մի դժնդակ» պոռացող «չարի շտեմարան» վանահայրը շատ կը յիշեցնէ իր շարաշահութեանց շրջանը աւարտած այսօրուան խուճապահար կոլխոզապետը:

Մեր գանձերը իր երկիրը փոխադրող եւ իր երկրէն մեզի դահիճներ միայն զրկող Արուսեայի ամիրայականտին տեղ կրնաք որեւէ Կիրպոտին կամ

ոեւէ արհւնարբու մտարերիլ :

Իր «Խիղճը ծախել ու ամբաստանել» չուզող եւ ասոր համար աղուխադրուածով խարանուած Միմալոն պատմիչը՝ առանց դժուարութեան կարելի է փոխարինել իրենց գաղափարական մեղքը Սիպերիոյ մէջ բաւող մեր զրոյներէն մէկուն անունով :


Ստիպման տակ իր սիրելի անձր որպէս Հերձուածող ամբաստանող «Ոստանէն» անունին տեղ կրնաք դնել՝ Չարենցի, Բակունցի եւ միւսներուն ոչմ ամբաստանութեան թուղթ ստորագրող բռնադատեալ զրոյի մը անունը :

Մտրատ Չարեհաւանցին շատ կը յիշեցնէ այդ օրերու Հայրենասիրական շարժումը դեկադարող ոեւէ նահատակ :

Իսկ արդարութիւն, ազատութիւն, իրաւունք պահանջող մարդերը հեթանոսական ու Հերձուածողական մեղքերով ամբաստանող վանական ուղղափառ դասուն փոխարէն, կարելի է յիշել իրենց հակառակորդները Տրոյկիստական-Ասանջեանական կամ իմբրիտալիստական մեղքերով մեղադրող մոլեռանդ մարքսիստները :

Կամայական զուգահեռներ չէ որ կը փորձենք գծել : Զարունակեճք եթէ կ'ուզէք, այլ բանսք գիրքը եւ կարդանք միասին :

Մի՞թէ չգիտես, մի՞թէ չես գգում, Որ մեզ համապազ հետևում, հսկում Ու լրստում եմ... Ինչու՞ միայն մեզ, Ունկնդիքներդ աշխարհն է լեցում. Բաւ է՝ քո սրտի վշտից գրուցես, Ուրեմն արդն հասկիր ես դու Զարեհաւանցուն : Բաւ է, որ գրես արեւի մասին՝ Հերձուածոջ ես դու, Սոխակի, վարդի, տերեւի մասին՝ Հերձուածոջ ես դու : Եւ քաւ է մէկը գծտուի քեզ հետ եւ գրախօսի, որ իսկոյն եւեթ Ազուլտադրոյմ դէմքիդ խարանեմ, Զյերդ կտրեմ, ուրկանց տանեմ...



Վ. Ա. ՎԱՆԱՆ ԳԱՌԹԵԱՆ

Օ, անգագոյն, չար ժամանակներ... Արդ չի վստահում ընկերմ ընկերոջ, Հայրը՝ զաւակից, ու այրն՝ իր կնոջ :

Մէջբերուած հատուածին մէջ նկարադրուած անվտանգութեան, լրեստութեան, դիւրին ամբաստանութիւններու եւ հալածանքի ու սարսափի սահմակցուցիչ այս մթնոլորտը Զորդ դարու հաստատանքին հետեւում ստեղծած մթնոլորտն էր, թէ քաններորդ դարու երեսնական թուականներէն յետոյ միայն մեր ժողովուրդի պատմութեան մէջ յիշուող մթնոլորտ մը : Հարցումը պատահական չի կարծուիր : Մնաց որ «Թոնդրակեցիներ» հաստատին բուն արժէքը կը գտնուի ուրիշ խարխիթի մը վրայ : Ըսել կ'ուզենք Վահագն Գալթեանի տնտեսական, քաղաքական, գաղափարական հարցադրութիւնները եւ անոնց տուած իր մեկնութիւնները աչքսան հետաքրքրական չեն ընթերցողին համար, որքան հետաքրքրական են քնարախաղին մէջ ստեղծած իր բանաստեղծական աւարտան, մասնակի էջերը, հատուածները, ստղե-

բը: Հող է որ կը յայտնուի բանաստեղծին ներքին անձը, ցեղային ժառանգութեան տարերբը իր հողիին մէջ կրող մարդը, որ կը մարմնացնէ մեր ժողովուրդը խորհրդանշող ամէնէն իրաւ սպորումները:

Մեռնել է՝ մեռնել, ասացի՝ արի երթամ ու մեռնեմ թոնդրակայ լանջին՝ Մեր պաղ ջրերի ծայնն իմ ակամջիին, Մեր ծաղկունքի մէջ, մեր սէզ ու ցօղի, Մէ՛կ էլ հոտն առնեմ մեր անուշ հոգիի. և մէկ էլ լսեմ՝ ինչպէս է շաշում թոնդրակայ սարի կրակը անշէջ, Մեռնեմ, ասացի, ազատութեան մէջ:

Հայրենիքին մէջ սպրեւու եւ ազատութեան մէջ մեռնելու այս երկու ըզգացումները մաս կը կազմեն մեր ժողովուրդին հոգեկան կառոյցին: Մարդերը հմայիչ ու շարժումները կենդանի դարձնող առանց այդ զօրութիւններուն՝ հայոց պատմութիւնը խենթանոցի պատմութիւն պիտի ըլլար, քիչ իմաստ պիտի գտնէինք մեր երգին մէջ ու խորիսխէ դուրի պիտի հռչակուէր հայ դրականութիւնը: Այդ զգացումները ուժ առած են մեզի ու թեւ, ու երբ մտանգում են անոնք, երբ բիրտ ուժը ճակատագրական կացութիւններու առջև դրած է մեզ, հաստարիմ մնացած ենք Հայկ Նահապետն սկսեալ մինչև վերջին հայդուկին սիրտը զօրացնող միեւնոյն կարգախօսին:

Թոնդրակցիցնե՛ր, կամ կեանք եւ կամ մահ...

Այսպէս սարեցաւ հայ ժողովուրդը, կենսքը փնտռեց ու երբ գլացուեցաւ աստիկա իրեն, նախնարեց մահը ազատութեան համար, պոռայով՝

Ես ազատութիւնն ինձն եմ մարմնացած, Ազատութիւնը՝ շղթայի գարկուած, Ազատութիւնը՝ որ մեռեալ է միշտ, Մեռնում եւ նորից յարութիւն առնում:

Ազատութեան պաշտամունք մը: Կաշկանդում մը: Յարութեան յոյս մը: Այո՛: Բայց ըսինք արդէն թէ ինչ ենթահող ունի հայոց պատմութիւնը:

Ուրիշ տեղ մը, բանաստեղծը կը թուէ աշխարհի շորս կողմերը եւ կը թելագրէ, որ երթանք.

Եւ ի լուր արար աշխարհին ասնձ, Որ հայի հոգին արծիւ է ազատ, Արծիւ է մի սէզ...

Ինչ որ արծուային է, այսինքն այն բոլոր մտածումները, սպորումները, մայրները, գոյները, սիրելու, անիծելու, բանադրելու կերպերը, որոնք ի հնուց անտի մաս կը կազմեն մեր ժողովուրդի ներքին աշխարհին, վահագն Դաւթեանի գրչին տակ հասած են կարելի գեղեցկութեան մը: Երբ հարազատ են տիպարները, երբ առանց ձգտումաւոր դադափարներու միջամտութեան կը պարպէ իր սիրտը՝ բառերը կը յորդին, պատկերները կը ճոխանան, կենսք կ'առնեն էջերը: Քթոնդրակցիցներուն տողերը երբ կը քայնեն յիշեալ խորքին վրայ՝ ուշագրաւ կը դառնան մանուսանդ իրենց տասացուածքի վայելչութեամբ, փոխաբերութիւններու առատութեամբ, լեզուի ճոխութեամբ: Հայաստանի բանաստեղծութեան մէջ, քիչ անգամ ընթերցողը բախտ կ'ունենայ հանդիպելու մեր լեզուական ժախոյթի համագուկեցիներուն գեղեցկութեան, որով Դաւթեան յազարացուցած է իր քնարախաղին մեծ տոկոսը: Դրաբարը, միջնադարեան հայերէնը, ժողովրդական բարբառը, արեւմտահայերէնը, արեւելահայերէնը, աստեղծ ամէնէն արտայայտիչ բառերն ու յատկանշական ստոյթները քով քովի եկած են ու կազմած Քթոնդրակցիներուն լեզուն, որուն առջև կարելի է խանդավառութիւ միայն: Բանաստեղծը նոյնպէս լաւ կը ճանչնայ մեր դրականութիւնը և չէ վարանած օգտաւործել կարգ մը դրողներուն ստեղծած աւանդութիւնները: Երբ Արեղայի մը հոգին աղջկան մը

պատկերով կը խոռվէ և վանքեր կը կործանէ՝ Շանթը կը յիշեցնէ մեզի, երբ ընկերային տարբերութիւններու առիթով գանգատի կ'ենլէ՝ Ծրիկին հետ կը դաշնակցի, նմանաձայն բառերու մէկտեղումով բանաստեղծութիւն կազմելու հնարանքը սպրած ատեն՝ Նարեկացիին ձեռք կ'երկարէ, իսկ բանադրելու ատեն երբ գրաբար ասոյթներուն կը դիմէ՝ Օչականին քնարախաղերը կը սողանցեն մեր մտածոժիւն առջեւէն: Կարելի է նոյնպէս ուրիշ բանաստեղծներու ըստուերներուն հանդիպել գիրքին այս կամ այն անկիւնը, բայց ասոնք ահաճութիւն մը չեն առաջացնիր ընթերցողին մէջ, չեն վիրուտեր բանաստեղծին ինքնութիւնը, չեն թանգարեք քնարախաղին ընթացքը: Մեր լեզուական մշակոյթին եւ գրականութեան բովանդակ դեղեցկութիւնները ներծծած, իր արիւնին ու ոսկորին խառնած եւ անոնց մէջ իր անհատականութիւնը կազմած բանաստեղծն է վահագն Դաւթեան, որ՝ «Անլուելի» գանգատատան քաղցրալուր գանգահարին եւ ուրիշ մէկ երկու անուններու կարգին՝ մեծ ակնկալութիւններ կը կապէ իր անունին:

«Թնդրակեցիներ», — գիրք մը որ կ'արժէ ունենալ:

Վահագն Դաւթեան — Բանաստեղծ մը, որուն կ'արժէ անանձին ուսումնասիրութիւն մը նուիրել:

Նմոյշ մը իր քնարախաղէն —

Գ. Ս.

ԲՈՆԳՐԱԿՍՏԻՆԵՐ
(հասուած)

ՎԱՆԱՀԱՅՐ

Խաղազուե՞մ... Իշխան, ինչպէ՞ս խաղազուեմ:

Երբ որ ուզում եմ հիմից խաբխիլ
Հաւատը մեր սուրբ ու հաստատալիմ:

ՔՈՒՆՁԻԿ

Երբ որ ուզում եմ մեր ձեռքից խիլ
Վատակը մ'ի սուրբ և արդարագաւ...

ՎԱՆԱՀԱՅՐ

Աւերակ անիլ վամբերը մեր վեհ,
Ինքնատոյգ խոհի տաճարներն հապարտ,
Մեր լուսալայտ զաները մարել,
Մեր խորաններից յաւեր սպառել
Աստուածապարգեք բայրերը խեղճ...

ԻՇԽԱՆ

Բայց ո՞վ է ուզում...

ՎԱՆԱՀԱՅՐ

Չարքաքոյն մի օձ,
Մի բարբարիանս, մի սաղակեցի,
Ոգի մի՛ վիժեալ դժոխից անեղ:
ԻՇԽԱՆ

Երանիլներ, արդէն յոգնեցի,
Պատմէ՛ք վերջապէս, ի՞նչ է պատահել...

ՎՌԱՄԵՆՊՈՒՀ

Մեր սուրբ հայրերը վրդովուած են
Խիստ

Եւ անկարող են բարբառել համգիտս,
Ուստի ինձ իշխան, բոյլ տուր բարբառել:

Վաղուց չէ, ինչ մենք լուրեր ենք առել,
Որ մեր կազմերում շրջում է մի սուրբ...

ՎԱՆԱՀԱՅՐ

Սեպուհ, ինչպէ՞ս է պտտում լեզուդ,
Այդ փարիսեցում, այդ շամբուշ վատիմ,
Այդ հեթանոսիմ ու անհաւատիմ
Դու սուրբ ես կոչում...

ՎՌԱՄԵՆՊՈՒՀ

Ո՛չ, ե՛ս չեմ կոչում,
Ոգը ժողովուրդն է այդպէս յարջորում:

ՎԱՆԱՀԱՅՐ

Սեպուհի՛կ, մեղք ես բառում դու հազուդ,

Ժողովուրդ չկայ, կայ գայլերի գումդ,
Կայ շների շարք, գողերի գումար
Ու դեւերի դաս: ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ



Նվաճարներ ԳԵՂԵՅԻԿ ՅԱՒԵԼՈՒՄ ՄԸ

«Անձի պաշտամունքին յաջորդող յարաբերական ազատութեան շրջանին, Հայաստանի բանաստեղծները ոչ միայն իբրև տուրք գրուած խոտանը դէն չլրտեցին իրենց հատորներէն, այլ եւ մեծ մարդասպանին օրով գրուած բազմաթիւ քերթուածներ րարեփոխութեան ենթարկեցին, երբեմն յաւելումներով, երբեմն յապաւումներով: Նմոյշներ.—

Շիրազի «Հատընտիր» մէջ (1954, էջ՝ 144) կարդացած էինք.

Նկարիչներին

Թէկուզ բնութեան գոյները բոլոր
Հրաշքով առնես քա ծով կտաւին,
Նորից չես հասնի բնութեանը խոր,
Քա ծով կտաւով փոքր ես տակաւին:

Բայց եթէ վրձնես այդ գոյների հետ
Եւ մարդու ոգու գոյները բոլոր,
Կ'ապրես քա մի բառ կտաւով յաւէտ,
Մարդու պէս վսեմ, բնութեան պէս խոր:

Չորս տարի ետք հրատարակուած «Քեար Հայաստանի» հատորին /էջ (էջ 238) այս քերթուածը սպուած է հետեւեալ յաւելուածով.—

Բայց թէ մի գոյն էլ անից թաքցնես,
Պատանգ կը դառնայ քա կտաւը քեզ,
Ազատութիւնը արուեստագէտին՝
Նման է զանգի փոքրիկ լեզուակին:

Բայց այդ փոքրիկն է մեծութիւն բերում, —
Թէ չէ՝ վրձնից պատանգդ է կարում...

Ի հարկէ, քերթուածը շատ աւելի կատարեալ պիտի ըլլար, եթէ բանաստեղծը վերապահութեան առաջացուցած վտանգին դէմ զգուշացնելէ ետք արուեստագէտները, յափազանցութիւններու հետեւող անպատեհութիւնները եւս յիշեցնէր անոնց: Եթէ ձմի գոյն էլ ահից թաքցնելու հետեւանքով բացուող պատանքին թով, յիշեցնէր նոյնպէս միւս պատանքը, որ կը բացուի այս անգամ մի գոյն աւելցնելու ժամանակ: Թաքցուածը (Ալլա—տութիւնը արուեստագէտին) անձնօթ չէր մեղի. աւելցուածը (դիմացէ «ուսաց սանգուիքը») շատ ծանօթ: Բարեբախտարար սկսած են մաքրագործումի աշխուժ աշխատանքի մը, ի վերջոյ անդրադառնալով, որ

Ազատութիւնը արուեստագէտին
Նման է զանգի փոքրիկ լեզուակին:

Այդ լեզուակը սկսած է բարձր հնչել ի մասնաւորի Շիրազի հոգիին մէջ. փասաը տուած է անկէ առաջ. դիմացի էջին վրայ առիթ կ'ուենեանք դարձեալ հաստատելու... «Ազատութիւնը արուեստագէտին»:

ԵՒ ԳԵՂԵՅԻԿ ՅԱՊԱԻՈՒՄ ՄԸ

Երբ չկար այդ «փոքրիկ»ը ի՞նչ փոքրիկ բաներ կ'ընէին Հայաստանի մեր բանաստեղծները և կը հասնէին ի՞նչ փոքրութիւններու: Բայց նախ կարգացէ՛ք «մեծութիւն»ը, դուր կ'արտադրենք դարձեալ «Քինար Հայաստանի» (1958 էջ՝ 160) մաքրագտուած հատորէն.

Աստղագէտ
Վիկտոր Համբարձումեանին

Ի՞նչ այդքան բոգբոջ, այդքան պատամնի՝
Ինչպէ՞ս հասկացար աստղերի լեզուն,
Որ խորհրդաւոր գիրքը երկնքի
Կարգում ես, որպէս քո հայոց լեզուն:
Ու միտք եմ անում որտե՞ղ հայ չկայ,
Թող երկնումն էլ մի հայ աստղ լինի, —
Որ աշխարհ քերի գազոմնիքը նրա,
Որ հայ անունն էլ աստղերին հասնի:

Բայց «Քինար Հայաստանի» հատորէն չորս տարի առաջ Հրատարակուած «Հատընտիր» ժողովածուին մէջ (1954, էջ 242) տարբեր բան մըն էր վերի երկու տուննոց քերթուածը: Տարբեր բան մըն էր ձօնը: Տգեղացած էր առաջինը, հանդալուր շէր երկրորդը: Այդպէս մտածած է բանաստեղծը, մենք ճիշդ կը գտնենք իր մտածածը, դուք կարդացէ՛ք մըկբարտուածը.—

Ակադեմիկոս աստղագէտ Վիկտոր Համբարձումեանին,
Ստալինեան մրցանակի կրկնակի լաուրատ դառնալու առթիւ:

.....
Կը հասնի, քանի
Նոր Հայաստանի
Սանդուխտը ռուսաց
Հողին է դրուած,
Բախտի սանդուխտը, որով արթնանում,
Բոլոր ազգերը վեր են բարձրանում...

Հարց կը ծայրի, թէ մկբարտուած այս մասը ինչո՞ւ դրուած էր երէկ եւ ինչո՞ւ չեղեալ կը համարուի այսօր: Պարզ է: Երէկ բանաստեղծը «մեծութիւն» բերող փոքրիկը չունէր, «չեզուակը» կը պակսէր իրեն, լեզուն կը փոքնէին եթէ գործածէր լեզուակը, իսկ այսօր գտնելով «ազատութիւնը արուեստագէտին», «ա՛խց» աւելցուցածը դուրս կը ձգէ, պահելով միայն հարգասը, էականը, իր էութեան մաս կազմող տարրը միայն: Այսպէս է կարգը: Տուրքը օր մը պիտի վճարէ իր տուրքը:

Ամէն պարագայի կը գտնուինք տարօրինակ երեւոյթի մը առջեւ: Ամէն ինչ ռուսաց վերադրելու, ամէն վեր բարձրացողի ոտքերուն տակ ռուսաց սանդուխտեանելու ստրկահաճ տրամադրութիւնը այն համեմատութեամբ, որ օրըստօրէ կ'աճի արտասահմանի կարգ մը զբողներու մօտ, այն համեմատութեան սկսած է նուազիւ Հայաստանի որոշ գրողներու մօտ:

Արուեստագէտներու հետ



Տ Ի Ր Ա Ն

Տիրան՝ Հոմանինն է ծաղրանկարչութեան, Լիբանանի մէջ: Եւ եթէ իր առաջին ցուցանանդէսով (Կալէոի Ապոստասպի մէջ, Հոկտեմբեր 27, 1961) շքուցարներից քառորդ դարէ ի վեր տեղույս հայ թէ օտար մամուլին մէջ վարական արուեստագէտի գիծերով ծաղկեցուցած իր ծիծաղին բոլոր երեսներն

ու ճոխութիւնը, այլ վկայեց անպարտաճան՝ միջազգային չափանիշէ հասած ինքնատիպ իր արուեստը: Վկայեց մասնաւոր կարեւորագոյնը ծաղրանկարչի մը համար, — ունէր ի՛ր գիծը:

Տիրանին գի՛ծը... Բիւրեղային ըլլալու չափ մաքուր ու պայծառ, ուրկէ քիչ անգին՝ ալ կրնայ փրթիլ թելը ու փշրիլ բիւրեղը: Չուսպ ու անսեփեւեփ ճառագայթ մը, որ համարձակօրէն թօթափած մանրամասնութիւնները, ըստ ուերեւրու խաղիբը՝ առանց տատամսումի, առանց խոտորումի կը ձգտի ուղիղ իր նպատակին:

Ու այդ գիծը կը մեկնի, գրեթէ միշտ, անյիշաչար սրտէ մը, որ Տիրանինն է: Արուեստագէտին սուր աչքը կը տեսնէ մարդկային կենցաղի դարտուղութիւններն ու ներաշխարհի տիեզերութիւնները, բայց ծաղրի նշանակ չի դարձըներ զանոնք ու չի տախտապարեր ու լախտահարեր անծը: Այլ իմաստուն ժըպիտով մը կը մատնանշէ նկարագրի, հոգիի ու մտքի ծուռ գիծը, կամ՝ մուրթները, Ֆիզիքականը գործածելով միայն որպէս կառ ու ատաղձ: Ձի սրիբր հեզնել մարդկային տկարութիւններն ու թերութիւնները, կը նախընտրէ սրբազրել մտերմական ծիծաղով: Ի՛նչ հարկ խայթելու եւ զալարելու, երբ անկատար է մարդարարածը եւ զկաթին հետ մը տածը հողու հետ դուրս կ'ելլէ՞ միայն: Հակադրարար խոժոռաղէժ ու խոտապահանջ ուսուցիչին որ վախի ու դողի մթնոլորտի մը մէջ կ'արձանացնէ դասարանը՝ Տիրան, քաղցրաժպիտ դաստիարակի մը հմայքով կը կենդանացնէ իր աշակերտները: Արդէն յայտնի դէժմբեր, հասուն մարդիկ են իր հերոսները, որոշ մակարդակէ մը վեր, որոնց կը քաւէ շեշտ նայուածքը, մատի շարժումը: Բայց երբ հարկը պահանջէ ըլլալ անողորմ՝ Տիրան չի վարանի ի կ'իեղեցնէ շոտալուն ապտակը՝ միայն այդ լիզուէն հասկըցողի դէժմբին:

Այս է գաղտնիքը ազնուական և ազնուացնող իր արուեստին: Ասոր համար

է, որ իր զոհերը ընդհանրապէս քէն չեն պահեր իրեն դէմ:

Ի վերջոյ ծաղրանկարը, իր քանդիչ էութեան հակառակ՝ շինիչ գեր մը ունի կեանքին մէջ: Նահատակել մէկը վասն շար հաճոյքի մը՝ ոչ մէկ արժէք ունի ընկերային ու բարոյական, եթէ նոյնիսկ իրագործուած ըլլայ արուեստով: Տիրանին պիտի բարութեան ճաճանչ մըն է, որ փոխանակ քանդելու՝ կը լուսաւորէ սրբուհիներն ու դէմքերը: Արծաթ մկրատով մը կը յօտէ զօս տերեւները, շէղերը՝ թարմերը ցուցահանելու, զեղեցկութիւնը փրկելու համար: Այս ճամբով է որ յաղթականօրէն դուրս կու գայ ծաղրանկարչութեան երկուսութեանէն, տիպիկ մէն՝ առանց քարատոսի մը յանգելու:

Բարձրաձայն խնդուքներ կորզելու ի խնդիր չի զոհականար երբեք: Չի դիմանիր մասնաւոր հասարակ տեղիքներու շահագործումին: Կ'որոնէ միշտ, ու կը պտէ յաճախ ի՛ր ուզածը: Գիչ բացառութեամբ՝ ծաղրանկարներուն միացած իր légende-ները կը դառնան գմբէթ, դիւտարար զարգարանք՝ ծաղրանկարներու դիւիսին: Գիծն ու բառը բարեբախտ զուգակցութեամբ մը կը վերածուին նոր ու ամբողջական ուժականութեան:

Տիրան կը զձէ քառորդ դարէ ի վեր,



ՎԱՀԷ ՍԵԹԵԱՆ

ու կը մնայ հաւատարիմ արուեստագէտի, ծաղրանկարիչի իր կոչումին: Չի դառնար կողմ: Կը դիտէ չորս դին հաւասար աչքով, կը գործածէ մէկ շափ, մէկ կշիռ: Այս է պատճառը որ որքան ալ ծաղրանկարէ՝ չի կորսնցնիր իր դիմքը, այլ ընդհակառակն՝ հետզհետէ կուտայ անոր նոր թափ, նոր աւել:

Մէկ ձեռքի մատները շա՛տ են համրելու համար միջազգային շափանիչի հասած մեր ծաղրանկարիչները: Տիրան մէկն է այդ քիչերէն: Կուտ ու մտքոր իր արուեստը կը բարձրացնէ զինք սովորական մակարդակէն վեր, իւրայատուկ տեղ մը ապահովելով իրեն: Տիրան բանասեղծն է մեր ծաղրանկարչութեան:

Առիթ մը եղաւ առաջին ցուցահանդէսը որ հայ, բայց մասնաւոր օտար բոլոր թերթերը խանդավառութեամբ դընահատին իր գործը: Կը յուսանք որ երկար տարիներէ ի վեր սպասուած այս ցուցահանդէսը պիտի չըլլայ վերջինը: Պիտի հետեւին ուրիշներ ու տակաւ պարպեն իր կապարճը: Եկած է տարիքը որ Տիրան տայ իր կեանքին բերքը:



Խ. ԵՐԱՄԵԱՆ

ՄԱՆՈՒԿ

Բնութեան մշտանորոգ այլ յայտնական գեղեցկութիւնները դարպասող արուեստագէտ ու բանաստեղծ հագիւնք կը գտնուին անէն ժամանակներու մէջ: Բայց քիչեր անուցմէ ի վերուստ շնորհուած կ'ունենան ստեղծագործող այն տաղանդը, որով կարենան «բռնել» գեղեցկութեան մասնիկը կեանքի խորհուրդէն՝ արուեստի անեղծանելի պարունակով փոխադրելու համար գալիքին: Այդ սակաւ ընտրեալներէն է ՄԱՆՈՒԿ:


Կեանքի վրայ բացուած զմայլահար աչք մըն է, գուրաք յոյսերու եւ տրուտում ստուերներու կայտարգանքին սիրահար բացառիկ զգայարան մը: Կը բաւէ որ երկմէի կայտոյտ փնտնետում մը մեծնայ անձրեւաքոր ամպերու թխսութեան մէջ. թալար ճիւղ մը փթիթներ կապէ սարսուռն, հովի թեւերուն տակ վայրենակոծ համաճարի, գունափորքամ երանգապնակի վերածուի ծովը. ու ալ Մանուկը չես գտներ իր աշխատանքին մէջ: Կը մոռնայ առօրեայ կարիք, կեանքի հաշիւ: Ինք ու նկարահան մեքենան լերան մը կողին են արդէն, ամառի գաշտի մը արահետին վրայ. ծառի մը ստուերին տակ: Քաջ որսորդի մը պէս, որ ամենայն զգուշարարութեամբ ու վարպետութեամբ կը հետապնդէ իր երէն՝ Մանուկ լուռ ու անթարք կը հետեւի յոյսերէ բռնկած թափառական ամպերուն, կամ կ'որոնէ գարունը ամբողջութեամբ յատկանշող ճաղկափթիթ սասը: Կրնայ ժամերով մտալ սեպ ժայռի մը գլխին, հորիզոնին դէմ, սպասելով բարեբաստիկ այն վայրկեանին, երբ յոյսն ու ստուերը մերգաշնակելով իրենց խաղը, վաղանցիկ բապէի մը համար, պիտի գծեն հորիզոնի պաստառին վրայ բնութեան հմայիչ խորհուրդներէն մին: Մանուկ սեղմած է արդէն նկարահան

մեքենային կոնակը եւ կորած, ձգած է յարտեմական գեղեցկութենէն մասնիկ մը՝ թակարդը:

Այսպէս է որ ծառերու կամայ ըստուերներէն հոսող գետակի մը ջուրերը բիրեղեայ խորհուրդի մը մէջ կը շագփայլին, մայրիկնու ճիւղերուն հանգչող ճիւղեր չնաշխարհիկ աղանձներու երամներ կը կազմէ, աշնան մոխրագոյն երկրմէ մը վար սարդոտ ճառագայթներու խորձ մը ոսկեշող սփռներ կը ցանէ ծովու մակերեսին: Մաքրատեղ, պայծառացալ սիրտ մը կը տրոփէ աննց մերգաշնակութեան մէջ: Ու անա այսպէս է որ Բնութիւնը երկրորդ անգամ կը գեղեցկանայ եւ նոր յարեծութեան մը մէջ կը մտնէ Մանուկի լուսանկարներով:

Մանուկ լուսանկարած է ցարդ յոյսի ու գիծի հեքիաբային երկիրը՝ Լիբանանը: Փիւնիկեան այս դարասար ծովափին մէջ պատմական անկիւնը ոսկեգօծող վերջալոյսի շողերուն տակ թողլքէնուած հեամենի պարիսպի մը եւ ճաւակներու առթած տրտմանոյ ու խորունկ պահել յանրժացնող շքեղ լուսանկարով մըն է որ Մանուկ, Միւնիխի Միջազգային վերջին ցուցահանդէսին, շահեցաւ առաջին մրցանակը, 77 ազգերու վրայ աչք մեծ պատիւին արժանացնելով իր սիրելի երկիրը: Ինչ որ առած էր Լիբանանէն՝ վերադարձուցած էր անոր ամենաարձր տակասով: Այս անգամ՝ նուիրագործեց արդէն իր երախտագիտութիւնը: Եւ վստահ ենք որ կը շարունակէ ապրիլ ու ապրեցնել իր սէրը:

Բայց կը մաղթենք որ դուրս գայ մերթ ընդ մերթ այս սահմաններէն: Աշխարհի վրայ կամ ուրիշ գեղեցիկ վայրեր ալ, որոնք կը սպասեն արուեստագէտի շունչին, վերապրելու համար ուրիշ կեանք մը: Մանուկի լինելութեան հասած ու նոր կարելիութիւններու խոստումով բեռնամար արուեստը կրնայ նուաճել նոր գեղեցկութիւններ: Ձեռքի մագակամ մեքենան այն հզոր գեղմէն է որ զինք կրնայ դարձնել աշխարհակալ:



Այս լուսանկարով Մանուկ շահեցաւ
Միւնիխի Միջազգային Ցուցահանդէսի Ա. մրցանակը

ՅԱԶՈՐԳԻ ԹԻՒՌՎ

- ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ
- Ն. ՍԱՐԱՅՅԵԱՆ
- Բ. ԹԱՇԵԱՆ
- Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ — Ա. Երկաթ
- ԶՐՈՅՑՆԵՐ — Կ. Փօլառեան
- ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐՈՒԹԵԱՆ — Բ. Թաշեան
- ԱՆԹԵՂՈՒԱԾ ԿՐԱԿՆԵՐ — Արա Զազեան
- ԲԱՂԵՇԻ ՆԱՀԱՆԳԻ ԽՈՒԼԹԻԿ ԳԻՒՂԻ ԲԱՐԲԱՌԸ — Եդ. Տարսեան

«ԲԱԳԻՆ»Ի ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

ՍՓԻՒՌԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Ն Ա Ռ Ա Գ Ա Ն

Ն. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

Դ Ա Ս Ա Ռ Օ Ս

Ե Դ. Պ Օ Յ Ա Ճ Ե Ա Ն

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի 18 Յունուար 1962-ին, երեկոյան ժամը 8-ին
Համազգայինի վասպուրական սրահին մէջ



8005005 8005005000000

1900000 20 1. 0000

0000000000 7 80000

200000000 2 1. 0000



Imprimerie de l'Etat —

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth — Liban